

Ա Ի Ե Տ Ի Ք

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՍ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ս. ԿՈՒՄԻՆ ԱԲԵՏՄԱՆ ԵԿԵՂԵՑԻ 23 ՄԱՐՏ 2008

«Ինչո՞ւ մեռելներու մէջ կը փնտռէք ողջը.
հոս չէ՛, յարութիւն առաւ»

(Ղկ. 24, 5-6)

Քրիստոս Յարեալ ի մեռելոց:

Այսօր տարուան ամենամեծ տօնը կը կատարենք: Յարութեան տօնը մեր հաւատքին եւ յոյսին հիմնական խորհուրդն է: Յիսուս Քրիստոս՝ Խաչեցեալը, մահուան երրորդ օրը յարութիւն առաւ: Հրեշտակներու աւետիսը Մարիամ Մագդաղենացիին եւ միւս բարեպաշտ կիներուն, որոնք գերեզման փութացած էին, այսօր նոյնը կը հնչէ մեր սրտերուն մէջ վերանորոգուած յուզումով, երբ կը յիշենք հետեւեալ բառերը:

Կրնանք երեւակայել կիներուն վրդովումը սոյն պահուն: Մէկ կողմէ՝ տխրութիւն եւ սարսափ Տիրոջ դատապարտութեան եւ մահուան պատճառով, միւս կողմէ՝ թերահաւատութիւն եւ զարմանք յարութեան մասին: Մինչ այդ, գերեզմանը բաց էր եւ դատարկ. Յիսուսի մարմինը հոն չէր: Պետրոս եւ Յովհաննէս առաքեալները, հազիւ կիներէն լուրը կ'առնեն, գերեզման կը վազեն եւ կը ստուգեն թէ կիներուն ըսածները ճիշդ են (տես

Յովհ. 20, 3-8): Ոչ միայն, այլ Յիսուս անձամբ «եկաւ կանգնեցաւ անոնց մէջտեղ եւ ըսաւ “Խաղաղութիւն ձեզի” եւ անոնց ցոյց փռաւ իր ձեռքերը եւ կողը» (Յովհ. 20,19): Այս խօսքերուն վրայ, առաքեալներուն հաւատքը, որ պահ մը տկարացած էր, վերաշխուժացաւ եւ լուրը հաղորդեցին Թովմասին որ բացակայ էր: Բայց Թովմաս չուզեց հաւատալ: Ուր օր վերջ, Յիսուս երկրորդ անգամ երեցաւ անոնց եւ Թովմասին ըսաւ. «Բէ՛ր մաքո՞ղ հոս, ահա ձեռքերս. մօտեցո՛ւ՛ր ձեռքդ եւ միւէ՛ զայն կողիս մէջ եւ մի՛ ըլլար թերահաւատ, այլ՝ հաւատարացեալ» (Յովհ. 20,27): Թովմասի բերնէն ցնցիչ հաւատքի ճիչ մը ելաւ. «Տէ՛ր իմ եւ Աստուած իմ» (Յովհ. 20-28):

Մենք ալ, Թովմասի հետ, վերանորոգենք մեր հաւատքի դաւանանքը Յարուցեալ Յիսուսին: Մանաւանդ որ այսօրուայ մարդկութիւնը քրիստոնեաներէն կը սպասէ նոր վկայութեան մը Քրիստոսի Յարութեան մասին: Մարդիկ կարիք ունին ճանչնալու Յիսուս որպէս ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ Մարդ: Մեր ժամանակակիցներէն շատեր ունին Թովմաս առաքեալին տարակոյսները: Անոնց կրնանք մեր ապրելակերպով ցոյց տալ մեր հաւատքը՝ որ Քրիստոս իսկապէս Յարութիւն առաւ: Յարութիւն առաւ մեր կեանքին մէջ, մեր ապրելակերպին մէջ: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն ի վեր, այս հաւատքը կը փոխանցուի սերունդէ սերունդ ահա տասներօթը դար: Հայ Եկեղեցին ժամանակներու ընթացքին նոյն հաւատքը հաստատ պահեց հակառակ բոլոր դժուարութիւններու եւ հալածանքներու: Յարուցեալ Քրիստոսն է որ կը պահպանէ մեր ժողովուրդը եւ զայն կ'առաջնորդէ անսայթաք ուղիէն դէպի յաիտենական փրկութիւն:

Մեզմէ ամէն մէկը կրնայ օր մը Թովմասի նման փորձուիլ իր հաւատքին մէջ: Պատճառները շատ են՝ տարածուած ցաւը, չարիքը, անարդարութիւնը եւ մահը՝ մանաւանդ երբ անոնց զոհ կ'երթան անմեղներ եւ մանուկներ, մեր հաւատքը կը ցնցեն: Դիշո՞ այս պարագաներուն է որ Թովմասի թերահաւատութիւնը մեզի օգնութեան կը հասնի, որովհետեւ մեզ կը ձերբազատէ ամէն տեսակ սխալ զաղափարներէն Աստուծոյ մասին, վերագտնելու համար մեր ըմբռնումին մէջ Քրիստոսին իսկական դէմքը, Ան որ մեր վերքերը եւ մեր մեղքերը իր վրան առաւ եւ կեանքը զոհեց մեզի համար: Թովմասի սայթաքած հաւատքը վերանորոգուեցաւ շնորհիւ Յիսուսի վերքերու շօշափումին: Յարուցեալ Քրիստոս կը շարունակէ ցոյց տալ մեզի այդ վերքերը այսօրուայ մարդոց ցաւին եւ տառապանքին ընդմէջէն՝ մեր հաւատքը հաստատ հիմի վրայ պահելու համար, պայմանաւ որ Յիսուսի շփման մէջ ըլլանք Թովմասին պէս:

Սուրբ Պետրոս ուղղեց փրկութեան աւետիսը առաջին նորադարձ քրիստոնեաներուն սա խօսքերով. «Դուք բուժուեցաք անոր վերքերով» (Ա. Պետր. 2,24): Յիսուսի վերքերը, որ Թովմասին հաւատքը ատեն մը խախտեցին, որովհետեւ ձախողանքի նշաններ էին, այս նոյն վերքերը դարձան թերահաւատ առաքեալին համար՝ Քրիստոսի հանդիպումին

շնորհիւ, անժխտելի սիրոյ փաստը: Այն վերքերը, որ Քրիստոս կրեց մեզ սիրելուն պատճառաւ, այսօր մեզի կ'օգնեն համոզուելու թէ Աստուած անհունօրէն եւ առանց պայմանի մեզ կը գուրգուրայ: Մեր ցաւերուն եւ նեղութիւններուն մէջ, Յիսուսին վերքերը մեզի ոյժ պիտի տան աղաղակելու՝ *«Տէ՛ր իմ եւ Աստուած իմ»*: Յիրաւի, միմիայն այսպիսի Աստուած մը, որ մեզ այսչափ կը սիրէ եւ մեր վերքերը մեր տեղը կը կրէ, արժանի է մեր հաւատքին եւ մեր սիրոյն:

Աշխարհի վրայ որքա՛ն անարդարութիւններ եւ նեղութիւններ կան: Անպակաս են նաեւ բնական աղէտները եւ մարդկային ողբերգութիւնները, որոնք անհամար զոհեր կը խլեն եւ մեծ վնասներ կը հասցնեն: Յիշենք նաեւ Միջին Արեւելքի ամէնօրեայ արիւնալի դէպքերը, առանց մոռնալու Հայաստանի մէջ տեղի ունեցած փոստալի ընդհարումները: Այս ցաւալի վիճակէն դուրս գալու միակ ելքն է՝ աղօթքը եւ յանձնառու աշխատանքը ի նպաստ ընդհանուր բարիքին: Ամէն տեղ կարիք կայ փոխադարձ հաշտութեան: Ամէն տեղ կարիք կայ խաղաղութեան վերահաստատումին: Յարուցեալ Քրիստոսի հաւատաւորները կրնան անոնց նպաստել եւ զանոնք յաջողցնել:

Սիրելիներ, Քրիստոսի վերքերու միջոցաւ կրնանք դիտել հաւատքի աչքերով, առանց գայթակղելու կամ սայթաքելու, այն բոլոր չարիքները որ այսօր մարդկութիւնը կը տառապեցնեն՝ անօթի մանուկներ եւ ծերեր, պատերազմներու վիրաւորեալներ, տեսակ տեսակ անարդարութիւններ, ամէն տեսակի ճնշումներ: Յիսուս՝ Յարութիւն առնելով, աշխարհէն ցաւը եւ չարիքը չվերցուց ինչպէս որ ոմանք կը սպասէին, այլ անոնց յաղթեց Իր Յարութեամբ եւ Սիրով: Բռնութեան դէմ Յիսուս չհակադարձեց բռնութեամբ, այլ՝ իր անսահման Սիրով մեզի պատուիրեց սիրել նոյնիսկ մեր թշնամիները, անկեղծ սիրով, որ մահուրնէն աւելի զօրաւոր է: Այս է ապահով ուղին դէպի խաղաղութիւն եւ երջանկութիւն: Չմատնուած, Յիսուս առաքեալներուն յանձնարարեց, ըսելով. *«Նոր պայտուիրան մը կու տամ ձեզի. զիրար սիրեցէ՛ք: Ինչպէս եւ ձեզ սիրեցի, այնպէս ալ դուք զիրար սիրեցէ՛ք»* (Յովհ. 13,34): Արդ, Յիսուս մեզ սիրեց իր կեանքը տալով յալիտենական դժբախտութենէն մեզ ազատելու համար: Նոյն ձեւով պարտինք մենք ալ իրար զիրար սիրել:

Յոյժ սիրելի եղբայրներ եւ քոյրեր, Յարուցեալ Քրիստոս կենդանի է, մեր մէջն է: Այս հաւատքի խօսքը կը կրկնենք սուրբ Պատարագին ընթացքին, երբ կ'երգենք. *«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»*: Ան է մեր միակ յոյսը աւելի խաղաղ ապագայի մը համար, ուրիշ տեղ պետք չէ փնտռել: Մինչ Թովմաս առաքեալին հետ կը գոչենք՝ *«Տէ՛ր իմ եւ Աստուած իմ»*, կը հնչէ մեր սրտին մէջ Յիսուսին սա միւս խօսքը. *«Եթէ մէկը ուզէ ինձի ծառայել՝ իմ եղեւէս թող գայ, եւ ուր որ եւ եւ՝ իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ: Եթէ մէկը ինձի ծառայէ՝ Հայրս պիտի պայտուէ զայն»* (Յովհ. 12,26): Պատրաստ ըլլանք ուրեմն, սիրելիներ, Յիսուսին հետեւելու մեր կեանքը ծառայութեան մէջ դնելու մեր եղբայրներուն համար

(տես Ա. Յովհ. 3,16), որպեսզի դառնանք առաքելներ խաղաղութան, բանբերներ ուրախութան, որոնք ցանքերուն դիմաց չեն վարանիր, որպեսզի դառնանք պատգամաբերներ յոյսի, որ հիմնուած է Քրիստոսի Յարութեան ստոյգ յաղթանակին վրայ:

Թո՛ղ Սուրբ Կոյս Մարիամ, Յարուցեալ Քրիստոսին Մայրը եւ մեր երկնատր մայրը, մեզի պարգեւէ այս վսեմ շնորհքը, եւ խաղաղութիւն շնորհէ տառապեալ բոլոր մարդոց, յատկապէս Հայաստանի, Լիբանանի, Իրաքի եւ Սուրբ Երկրի ժողովուրդներուն, ինչպէս նաեւ մեր ընտանիքներուն, մեր ծերերուն, մեր հիւանդներուն, մեր երիտասարդներուն եւ ամէն բանէ առաջ՝ մեր սրտերուն. Ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց - Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

**✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պապրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց**

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՍ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԱՌԻԹՈՎ

Ա. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ 16 ՄԱՐՏ 2008

Յոյժ սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Այսօր՝ Ծաղկազարդի օրը, կը սկսինք Աւագ Շաբթուայ շրջանը, որ կը պսակուի Սուրբ Յարութեան արարողութեամբ:

Հասկնալու համար ինչ որ պատահեցաւ Ծաղկազարդի օրը Երուսաղէմ, լաւ է անդրադառնալ այն օրուայ պատմական դէպքերուն, որ լոյս կը սփռեն բոլոր ժամանակներուն վրայ:

Յիսուս կը մտնէ Սուրբ Զաղաքը հեծած իշու ասանակի վրայ: Յիսուս չի մտներ Երուսաղէմ թագաւորական կառքով աշխարհի մեծամեծերունման, այլ կը մտնէ իշու վրայ՝ պարզ գիւղացիներու գրաստով: Սուրբ Յովհաննէս ատետարանիչը կ'ըսէ թէ աշակերտները չհասկցան Յիսուսին ըրածները, բայց Յարութենէն ետք յիշեցին թէ Յիսուս կը կատարէր մարգարէութիւնները, որ իր մասին ըսուած էին: Յիշեցին Չաքարիա մարգարէին խօսքը, որ կ'ըսէ. *«Յնծութեամբ աղաղակէ՛, ո՛վ Երուսաղէմի աղջիկ. ահա քու թագաւորդ քեզի կու գայ... հեզ է եւ իշու վրայ հեծած»* (Չաք. 9,9): Այս մարգարէութիւնը լաւ հասկնալու համար, եւ թէ ինչ՞ո՞ւ համար Յիսուս այսքան խոնարհ ձեւով Երուսաղէմ մտաւ, հարկ է կարդալ Չաքարիային լման մէջբերումը, որ կ'ըսէ. *«Եփրեմէն կառքը եւ Երուսաղէմէն չին պիտի ջնջեն: Պարերագմի աղեղը պիտի կոտորի: Անիկա ազգերուն խաղաղութիւն պիտի քարոզէ, անոր իշխանութիւնը՝ ծովէ ծով, գետէն մինչեւ երկրի ծայրերը պիտի ըլլայ»* (Չաք. 9,10): Այս խօսքերով, Չաքարիա մարգարէն երեք կարեւոր կէտեր կը մատնանշէ գալիք թագաւորին՝ Յիսուսի մասին:

Նախ՝ ան պիտի ըլլայ աղքատներու թագաւորը: Աղքատ բառը հոս կը բնորոշէ այն հաւատաւոր եւ խոնարհ անձերը, որոնց մասին կ'անդրադառնայ Յիսուս լերան քարոզին մէջ, երբ կ'ըսէ. *«Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկնքի Արքայութիւնը»* (Մտթ. 5,3): Բայց զգոյշ պէտք է ըլլանք: Անձ մը կրնայ նիւթապէս աղքատ ըլլալ, բայց անոր սիրտը լեցուն՝ հարստութեան փափաքով եւ այդ հարստութենէն սերած տիրապետութեան ոգիով: Այդ անձը կ'ըլլայ սովորաբար նա-

խանճոտ եւ դրամասեր եւ չի պատկանիր Աւետարանի աղքատներուն, այլ՝ իր սրտին մէջ կը պատկանի հարուստներու դասին: Այդ անձը կը փափաքի փոխել ինչքերու բաժանումը, որպէսզի ինք հարուստ դառնայ եւ ազդեցիկ մարդ: Յիսուսի հասկցումած աղքատութիւնը բոլորովին տարբեր է: Ատիկա կը նախատեսէ սրտի մաքրութիւնը եւ անջատումը դրամի տիրանալու տենչանքէն եւ իշխելու փափաքէն: Ուստի, հարցը պարզ ինչքերու բաժանում չէ, որ զուտ նիւթական է եւ որ սրտերը աւելի կարծր կը դարձնէ: Հոս՝ Յիսուս կը խօսի մաքուր սիրտի մասին, որով անձը կը նկատէ իր ունեցածը՝ պատասխանատուութիւն եւ պարտաւորութիւն ուրիշներուն հանդէպ, անձը որ իր աչքերը Աստուծմէ չի հեռացներ եւ որ կ'առաջնորդուի Քրիստոսի օրինակէն, որ հարուստ ըլլալով հանդերձ մեզի համար աղքատացաւ, որպէսզի մենք հարստանանք անոր աղքատութեամբ (տես Բ. Կորն.8,9), ինչպէս կը բացատրէ Սուրբ Պօղոս Առաքեալը նորադարձ Կորնթացիներուն: Մաքուր սիրտը նախապայման է յաղթելու փտութեան եւ ազահութեան, որ դժբախտաբար աշխարհի վրայ տիրապետած են: Կրնանք ունենալ սրտի այս տեսակ մաքրութիւնը միմիայն եթէ նկատենք որ մեր իսկական հարստութիւնը Աստուած է: Յիսուսէն խնդրէ՛նք ուրեմն, սիրելիներ, որ մեզ առաջնորդէ այս շահեկան ուղիին վրայ, ինչպէս որ խոնարհութեան օրինակը մեզի տուաւ Ծաղկազարդին օրը:

Երկրորդ հերթին, Չաքարիա մարգարէ մեզի կը նկարագրէ զայիք թագաւորը՝ որպէս խաղաղութեան թագաւոր: Ան պիտի ջնջէ պատերազմի կառքերը եւ ձիերը եւ պիտի աւետէ խաղաղութիւնը: Յիսուսի գալուստով, այս ամէնը իրագործուեցաւ Խաչին միջոցաւ: Նոր զէնքը, որ Յիսուս կը գործածէ եւ մեզի կը պատուիրէ՝ Խաչն է, որ է հաշտութեան ապահով միջոց եւ սիրոյ անժխտելի նշան, որ մահուրէն իսկ աւելի զօրաւոր է: Ամէն անգամ որ մենք զմեզ կը խաչակնքենք, պարտինք յիշել թէ անարդարութեան դէմ պիտի չհակադրենք անարդարութեամբ եւ բռնութեան դէմ՝ բռնութեամբ: Պարտինք յիշել նաեւ որ միայն բարիքով կրնանք յաղթել չարին: Սուրբ Պօղոս յստակ կերպով կ'անդրադառնայ այս հարցին շուրջ, երբ կը քարոզէ առաջին քրիստոնէաներուն, ըսելով. *«Եթէ թշնամիդ անօթի է, կերցու՛ր անոր, եթէ ծարաւի է, խնցու՛ր անոր: Մի՛ յաղթահարուիր չարէն, այլ՝ բարիով յաղթէ չարին»* (Հռ. 12, 20-21): Իսկական քրիստոնէան ան է որ կը ջանայ ի գործ դնել այս աստուածային պատուէրը:

Երրորդ կարգին, Չաքարիա մարգարէ կը ծանուցանէ նոր թագաւորին իշխանութեան ընդհանրականութիւնը, որ պիտի տարածուի *«ծովէ ծով, գետէն մինչեւ երկրի ծայրերը»*: Անոր թագաւորութիւնը պիտի պարփակէ ամբողջ աշխարհը, միութիւն հաստատելով ժողովուրդներու միջեւ եւ հիմնելով խաղաղութեան թագաւորութիւնը: Քրիստոս ամենուրեք է՝ աղքատիկ տուններուն ինչպէս հարուստ պալատներուն մէջ: Անոր հետեւորդները, ուր որ ալ ըլլան, իրեն հետ միացած ըլլալով, միացած են

ինքնաքերաքար իրարու հետ, մէկ մարմին կազմելով՝ Քրիստոսի մարմինը: Ինչ՞պէս Քրիստոս մեզ կը միացնէ: Մեզ կը միացնէ դառնալով մեր հացը Սուրբ Հաղորդութեան մէջ, եւ մեր վրայ կը տիրապետէ ինքզինքնուիրելով մեզի համար: Այս ձեւով է որ Քրիստոս կը տարածէ խաղաղութեան թագաւորութիւնը :

Այս երեք յատկանիշները՝ աղքատութիւն, խաղաղութիւն եւ ընդհանրականութիւն համառօտուած են Խաչի նշանին մէջ: Ասոր համար, իրաւամբ Խաչը Երիտասարդներու Միջազգային Օրուան կեդրոնն է: Գիտէք որ քսան տարի առաջ, Աստուծոյ Ծառան՝ Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Քահանայապետը Ծաղկազարդի Կիրակին որպէս յատուկ Երիտասարդութեան Օր Նշանակած է: Այդ օրը, որ այսօր է, համայն աշխարհի երիտասարդները կ'ընդառաջեն Քրիստոսի հրաւերին, իրեն ընկերանալու իրենց քաղաքներուն եւ երկիրներուն մէջ, որպէսզի Քրիստոս սփռէ խաղաղութիւնը աշխարհի վրայ: Եթէ մենք ալ կը փափաքինք ընթանալ Յիսուսի հետ, իր գծած ճանապարհէն, պարտինք իրեն հարցնել՝ Յիսուս ո՞ր ճամբէն կ'ուզես մեզ առաջնորդել. ինչ՞ կը սպասես մեզմէ:

Ատենօք կար եւ տակաւին այսօր կը հանդիպինք քրիստոնէայ կրօնքին մերժումին՝ Խաչին պատճառով: Որովհետեւ Խաչը կը նշանակէ զոհողութիւն. ոմանք կ'ըսեն թէ ան կեանքին դէմ է: Անոնք, երբեմն մենք ալ, կը փափաքինք կեանք մը ունենալ առանց զոհողութեան եւ առանց սահմանափակումի՝ ոչ օրէնքի եւ ոչ ալ արգիլումի: Կը փափաքինք ապրիլ ապրելու համար միայն, կ'ուզենք հարստութիւն եւ պատիւ ունենալ: Ժամանակին, այս բաները կ'ըսուէին, այսօր ոմանք նոյն սկզբունքներուն կը հետեւին, նոյնիսկ եթէ զանոնք բարձրաձայն չեն արտայայտեր: Վերոյիշեալ գաղափարները հրապուրիչ են: Կը յիշեցնեն մեզի օձին խաբէութիւնը մեր նախահայրերուն՝ Մի՛ վախճաք, կեղեք ազատօրէն պարտզի բոլոր ծառերէն, պիտի չմեռնիք (տես Ծննդ. 3, 4-5): Մինչ Ծաղկազարդը մեզի հակառակը կ'ըսէ՝ Խաչը իսկական կեանքի ծառն է: Բայց կեանքը չենք կրնար ունենալ, զայն միայն մեզի համար պահելով, այլ՝ զայն նուիրելով: Սիրել ըսել է ուրիշներուն համար նուիրուիլ: Ան է ճշմարիտ կեանքի ուղին, որուն անունն է Քրիստոսի Սուրբ Խաչը:

Յոյժ սիրելիներ, մեր աղօթքը բարձրացնենք առ ամենաքաղցր Յիսուս, որպէսզի մեր սիրտը բանայ Ծաղկազարդի այս օրինեալ օրը, անոր համար որ կարողանանք իրեն հետեւիլ եւ իր սիրոյ եւ խաղաղութեան պատգամաւորները դառնանք մեր սերունդին մէջ, մեր ընտանիքին մէջ, մեր եկեղեցիին մէջ, մեր ազգին համար. Ամէն:

**✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պապրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց**

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՍ ԱԲԵՏՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ս. ԿՈՒՄԻՆ ԱԲԵՏՄԱՆ ԵԿԵՂԵՑԻ 25 ՄԱՐՏ 2008

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Աւետման տօնը մեզի կը յիշեցնէ Մարդեղութեան մեծ Խորհուրդը: Այս տարի բացառաբար Աւետումը կը զուգադիպի Յիմանցիմ հետ, մինչ կը կատարենք Յարութեան շրջանը՝ յիսուն օր, Չատիկէն մինչեւ Հոգեգալստին տօնը:

Աւետման տօնը, որ ամէն օր կը խոկանք երբ կ'աղօթենք Հրեշտակ Տեառն աղօթքը, մեր հաւատքի հիացումը կը պատճառէ: Աւետման դէպքը, ինչպէս որ Սուրբ Դուկաս կը պատմէ իր ատեարանին սկիզբը, խոնարհ եւ ծածուկ պատահար մը եղաւ, որուն ոչ ոք ականատես էր, ոչ ոք ճանչցաւ, եթէ ոչ նոյնինքն Մարիամ, որ զայն պատմեց Դուկաս ատեարանիչին: Նոյն ատեն, այս պատահարը վճռական դէպք մը հանդիսացաւ մարդկային պատմութեան համար: Երբ Մարիամ իր «Այո»ն ըսաւ հրեշտակի ատեարանին, Յիսուս յղացաւ իր արգանդին մէջ, եւ այդ օրէն ի վեր մարդկային պատմութիւնը նոր հանգրուան մը թեւակոխեց, որ Յիսուսի Յարութեամբ դարձաւ «Նոր եւ Յաւիտեանական Ուխտ»:

Մարիամի «Այո»ն կատարեալ ճառագայթումն է Քրիստոսի «Այո»յին, որ երբ աշխարհ եկաւ, ինչպէս կը կարդանք Եբրայեցիներու թուօթին մէջ, ըսաւ. «*Ահաւասիկ կու գամ, Ո՛վ Աստուած, քու կամքդ կատարելու*» (Եբր. 10,7): Սիւնիս Որդիին հնազանդութիւնը իր երկնաւոր Հօր կը ցոլացնէ Մօրը հնազանդութիւնը Աստուծոյ խօսքին՝ հրեշտակին բերնով: Այս երկու «Այո»ները պատճառ դարձան որ Աստուած մարդանայ, որ Յիսուս մարմնանայ Մարիամի որովայնին մէջ: Ասոր համար, Աւետումը Տէրունական տօն է, որովհետեւ կը յիշատակէ Յիսուսի Մարդեղութիւնը:

Մարիամի պատասխանը հրեշտակին. «*Ես Տիրոջ աղախինն եմ, բող ամէն բան ըլլայ ինձի քու խօսքիդ համաձայն*» (Գլ. 1,38) կ'ընդգրկէ նաեւ Եկեղեցոյ դերը դարերու ընթացքին՝ ապահովցնելու համար Քրիստոսի ներկայութիւնը ամէն ժամանակաշրջանին համար: Արդարեւ, Յիսուսի եւ Մարիամի «Այո»ները կը կրկնուին ամէն օր Եկեղեցոյ անդամներու կողմէ նոր «Այո»ներով, արտասանուած քրիստոնեաներէն, ոչ միայն

եկեղեցականներէն, կրօնաւորներէն ու կրօնաւորուիկներէն, այլ նաեւ աշխարհականներէն՝ հայրերէն ու մայրերէն, ծերերէն, երիտասարդներէն եւ մանուկներէն, որոնք կը կատարեն իրենց քրիստոնէի ուղիղ դերը տան մէջ, գործին մէջ, ակումբներուն մէջ եւ ընկերութեան մէջ: Աւետարանի այս վկաները ներկայ աշխարհին յոյս կը ներշնչեն, որովհետեւ կը վկայեն թէ Քրիստոսի սէրը դրամէն, բռնութենէն եւ անճնասիրութենէն աւելի զօրաւոր է: Հարկ չկայ որ ամէն քրիստոնէայ նահատակ ըլլայ վկայ դառնալու համար, կարելորդ՝ պատրաստ ըլլալ հաւատքը արտայայտել կեանքի նուիրումով եւ Քրիստոսի ուսուցումներու հաւատարիմ մնալ:

Այս տարի, կը կատարենք Պատրիարքարանի շէնքի եւ Սուրբ Կուսի Աւետման՝ հոս տեղի Եկեղեցոյ կառուցման եօթանասունհինգամեակի տարեդարձին բացումը: Արդարեւ, Մարտ 9, 1934ին, երջանկայիշատակ Աւետիս տասնչորրորդ Արփիարեան Կաթողիկոս Պատրիարքը օրհնեց նորակառոյց Պատրիարքարանի շէնքը, իսկ նոյն տարին, Ապրիլ 29ին, օծեց Սուրբ Կուսի Աւետման մատուռը՝ որպէս կաթողիկոսական մատուռ, որ յետագային երջանկայիշատակ Իգնատիոս Պետրոս վեշտասաներորդ Պաթանեան Կաթողիկոս Պատրիարքը ընդարձակեց եւ ժողովրդապետական Եկեղեցիի վերածեց:

Այս պահուս, պէտք է յիշատակել, որ Արփիարեան Կաթողիկոս Պատրիարքը, 1928ի Սիւնիոյի վճիռներուն վրայ հիմնուած, ձեռնարկեց այս շինութիւնները: Ստուգիւ, Սիւնիոյ որոշած էր վերջ տալ Կաթողիկոսական Աթոռի ներկայութեան Պոլսոյ մէջ եւ զայն վերադարձնել Չմմառու Աստուածամօր վանքը, իր նախնական պատմական Աթոռը, հաստատելով Պէյրութ՝ որպէս Կաթողիկոսական մնայուն նստավայր: 1915ի տխրահռչակ ցեղասպանութեան կոտորածէն ետք, մեր համայնքը արիւնագամ վիճակի հասած էր, եւ ժէյթաւի Պատրիարքարանի ու Սուրբ Կուսի Աւետման մատրան շինութիւնները կարելի եղան շնորհիւ երջանկայիշատակ Պիոս մետասաներորդ Սրբազան Քահանայապետի առատածեռն նպաստին:

Սուրբ Պօղոս կ'ըսէ. «Մենք, կենդանի Աստուծոյ տաճարներն ենք» (Բ. Կորն. 6,16): Յիրաւի, եկեղեցին քարեղէն կառոյց մը ըլլալէ աւելի, ան հաւաքավայրն է կենդանի քարերու, հասարակութիւնը հաւատացեալներու, որոնք միատեղ կու գան աղօթելու եւ իրենց հաւատքը արտայայտելու, առանձնաբար կամ հաւաքաբար՝ զլիսաւորութեամբ տեղոյն առաջնորդին կամ ժողովրդապետին :

Աստուածամօր մեծարանքի պատճառները բազմաթիւ են: Արդարեւ, այս տարի Լուրտի Աստուածամօր երելումներու Յոբելիական հարիւր հիսուներորդ տարեդարձը կը զուգադիպի: Այս բարեպատեհ առիթէն օգտուի՞նք, սիրելի եղբայրներ, անգամ մը եւս մտիկ ընելու մեր երկնաւոր Մօր մայրական խօսքերուն: Ան երեւցաւ Լուրտի մէջ մտահոգ, մօր մը նման, իր զաւակներու վիճակին մասին, որոնք Յիսուսէ հեռու կ'սպրին,

մեղքի մէջ կ'ապրին:

Կարելի է հարցնել՝ ին՞չ իմաստ ունին մեզի համար այսօր Լուրտի Աստուածամօր երեսունները: Հոս պետք է վերյիշել որ արարչութեան սկիզբէն ի վեր, Դրախտին մէջ, Աստուած խօսեցաւ այն պայքարին մասին Կնոջ՝ այսինքն Աստուածամօր եւ Սատանայի միջեւ ու անոնց սերունդներու միջեւ: Այս պայքարը պիտի տեսէ մինչեւ աշխարհի կատարածը: Մենք, որպէս մեր երկնաւոր Մօր հաւատարիմ զուակներ, պարտինք մաս կազմել անոր բանակին՝ պայքարելու համար Չարի ուժերուն դէմ, քաջ գիտնալով որ վերջնական յաղթանակը Յիսուս Քրիստոսի եւ իր հետեւորդներուն վիճակուած է եւ ոչ սատանային: Այս նպատակին հասնելու համար, Աստուածամայրը մեզմէ կը խնդրէ մաքուր սիրտ, Սուրբ Հաղորդութեան հանդէպ ջերմեռանդութիւն, վարդաբանի աղօթքը ամէն օր եւ որքան կարելի է ընտանեօք եւ անձնական ցաւերը սիրալոյսով ընդունիլ: Այս հոգեւոր հրահանգները կրնան աննշան երեւիլ, բայց գիտցած ըլլաք որ անոնք հզօր ոյժ ունին Աստուծոյ մօտ, որուն համար *«ամէն ինչ կարելի է»*: Եւ ինչպէս երիտասարդ Դաւիթը զգետնեց հսկայ Գողիաթը փոքր քարով մը (1 Սամ. 17, 40-51), նոյնպէս մենք ալ մեր վարդաբանի փոքր հատիկներով պիտի յաղթենք մեր ահարկու թշնամիին՝ սատանային:

Յոյժ սիրելի եղբայրներ եւ քոյրեր, այս հոգեպարար հանդիսութիւններուն եւ տարեդարձներուն առիթով, զոհաբանական աղօթք բարձրացնենք Ամենաբարին Աստուծոյ՝ իրմէ ստացած բոլոր շնորհքներուն համար՝ Աստուածամօր բարեխօսութեամբ: Խնդրենք Սուրբ Կոյս Մարիամէն, որ մեզի թիկունք հանդիսանայ չարին դէմ մեր առօրեայ պայքարին մէջ, նաեւ որպէսզի կարողանանք լիովին, եւ ոչ թէ երբեմն երբեմն, մեր քրիստոնեայ կեանքը ապրիլ անվախ հաւատքով, յարատեւ ուրախութեամբ եւ անխախտ հաւատարմութեամբ:

Ո՛վ Աստուածամայր, Յիսուսի Մայրը եւ մեր երկնաւոր Մայրը, դուն որ ամէնօրհնեալ ես բոլոր կիներուն մէջ եւ Յիսուսը քու որովայնիդ օրհնեալ պտուղն է, խնդրեմ՝ բարեխօսէ՛ մեզի, մեղաւորներուս համար, հիմա եւ մեր մահուան ժամուն. Ամէն:

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պապրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ. ՍՐԲԱԶԱՆ ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Ընկերային Հաղորդամիջոցներու
42րդ Համաշխարհային
Օրուան Առթիւ

Կիրակի 4 Մայիս 2008

Հաղորդամիջոցները՝ դերակատարութեան
եւ ծառայութեան միջեւ, կը փնտռեն ճշմարտութիւնը
զայն բաժնեկից դարձնելու համար

Սիրելի Քոյրեր եւ Եղբայրներ՝

1. Ընկերային հաղորդամիջոցներու յառաջիկայ 42րդ համաշխարհային օրուան խորագիրը «Հաղորդամիջոցները՝ դերակատարութեան եւ ծառայութեան միջեւ, կը փնտռեն ճշմարտութիւնը զայն բաժնեկից դարձնելու համար» լոյսի տակ կ'առնէ ընկերային հաղորդամիջոցներուն դերին կարեւորութիւնը, անհատներու եւ ընկերութիւններու կեանքին մէջ: Արդարեւ, նկատի ունենալով մանաւանդ համաշխարհայնացման ընթացքի երեւոյթը, չկայ մարդկային փորձառութեան վերաբերող մարզ մը, որուն մէջ հաղորդամիջոցները հիմնական մաս չկազմեն միջանձնական յարաբերութիւններուն, ընկերային, տնտեսական, քաղաքական ու կրօնական յառաջընթացներուն: Այս գծով, նշած էի իմ պատգամիս մէջ, համաշխարհային խաղաղութեան օրուան առթիւ, անցեալ Յունուար 1ին թէ «ընկերային հաղորդամիջոցները, մեկնած իրենց դաստիարակչական կարողութիւններէն, յատուկ պատասխանատուութիւն ունին յառաջանելու համար յարգանքը ընտանիքին հանդէպ, լուսարձակի տակ առնելու համար անոր իղձերն ու իրաւունքները, եւ յայտնաբերելու համար անոր գեղեցկութիւնը»:

2. Ծնորհիւ արուեստաբանական ցնորտ զարգաշրջումին, այս հա-

ղորդամիջոցները ստացան արտասովոր կարողութիւններ, արծարծելով միեւնոյն ատեն նոր հարցեր եւ անտիպ նիւթեր: Չենք կրնար ժխտել ինչ կարելի է այս միջոցները ներկայացնեն տեղեկութիւններու շրջանառութեան, եղելութիւններու ծանօթացման ու գիտութեան տարածման ծիրերուն մէջ. օրինակ՝ անոնք վճռականօրէն օգտեցին գիտութեան տարածման ու ընկերային կազմաւորման, ինչպէս նաեւ ժողովրդավարութեան եւ ժողովուրդներուն միջեւ երկխօսութեան զարգացման: Առանց անոնց օժանդակութեան, իրապէս շատ դժուար պիտի ըլլար զարգացնել ու բարելաւել համերաշխութեան գաղափարը ժողովուրդներուն միջեւ, միջազգային թափ տալ խաղաղութեան երկխօսութիւններուն, ապահովել մարդու առաջնահերթ իրաւունքը տեղեկութեան հասնելու, ապահովելով միեւնոյն ժամանակ գաղափարներու ազատ շրջանառութիւնը, ինչ կը վերաբերի ի մասնաւորի միասնականութեան եւ ընկերային արդարութեան գաղափարներուն: Այո. հաղորդամիջոցները միայն տեղեկատուական աղբիւրներ չեն ներկայացներ, այլ անոնք կրնան ու պէտք է ըլլան օժանդակ տարրեր աւելի արդար ու միացեալ աշխարհ մը կերտելու համար: Դժբախտաբար վտանգը երբեք պակաս չէ, որ այս հաղորդամիջոցները վերածուին հանրամեքենաներու, պարտադրելու համար մարդոց որոշ տեսանկիւններ, թելադրուած ներկայ իշխող շահերու կողմէն: Ինչպէս է պարզան այն հաղորդամիջոցներուն, որոնք կը գործեն գաղափարախօսական նպատակներու համար կամ սպառողական արտադրութիւններ ներկայացնելու համար, նշմարելի ծանուցումներու միջոցաւ: Իրականութիւնը ներկայացնելու պատրուակով, կը հաստատուին եւ կը պարտադրուին այլ շեղած կերպեր՝ անձնական, ընտանեկան եւ ընկերային կեանքերուն մասին: Ասկէ աւելի, բարելաւելու համար ունկնդրութիւնը, ինչ որ լսաչափ (l'audimat) կը կոչենք, չեն վարանիր դիմելու երբեմն անաստութեան, գոեհկութեան ու բռնութեան: Վերջապէս, վտանգը կայ որ այս հաղորդամիջոցներուն միջոցաւ առաջարկուին եւ յառաջանան զարգացումի օրինակներ, որոնք կը խորացնեն աւելի քան կը զսպեն արուեստաբանական ճեղքը, որ կը գտնուի այժմ աղքատ եւ հարուստ երկիրներուն միջեւ:

3. Մարդկութիւնը այժմ կը գտնուի խաչմերուկի վրայ: Ինչ որ գրած էի «Յոյսով Փրկուած Ենք» խորագրով շրջաբերականին մէջ, տեղի ունեցող յառաջդիմութեան անորոշութեան մասին, կը վերաբերի նաեւ հաղորդամիջոցներուն, որոնք կը նուիրեն նորանոր կարողութիւններ ի սպաս Բարիին, սակայն նոյն ժամանակ առիթ տալով չարամիտ կարողութիւններու, որոնք գոյութիւն չունէին նախապէս: Հետեւաբար, անհրաժեշտ է հարց տալ եթէ իմաստուն է ձգել ընկերային հաղորդամիջոցները, որ ենթարկուին կոյր գործելաձեւի, կամ ալ ձգել որ անոնք գործիքներ դառնան ձեռնավարելու համար մարդոց խիղճերը: Պէտք չէ՞ մասաւանդ այն կերպով գործել որ, այս հաղորդամիջոցները ծառայեն անհատին ու հա-

սարակաց բարիքին, ի նպաստ «մարդու բարոյական կազմաւորման, մարդու ներքինին զարգացման»: Անոնց աննախընթաց ազդեցութիւնը անհատներու եւ ընկերութիւններու կեանքին վրայ լայն ճանաչում ստացած է, բայց այսօր պէտք է ցուցաբերել այս անկիւնադարձը, ես կ'ըսեմ աւելի, անոնց դերերու փոփոխութիւնը, որ պէտք է իրականացնեն: Այսօր, աւելի յայտնի ձեւով, հաղորդակցութիւնը յաւակնութիւնը ունի ընդհանրապէս, ոչ միայն ներկայացնելու իրականութիւնը, այլ զայն սահմանելու, շնորհիւ իր իշխանութեան եւ համոզելու մեծ կարողութեան: Կը պատահի օրինակ, որ շատ մը պարագաներուն մէջ ուր հաղորդամիջոցները կը գործածուին ոչ թէ կատարելու համար ճիշդ կերպով իրենց տեղեկատուական դերը, այլ իրենք կը ստեղծեն դէպքերը: Պաշտօնի այս վտանգաւոր փոփոխութիւնը կը մտահոգէ Եկեղեցւոյ բազմաթիւ հովիւներ: Որովհետեւ իրողութիւններ են, որոնք կը ծանրաբերեն մարդկային կեանքը, բոլոր մակարդակներու վրայ (բարոյական, մտաւորական, կրօնական, յարաբերական, զգացական, մշակութային), հարցականի տակ դնելով անհատին բարիքը, պէտք է վերահաստատել թէ ինչ որ կարելի է թեքնիք կերպով, բարոյապէս գործադրելի չէ: Ընկերային հաղորդամիջոցներուն ազդեցութիւնը ժամանակակից մարդուն կեանքին վրայ ուրեմն կը պարզէ հարցեր, որոնցմէ չենք կրնար խուսափիլ, եւ որոնք կ'ենթադրեն ընտրութիւններ եւ պատասխաններ, զորս անկարելի է անտեսել կամ յետաձգել:

4. Այն դերը, որ ընկերային հաղորդամիջոցները կը կատարեն ընկերութենէն ներս, պէտք է այսուհետեւ զայն նկատի առնել որպէս հիմնական մէկ բաժինը մարդաբանական հարցին, որ երեւան կու գայ որպէս երրորդ հազարամեակի վճռական մարտահրաւէր մը: Համեմատաբար ինչ որ կը պատահի մարդկային կեանքէն ներս, ամուսնութեան եւ ընտանիքի պարագային, եւ ինչ կը վերաբերի ներկայ մեծ հարցերուն, ինչպէս՝ խաղաղութիւնը, արդարութիւնը եւ ստեղծագործութեան պահպանումը, նոյնպէս ալ ընկերային հաղորդակցութեան մարզին մէջ, մարդուն եւ անոր ճշմարտութեան կազմուածքային ծաւալները ինդերոյ առարկայ դարձած են: Երբ հաղորդակցութիւնը կը կորսնցնէ իր բարոյական սահմանները եւ կը սպրդի ընկերային հսկողութենէն, ան նկատի չ'առնէր այլեւս մարդու կեդրոնական նկարագիրը ու անոր անկապտելի արժանապատուութիւնը, ժխտականօրէն ազդելով անոր գիտակցութեան վրայ, անոր ընտրութիւններուն վրայ, եւ սահմանափակելով վերջապէս մարդոց ազատութիւնը ու նոյնիսկ անոնց կեանքը: Ահա թէ ինչու անհրաժեշտ է, որ ընկերային հաղորդամիջոցները պաշտպանեն նախանձեղիօրէն մարդ անհատը եւ յարգեն ամբողջապէս անոր արժանապատուութիւնը: Որոշ թիւով մարդիկ կը մտածեն, թէ հարկ է գտնել այս օրերուս՝ «հաղորդակցութեան բարոյական արժէքներ», ինչպէս կան կենսաբանութեան բարոյական արժէքներ՝ բժշկութեան ու կեանքի հարցերով զբաղող գիտագո-

տուլթիւններուն:

5. Յարմար է խոստատիւ այս հաղորդամիջոցները վերածելէ պարզապէս բարձրախօսներու՝ տնտեսական նիւթապաշտուլթեան ու յարաբերական բարոյագիտութեան ի նպաստ, որոնք այս դարուս հիմնական ախտերն են: Ընդհակառակը, անոնք կրնան եւ պարտաւոր են տարածել ճշմարտութիւնը մարդուն մասին, զայն պաշտպանելով անոնցմէ, որոնք կը ձգտին զայն դրժել կամ կործանել: Կրնանք աւելցնել, որ փնտուել ու ներկայացնել ճշմարտութիւնը մարդուն մասին կը կազմեն ամենապսեմ կոշումը ընկերային հաղորդակցութեան: Այս նպատակին համար, դիմել լեզուական շքեղագոյն ոճերուն, որ կը գործածեն հաղորդամիջոցները, կը կազմէ գերագոյն պարտականութիւնը, որ վստահուած է առաջին հերթին պատասխանատու եւ գործունեայ անձերուն այս մարզին մէջ: Սակայն այս պարտականութիւնը կը հետաքրքրէ մեզ բոլորս, որպէս օգտուողներ կամ զբաղող անձեր հաղորդակցութեան մարզին մէջ, մանաւանդ համաշխարհայնացման այս ներկայ շրջանին: Նոր լրատուամիջոցները, մասնաւորապէս՝ հեռաձայնը եւ համացանցը, այժմ փոփոխութեան կ'ենթարկեն հաղորդակցութեան դիմագիծը, եւ այս կը սեպուի արժէքաւոր առիթ մը զայն վերամշակելու - ինչպէս որ ըսաւ իմ նախորդս՝ երջանկայիշատակ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը - դարձնելով աւելի տեսանելի՝ մարդուն հիմնական ու անվթար երեւոյթները:

6. Մարդը ճշմարտութեան ծարաւը ունի, ան ճշմարտութեան մասին փնտրտուքի մէջ է: Այս բանը երեւան կու գայ նաեւ շնորհիւ ուշադրութիւնը գրաւող եւ յաջողութիւնը արձանագրող զանազան խմբագրական գործերու, յայտագիրներու կամ մակարդակով ստեղծագործութիւններու, ուր լաւապէս ճանչցուած եւ ներկայացուած են մարդուն ճշմարիտ, գեղեցիկ ու վսեմ իրականութիւնը, ներառեալ անոր կրօնական ծաւալը: Յիսուս ըսաւ. «Պիտի ճանչնաք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յովհ. 8,32): Ծճմարտութիւնը, որ մեզ կ'ազատէ՝ Քրիստոսն է, որովհետեւ Ան միայն կրնայ ամբողջապէս յագեցնել կեանքի ու սիրոյ ծարաւը, որ կը գտնուի մարդուն սրտին մէջ: Ան, որ կը հանդիպի Անոր ու կ'ոգեւորուի իր պատգամով, փորձառութիւնը կ'ունենայ անդիմադրելի տենչի մը ճշմարտութիւնը բաժնեկցելու. «Ան, սկիզբէն էր, որմէ լսեցինք եւ որուն աւանատես եղանք - կը գրէ Ս. Յովհաննէս - զոր տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք, Կեանքի խօսքը..., կ'աւետենք ձեզի..., որ Հօր քովն էր եւ մեզի երեցաւ: Ան, որ տեսանք ու լսեցինք՝ զայն ձեզի կ'աւետենք, որպէսզի դուք ալ մեզի հետ հաղորդակցիք, ինչպէս որ մենք հաղորդութեան մէջ ենք Հօր եւ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ: Ասիկա կը գրենք ձեզի, որպէսզի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ» (Ա. Յովհ. 1, 1-4):

Աղօթենք Սուրբ Հոգիին, որ գտնուին մեր մէջ հաղորդակցութեան հա-

մար քաջ անձեր եւ վաւերական վկաներ Ճշմարտութեան, որոնք հաւատարիմ Յիսուսի կոչումին եւ ոգեւորուած հաւատքի պատգամով, «գիտեն ըլլալ մեկնաբաններ ներկայ մշակութային պէտքերուն, համոզուած արելով մերօրեայ հաղորդակցութեան ժամանակաշրջանը, ոչ որպէս ենթարկութեան ու մոլորուածութեան ժամանակաշրջան, այլ Ճշմարտութեան փնտրտութի եւ ժողովուրդներու ու անհատներու հաղորդակցութեան զարգացման ժամանակաշրջան» (Յովհաննէս Պօղոս Բ-ի ուղղած խօսքը հաղորդամիջոցներու գործավարներու հանդիպման ընթացքին, 9 Նոյեմբեր 2002-ին):

Այս մաղթանքով, ձեզի բոլորիդ կու տամ իմ Օրհնութիւնս:

*Վատիկան, 24 Յունուար 2008,
Սուրբ Ֆրանսուա Տը Սալի տօն:*

ԲԵՆԵԳԻԿՏՈՍ ԺՁ
Սրբազան Քահանայապետ

ԴՈՒ ԶՈ՞ ԽՆԴՐԵՍ ԴՈՒՆ Ո՞Վ ԿԸ ՓՆՏՈՒԵՍ

Քրիստոնեայ ամբողջ աշխարհը՝ այս օրերուն կ'ապրի քառասնորդաց շրջանը:

Եկեղեցին յիշեցնելու համար մեզի անմոռանալին, որ շատեր չեն սիրեր լսել այս ճշմարտութիւնը՝ նոյնիսկ մահուան սնարին:

Ի՞նչպէս կրնան յիշել ու սիրել անաստուածները ու անհաւատները, երբ մահը իրենց համար փոս մըն է խաւար ու տամուկ՝ որ մարդ կը մտնէ - վերջ ու փոշիացում:

Ի՞նչ է սակայն այս անմոռանալին: - Ով մարդ՝ զի հող էիր՝ ի հող դարձիս, ով մարդ հող էիր եւ հող պիտի դառնաս:

Աստուածաշնչական այս խօսքին նպատակը՝ չէ երբեք տխրեցնել, յուսահատեցնել եւ դանեցնել կեանքէն ու աշխարհէն, այլ պարզապէս, յիշեցում մը, որ եկած ենք՝ երթալու համար օր մը ուշ կամ կանուխ, եւ անցնելու ուրիշ կեանքի մը՝ յաւերժական, ուր արեւը մար չի մտներ:

Հետեւաբար, այս քառասուն օրերը հարկ է, որ ըլլան մեզի համար խոկումի, ամփոփումի եւ հաշուեյարդարի առիթներ, թէ ինչպէս անցուցեր ենք մեր կեանքը մինչեւ երէկ՝ հետամուտ միմիայն անցաւոր հաճոյքներու եւ աշխարհիկ սին բարքերու ետեւէն երթալով, թէ՛ բարիին, լաւին ու գեղեցիկին հետամուտ:

Արդեօ՞ք, կրցած ենք դիմադրել սատանայի հրապուրիչ փորձութիւններուն, եւ ըսել մեր վճռական խօսքը, երթ իմ սատանայ՝ հեռացիր ինձմէ սատանայ:

Կամ վերէն ձայն մը, եթէ մեզի հարց տայ, - Դու զո՞ ինդրես - դուն ո՞վ կը փնտռես: Մեր պատասխանը պիտի ըլլայ արդեօ՞ք, միայն Քրիստոս ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր, որ մեզի համար երկու հազար տարի առաջ աշխարհ եկաւ, մարդ եղաւ, - խաչ ելաւ ու մեռաւ, եւ այսօր մեր հոգիին հացն է սննդարար:

Երանի մեր պատասխանը ըլլայ դրական - միայն ու միայն Քրիստոս, ոչ փառք, ոչ դրամ եւ ոչ ալ հաճոյք:

Քառասնորդաց շրջանը, մեզի համար թող ըլլայ շրջան աղօթքի եւ եղբայր-սիրութեան ու հաշտութեան:

Հաշտութիւն՝ նախ Աստուծոյ հետ եւ մեր անձին, ապա՝ մեր նմանին:

Հաշտութեան համար կայ խորհուրդ մը - Խոստովանանքը:

Խոստովանանքով եթէ մեր հոգին սեւ է՝ պիտի սպիտականայ: Եթէ մեր սիրտը բորոտ է՝ պիտի մաքրուի: Եթէ մեղքով կեղտոտ ենք՝ պիտի սրբանանք սրբափայլ:

Հ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ ԱՇԳԱՐԵԱՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔ ՄԸ,
ՈՐ ՊԻՏԻ ՓՈՐՉԷ ԿԱՐԳԱԼ ԱՆՅԵԱԼԸ
ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

«ԾԱՐԱԿԻ ԵՄ»

(Յով. 19,28)

- Ծարաւի եմ... , գոչեց Յիսուս խաչին վրայէն:

Ջուրի տեղ քացախ խմցուցին ու ան քիչ ետք հոգին ականդեց:

Ջուրը մարդուն համար կենսական պահանջք է: Առանց ջուրի՝ մարդը կը մեռնի:

Ծարաւը մահացու է:

Մարդուն մէջ նոյնիսկ մահացու է երջանկութեան, գեղեցիկին, ազատութեան, սիրոյ ծարաւը: Անոնք մարդը ողջ-ողջ կը մեռցնեն...:

Ծարաւ մը կայ նաեւ արդարութեան: Արդարութեան ծարաւը Աստուած տուած է մարդուն, քանի որ Աստուած մարդը ի՛ր պատկերին ու նմանութեան համեմատ ստեղծեց:

Մեր շարականները Քրիստոսը կոչած են «Արդարութեան Արեգակ»:

Քրիստոս իր Լերան Քարոզին մէջ երանի՛ կարդաց անոնց որոնք «քաղցն ու ծարա՛ն ունին արդարութեան» (Մտթ. 5,6): Աշխարհի վրայ քանի՛-քանի՛ մարդիկ Արդարութեան նոյն ծարաւով մահուան դիմած են, զնտաններու կամ աքսորավայրերու մէջ իրենք զիրենք սնունդէ կամ հեղուկէ զրկելով:

Քրիստոս եւս իր մահկանացու կեանքին ընթացքին արդարութեան ծարաւը ապրեցաւ: Ան Պիղատոսի ու քահանայապետներուն իր դէմ գործադրած անարդարութեան պատասխանեց իր աստուածային լռութեամբ: Իսկ փարիսեցիներուն անարդար օրէնքներուն դէմ ընդվզեցաւ-օրէնքի այդ մարդոց համար՝ Շաբաթը աւելի կարեւոր էր քան 38 տարիներէ հիւանդ պառկած մարդու մը բժշկութիւնը, Շաբաթ օրով (Յով. 5,2):

Անարդարութեան զոհ դարձան նաեւ հայ ժողովուրդին զաւակները, Յեղասպանութեամբ: Հայ ազգը Արդարութեան ծարաւը ունի 93 տարիներէ ի վեր իրեն դէմ գործուած անարդարութեան դիմաց: Ան այս ծարաւէն տառապեցաւ նախ անապատներու խորերը, ուր ցեղասպանը զինք աքսո-

րեց՝ իր ոճիրը գործադրելու համար, հեռու՝ մարդկային արդարութեան աչքերէն: Հայ ժողովուրդը Յիսուսին պէս «ծարաւի՛ եմ» գոչեց՝ նախ իր ցեղասպանին երեսին, ու երբ անպատասխան մնաց, նաեւ համայն մարդկութեան խիղճին: Ան այսօր արդարութեան իր ծարաւը կոչած է պահանջատիրութիւն: Արդարութեան այս ծարաւը անտեսել կու տայ ամէն զրկանք, տառապանք ու հալածանք՝ Յեղասպանութենէն վերապրած հայ սերունդներուն մօտ: Արդարութեան այս ծարաւը ազգ մը ամբողջ՝ իր մեծով ու փոքրով լարած է ցեղասպանին դէմ, ո՛չ թէ վրէժ լուծելու, այլ Արդարութի՛ւն պահանջելու վճռակամութեամբ: Վրէժը կրնայ մարդուն մէջ ինքնապաշտպանութեան բնագդ ըլլալ, բայց Արդարութեան պահանջին մեկնակէտը՝ աստուածայի՛ն է: Ով կ'ուզէ Աստուծոյ նմանիլ, պարտի իր կեանքին մէջ արդարութիւնը յարգել եւ գայն գործադրել:

Արդարութեան ծարա՛ւն ունենալը՝ Աստուծո՛յ ծարաւն ունենալ է:

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՒՆԵԱՆ
Ձալքա, Ապրիլ 2008

ՄԱՐԴԱՅԵԱԼ ԳՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՉԵԱԼ ՍԻՐՈՅՆ ԱՂԱՂԱԿԸ...

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒ ՎԿԱՅԱՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

«Յիսուսի իսաչին քով կանգնած էր Անոր Մայրը՝ ... Ժամը երեքին՝ Յիսուս զօրատր շայնով աղաղակեց. 'Էլոհի՛, Էլոհի՛, լամա՞ սաքաքթանի...: Ասրուա՛ծ իմ, Ասրուա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր զիս'...»²:

Խաչափայտէն՝ Աստուածամարդ Յիսուս Քրիստոսի չորրորդ խօսքն էր:

- Հարցադրումը ապրուած տաժանքին ու հիասթափումին...:
- Հարցումը մարդկօրէն բեկուած վստահութեան...:
- Ընդմիջումը նպատակասլաց նկրտումին...:
- Հանգրուանը տրամաբանօրէն ծմակ հորիզոնին...:
- Աղաղակը խաչեալ Աստուածամարդուն, որ նաեւ տանջուած մարդուն ցաւն է...:
- Ճիշդ խաչեալ Աստուածամարդուն, որ հաւատացեալին նաեւ պոռթկումն է...:
- Բայց ամէնէն աւելի եւ ամէնէն առաջ՝ ճշմարտութեան պահանջքն է, սիրոյն ակնկալութիւնն է...:

Ամէն ժամանակի համար ու ժամանակի մէջ ճշմարտութիւնը այժմէական է, քանի չի հիննար, չի մաշիր, չի ծերանար:

Ամէն ժամանակի համար ու ժամանակի մէջ սէրը այժմէական է, քանի չի հիննար, չի մաշիր, չի ծերանար:

Գլխազիր ճշմարտութիւնը, գլխատառ Սէրն է Յիսուս Քրիստոս՝ Խաչեալը, որ Այժմէականը, Անժամանցելին, Անանցանելին է:

Ճշմարտութեամբ ու սէրէն կատարուած ամէն բան ունի մնայուն արժէք: Ամենադոյզն սիրարարքը աւելի կը կշռէ Աստուծոյ առջեւ, քան մեծագոյն գործը սիրազուրկ:

Ճշմարտութեան ու սիրոյն թշնամիներն են հպարտութիւնը եւ ասոր անբաժանելին՝ ունայնամտութիւնը, քանի կ'ուզեն ամէն բանի վրայ տրա-

1 Յվհ. 19,25:

2 Մրկ. 15,34: Տես նաեւ Մտթ. 27,46.«Յիսուս բարձրայն աղաղակեց՝էլի՛, էլի՛, լամա՞ սա- բաքթանի...: Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր զիս'...»:

մադրել, եւ այն՝ իրենցմով, իրենց համար:

Բայց սէրը անտրամադրելին է ինքիրմով եւ ինքիրեն համար: Նոյնիսկ իր սեպհական կեանքին համար կարելի չէ տրամադրել սիրոյն վրայ, որովհետեւ սիրողը իր սիրածին համար կեանքը կու տայ անպայմանօրէն. «Զկայ աւելի մեծ սէր, քան իր կեանքը զոհել բարեկամներուն համար: Դուք իմ բարեկամներս էք»³:

Այսպէ՛ս Սահմանողը ապրեցաւ իր սահմանումը *Խաչին* վրայ, *Խաչելութեամբ* ու *Խաչամահով*, հակառակ որ «կեանքը Անով էր, եւ այդ կեանքը մարդերուն համար լոյս էր»⁴:

Իր խօսքը գործադրեց *Յայտարարողը*, *Խօսքը*, *Բանն*, որ անսկիզբ եւ անվախճան է, ողջ ու ճշմարիտ է այսօր, ինչպէս երէկ, վաղը եւ բոլոր ժամանակներու մէջ, քանի Ան «սկիզբէն էր, եւ ամէն ինչ Անով ստեղծուեցաւ»⁵:

Այնքան ամբողջական ճշմարտութեամբ ապրեցաւ իր խօսքը եւ այնքան հետեւողական սիրով գործադրեց իր սահմանումը, որ, ինքնամատոյց կեանքին վերջին ըոպէին ու խաչափայտին վրայ սրտախոց, բայց միշտ Յարութեան հեռանկարով ամրապնդուած եւ Համբարձումի կեանքին մէջ խարսխուած, Աստուածամարդը՝ «Ժամը երեքին՝ Յիսուս զօրաւոր ձայնով աղաղակեց.՝ Ելո՛հի՛, Ելո՛հի՛, լամա՛ սա-բաքքանի...: Աստուած՛ իմ, Աստուած՛ իմ, ինչո՞ւ լքեցիր զիս՛...»⁶:

Վերակոչեալ «բարեկամներս» ոչ միայն չեն անգիտանար իրենց «Տիրոջ գործերը»⁷, այլ նաեւ «կը լսեն Անոր ձայնը ... ու կը հետեւին Անոր»⁸, ինչպէս ալ կ'ուրանան իրենց անձը եւ կ'առնեն իրենց խաչը Յիսուսի ճշմարտութեան ու սիրոյն համար⁹:

Այս ընթացքով՝ Յիսուսի վերակոչեալ «բարեկամներս» ոչ միայն Անոր «արժանի»¹⁰ կը դառնան, այլ նաեւ Անոր համար իրենց կորսնցուցած կեանքը կը գտնեն Անոր «Հօր փառքով»¹¹ եւ Անոր «Թագաւորութեան» մէջ¹²:

Քանի այսպէ՛ս է ճշմարտութիւնը, այսպէ՛ս է սէրը, 1915-ի Հայոց Յեղասպանութեան Վկաները, իրենց տարագրութեան խաչողիով եւ իրենց սպանդի խաչամահով, «արժանի» եղան ոչ միայն ընթանալու Քրիստոսի «Խաչի նանապարհը», այլ նաեւ նմանելու Անոր, որ ճշմարտութեան ու Սիրոյն յաւերժական միութիւնը եղանակաւորեց յստակօրէն. «Զիս տես-

3 Յվհ. 15,13-14:

4 Յվհ. 1,4:

5 Յվհ. 1,1 և 3:

6 Մրկ. 15,34:

7 Յվհ. 15,15:

8 Յվհ. 10,2 եւ 4:

9 Հմմտ. Մտթ. 16,24-25:

10 Մտթ. 10,38:

11 Մտթ. 16,27:

12 Հմմտ. Մտթ. 16,28:

նողը կը տեսնէ նաեւ Հայրը¹³: Զիս ընդունողը կ'ընդունի նաեւ Իմ Առաքիչս»¹⁴:

Ապրիլեան Հայաստանութեան իւրաքանչիւր նահատակը նաեւ «արժանի» եղաւ Խաչեային սրտառուչ հարցումը կրկնելու. «Ելո՞նք, Ելո՞նք, լամամ սաբաքթանի...: Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ լ քեցիք զիս'...»:

Ստուգիւ, «միայն արդարը աղաղակեց յաւիտեանական ճիշդ...: Աղաղակը, որ միշտ պիտի արձագանգէ, յաւերժօրէն միշտ: Աղաղակը, որ պիտի չշիջանի, յաւերժօրէն երբեք»¹⁵:- Միայն Աստուածային Արդարը...: Միայն մարդկային արդարը...:

Չարչարանքի ու հարցադրումի իրավիճակներուն հանգիստութեամբ, մանաւանդ թէ, մարդկային երկրորդին հետեւողութեամբ Աստուածամարդ Ալֆային եւ Օմեկային՝ ինչպէս Քրիստոս երեւութապէս անտեսուած, բայց նոյնպէս ընտրուած է իր Հօրմէն, այսպէս ալ, եւ հոս կը կիրառեմ Դ. Վարուժանի (1884-1915) սահմանումը, ամէն մէկ նահատակ «հայր՝ լքուած դարերէն, բայց Յաւերժէն ընտրուած» է¹⁶: Այո՛, նոյնինքն Ապրիլեան Նահատակ քերթողին հայեցողութեամբ, իւրաքանչիւրն ոչ միայն «ցեխին մէջ նետուած սրբութիւն» է, «սուրբ» է, այլ նաեւ «Յիսուս» մըն է «Թըքնուած»...¹⁷:

Պատմական Հայաստանի լեռներ ու բլուրներ դարձան «վաստակաբեկ դիակներով ... Գողգոթանէ՛ր, Գողգոթանէ՛ր սրբազան»¹⁸, իսկ մեր Ապրիլեան Մարտիրոսները յա՛ր կը մնան «Գողգոթայի ծաղիկներ»¹⁹ անմահաբո՛յր եւ յաւերժաթո՛յր...:

Տրամաբանական ու յստակ է եզրայանգումը ճշմարտութեան եւ սիրոյն: «Վարդապետը հալածուեցաւ, չարչարուեցաւ ու սպաննուեցաւ Ի՛ր խաչին վրայ: Աշակերտը կամ աշակերտներն ալ տարագրուեցան, տանջուեցան եւ ջարդուեցան իրե՛նց խաչերուն վրայ...:

Սքանչելագե՛ղ է եւ իւրատի՛պ՝ Դ. Վարուժանի հայագունե՛ղ նկարը, որով կը ներկայացնէ՛ Արարատին վրայ խաչուած Յիսուս՝-ը...²⁰, որ խորհրդանիշն է՝ Գողգոթաներ՝-ու վրայ՝ մորթըւած Արշալոյսներ՝-ու...: Անոնց՝ Հայ Յիսուսներուն՝ արեան ծովու՝՝ Գողգոթաներ՝-էն՝ սրբազան՝²¹, կը շարունակէ նկարագրել «Սուրբ Խաչին»²² սիրահար եւ «Ճանապարհ Խաչի»-ն²³ քալած բանաստեղծը,

13 Յվհ. 14,9:

14 Մտթ. 10,40:

15 Charles Péguy, Le Mystère de la Charité de Jeanne d'Arc, 1912.

16 Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, Բ. հտ., Երեւան, 1986, էջ 210:

17 Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, Ա. հտ., Երեւան, 1986, էջ 113 եւ 114:

18 Դ. Վարուժան, անդ, Ա. հտ., էջ 135:

19 Դ. Վարուժան, անդ, Բ. հտ., էջ 85:

20 Դ. Վարուժան, անդ, Ա. հտ., էջ 135:

21 Դ. Վարուժան, անդ, Ա. հտ., էջ 135, 137 եւ 138:

22 Դ. Վարուժան, անդ, Ա. հտ., էջ 305-306 եւ 587:

23 Դ. Վարուժան, անդ, Բ. հտ., էջ 86-87:

՝...կը ծըփան

Մարդու ահեղ դիակներ,

Դիակ կոյսի, դիակ աստղի եւ վարդի,

Դիակը մեր Ազգին եւ մեր Աստրծոյն²⁴:

Տարբերութեան մէջ նոյնութիւնն ու հետեւորդութեան մէջ անբաժանելիութիւնը՝ բիրաբիր անգամներ կը բազմապատկեն Յիսուսի Գողգոթան հայքրիստոսական Գողգոթաներու, որոնց հերոս-հերոսուհիներէն»²⁵ իւրաքանչիւրին «Էլոնի՛, Էլոնի՛, լամա՞ սաբաքթանի...», կամ աւելի հայերէն եւ հայօրէն՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ լքեցիր զիս...», բանական, բնական ու գերբնական ճիշտ արժանացան ըլլալու եւ արժանացած կը մնան վիճակները ճշմարտութեան ու Սիրոյն:

«Էլոնի՛, Էլոնի՛, լամա՞ սաբաքթանի...: Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր զիս...» աստուածաշնչօրէն բնութագրեալ «աղաղակ»-ը լսեց Աղաղակողին «Մայրը»²⁶, որ, մարգարէօրէն նախասացեալ՝ սրախոց ու սրտավէր²⁷, հանդիսացաւ ոչ միայն Մարտիրոսակիցն իր սիրապաշտած Հարազատին, այլ նաեւ Նահատակակիցն իր տարագիր ու կոտորեալ հարազատներուն եւ Ունկնդիրը անոնցմէ իւրաքանչիւրին երկնաբախ աղաղակին. «Էլոնի՛, Էլոնի՛, լամա՞ սաբաքթանի...: Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր զիս...»:

«Հոն է Մայրը՝ Մարիամ,

Բըզըքտուած Շուշան՝ փուշերէն դառնահամ,

Կու լայ հեծեծագին.- Օ՛, գերագոյն սուրբ ժամ»²⁸:

«Կը նայիմ Մայրիկիդ սգաւոր,

Ծնրադիր միս-միմակ խաչիդ ցուրտ ոտքերուն,

Կը նայիմ տանջահար դեմքն ի վար

Կայլակող արցունքի շիթերուն

Եւ կը գգամ, որ իր մեծ վիշտին մէջ մայրական,

դարե դար կենդանի,

Բիւրաւոր սգակիր մայրերու

Որք հոգին կ'արիւնի...»²⁹:

«Անպատին մէջ կեանքին,

Դուն Պարտեզն ես հոտաւետ,

Որ միշտ կ'անիս, կը ծաղկիս.

Դուն Արեւն ես կենսատու,

Ու երգը մեծ Յաւերժին՝

24 Դ. Վարուժան, *անդ*, Ա. հտ., էջ 137:

25 Մ. Հայրենի, *Դանիէլ Վարուժան՝ երգիչը յաւերժութեան...*, Մխիթար Մատենաշար 33, Պէյրութ, 1998, էջ 52-53:

26 Յվհ. 19,25:

27 Ղկ. 2,35:

28 Մ. Պազգալեան, *Գոյապատճառը կեանքիս, Վենետիկ-Ս. Ղազար*, 1977, էջ 59:

29 Մ. Իշխան, *Տառապանք, Անթիլիաս*, 1968, էջ 84:

Մեր հոգիին լսելի...:
Քեզմով միայն, Մայր անոյշ,
Վերքերը մեր կը բուժուին.
Ցաւը կ'ըլլայ գեղեցիկ,
Եւ արցունքները աղի
Կը վերածուին գոհարի...»³⁰:

«Տիրամայր, ալ բաւէ այսքան տառապանք,
Իմ մօր հոգին դարձած է հուր ցաւի հանք.
Սիրտը՝ ակօս, ուր ուղիտօրէն կ'արիւնին
Ծիլեր, վարդեր, կակաչներ հայ անմեղին»³¹:

Զգո՛յշ, «Նո՛ր Արշալոյս կը պոռթկայ Նահատակներուն շիրիմէն»³²:

Դ. Վարուժան, որուն «հոգեկանութեան ծիրէն» հոգեմտաւոր յաճու-
մին մասին անտիպ գրականագիտական, բարոյաբանական ու իմաստա-
սիրական ուսումնասիրութիւն մը ունիմ, ոչ միայն կարդացած է Ս. Գիր-
քը, այլեւ լաւագոյնս ծանօթ է անոր ոգիին ու կլիմային, գիտցած ըլլալու
է, թէ «Էլոհի՛, Էլոհի՛, լամա՞ սաբաքթանի...: Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ
իմ, ինչո՞ւ լքեցիր զիս...» աղաղակն որքան ալ ձախողանքի, պարտու-
թեան ու յուսալքումի ճիչն ըլլալ կը թուէր, բայց եւ այնպէս սուրբ-գրա-
յին սկզբաղբիւրը նկատելով՝ աստուածուայուսութեան գերազանց տաղն
է...:

Աստուածաշնչական աղբիւրն է թիւ 21/22 Սաղմոսը, որ թէեւ կը սկսի
«Աստու՛ած, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողուցիր զիս»³³ տառապեալ ու
լքուած անձին հարցադրումով, սակայն եւ այնպէս կ'աւարտի Տիրոջ վրայ
անոր ունեցած անչափ վստահութեան ու յաղթութեան երգով. «... Տերը
չմերժեց, չարհամարհեց աղօթքն աղբատիս. երես չդարձուց ինծի, երբ
աղաղակեցի Իրեմ, պատասխանեց ինծի»³⁴: Ուստի, միաժամանակ թէ՛
արդար տառապողին տիրութեան ճիչն է եւ թէ՛ անմեղ աղօթողին շնորհ-
քի արարքն է:

Եզրակաբար, ճշմարտութեան եւ Սիրոյն Խաչէն «Էլոհի՛, Էլոհի՛, լա-
մա՞ սաբաքթանի...: Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր
զիս...» նախերգանքը Ապրիլեան Վկաներուն օրհներգն է յաւերժահունչ՝
«Երեկ եւ այսօր, միշտ ու յաւիտեան»³⁵: Անոնց թէ՛ ուկնդիրը եւ թէ՛ ձայ-
նակիցն էր Մարիամ՝ Հայոց խնկելի Աստուածամայրը, որ մեր «Եօթնվերք
Աստուածածին»-ն է...:

ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ
Այնճար, Աւագ Ուրբաթ, 2008

30 Զ. Եկէնեան, Մարդը վեր աստղերէն, Երուսաղէմ, 1955, էջ 9:

31 Մ. Հայրենի, Մայիսեան աղօթքներ եւ մարեմեան տաղեր, Այնճար, 2007, էջ 51:

32 Դ. Վարուժան, անդ, Բ. հտ., էջ 210:

33 Սղմ. 21/22, 2:

34 Սղմ. 21/22, 25:

35 Եբր. 13, 8:

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ԳՅԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Մեծ Եղեռնի ԳՅամեակի յիշատակին առթիւ, Չորեքշաբթի 23 Ապրիլ 2008ին, տեղի ունեցաւ հսկումի երեկոյ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի շրջաբակէն ներս: Յայտագիրը ընդգրկեց Եղեռնի մասին վաւերագրական ներկայացումներ, գծագրիչ՝ Րաֆֆի Ետալեանի պատրաստած այս յիշատակին համար գեղանկարի ցուցադրութիւն, «Վերապրող վկաներ» անուան տակ, ու տեղեկատուական ներկայացումներ, հայկական թերթերուն հետ գործակցաբար: Ինչպէս նաեւ, այս առիթով բանախօսեցին՝ Լիբանանի մէջ համաշխարհային Կաթողիկէ մամուլի նախագահ Հայր Թոնի Խատրա, բեմադրիչ Գարմէն Լապաքի եւ Վիգէն Աշգարեան:

Իսկ Հինգշաբթի, 24 Ապրիլ 2008ին, կէսօրէ ետք ժամը 17ին, ցեղասպանութեան զոհերուն յիշատակին նուիրուած, հոգեհանգստեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանեց Ամենապատիւ Տ. Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ժամհուր-Ժէթաուի) ձեմարանի բակին մէջ, ներկայութեամբ Լիբանանահայութեան՝ քաղաքական եւ միութենական տարբեր անձնաւորութիւններուն: Ս. Պատարագի աւարտին, Հայր Միքայէլ Թ. Ծ. Վրդ. Մուրատեան Պատրիարքական փոխանորդ Չմամուլ Միաբանութեան, օրուան պատգամը փոխանցեց, ապա հաւատացեալ ժողովուրդը թափօրով ուղղուեցաւ դէպի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին շրջափակը, Ապրիլեան Նահատակաց յուշակոթողին շուրջ, կատարելու համար հոգեհանգստեան պաշտօնը:

Ստորեւ կու տանք Լիբանանի համաշխարհային Կաթողիկէ Մամուլի միութեան նախագահ՝ Հայր Թոնի Խատրայի խօսքը, թարգմանաբար արտասանուած ցեղասպանութեան ԳՅամեակի առթիւ, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Աշրաֆիէ, Չորեքշաբթի, 23 Ապրիլ 2008ին:

ՀԱՅԵՐԸ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՈՒԱԶԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ԵՒ ՕՐԻՆԱԿԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ

Ինչպէս ուժը կը գոյանայ սիրոյ մէջ, այնպէս ալ հոն կը գտնուին տկար կէտեր, մանաւանդ երբ կը գտնուինք մեր սիրելիներուն առջեւ. քանի Հզօր Աստուծոյ տկար կէտը, իր սէրն է մարդուն հանդէպ:

Կը սիրեմ քեզ, ով հզօր ժողովուրդ, քու ցաւերուդ ու համեստութեանդ

մէջ, քու նուիրումիդ եւ քու դիմադրութեանդ մէջ: Կը սիրեմ քեզ քու հզօրութեանդ ու փառքիդ մէջ, կը սիրեմ քեզ ով Հայ հզօր ժողովուրդ, քու ցաւերուդ եւ խաչելութեանդ մէջ, քու յարութեանդ ու գոյատեւմանդ մէջ:

Այո՛, հզօր ես ով ժողովուրդ, որ ներդրում ունեցար Լիբանան հայրենիքի եւ ժողովուրդի բարգաւաճման մէջ, քու ներդրումդ երեւելի է անոր որ կ'ուզէ տեսնել ճշմարտութիւնը եւ վայելէ անոր սքանչելի հրաշալիքը:

Արդարեւ, այսօր եկայ ձեր հետ շնորհակալութիւն յայտնելու այս ժողովուրդին, եւ իր հետ կոչ ուղղելու համայն մարդկութեան որպէսզի ճանչնայ յատկօրէն Հայոց ցեղասպանութիւնը, որ աշխարհային գերութերը կարող չեն սրբելու իրենց ամօթը ու ջնջել զայն մարդկային պատմութեան սեւ էջերէն, որ գրեցին մահուան ու ոճիրի հեղինակները:

Հայերը սպաննուեցան բայց չվախցան, անոնք ապրեցան երկու անգամ, մէկ անգամ պատմութեան մէջ, իսկ մէկ անգամ ալ Աստուծոյ մօտ: Անոնք չվախցան, որովհետեւ ան որ կը մեռնի, չի վախնար: Իսկ թուրքերը, մեռան որովհետեւ վախցան, եւ ով որ կը վախնայ, կը մեռնի երկու անգամ, մէկ անգամ՝ սպաննելու ժամանակ, եւ երկրորդ անգամ՝ մահուան պահուն:

Լիբանանի մէջ, Եկեղեցին ու ժողովուրդը իր բոլոր հատուածներով, ընդունեցին ու օգնեցին Հայերը: Անոր փոխարէն, Հայերը չուրացան այս բարիքը, այլ փոխադարձեցին զայն մեծ նուիրումով իրենց երկրորդ հայրենիքին, բոլոր մակարդակներու վրայ:

Կը հաստատենք մեր սէրը եւ զօրակցութիւնը Հայկական դատին, ինչպէս կը հաստատենք Հայոց յառաջադէմ դերը լիբանանեան քրիստոնեայ հարցերուն աշխուժացման ծիրին մէջ, եւ անոնց ներդրումը քրիստոնեաներուն միութեան ու խաղաղութեան համար իրենց երկիրներուն մէջ: Հաստատելով մեր սէրը ու զօրակցութիւնը, վստահութիւն ունինք, որ մեր եղբայրները՝ հայերը շարունակեն իրենց լայնաբաց առաջաքայլը լիբանանեան ընկերութեան հանդէպ, իր բոլոր հոգեւոր հատուածներով, որոնք տակաւին չեն ճանչնար իրապէս Հայ դատը: Ինչպէս նաեւ անոնք դեռ չեն ճանչնար բաւական հայ ժողովուրդի որակաւոր յատկանիշները, արուեստի, գիտական ու ընդհանուր մշակութային մարգերուն մէջ:

Եթէ Լիբանանը՝ երկիրէ աւելի է, ինչպէս որ ըսաւ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը, որովհետեւ ան արժէքաւոր մշակութային պատգամ կը ներկայացնէ, ան նաեւ խաչը ու տառապանքը կը ներկայացնէ, ինչպէս որ ըսաւ Գարեգին Բ. կաթողիկոս, այն յոյսով, որ Լիբանանի ու Հայաստանի խաչի ճանապարհը վերջ գտնէ, յարութեան ու փառքի վերջին կայանին:

Այս է հաւատքին իմաստը Հայ ու Լիբանանցի ժողովուրդներուն մօտ, եւ որքան կը մաղթեմ զօրաւոր ըլլայ հաւատքը ձեր մօտ, ով համախմբուող ներկաներ, որ ձեզ կը միացնէ հոս զոյգ պատկանելիութիւնը՝ երկու հայրենիքներուն, մէկ սրտով ու մէկ տառապանքով:

ԹՈՆԻ ԽԱՏՐԱ
Պէյրութ 23 Ապրիլ 2008

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻ

Ահա առաջին դարձեալ կը ժամանէ օրն այս խնկաբոյր եւ կրկին՝ Հայ Ժողովուրդը իր բովանդակ շարքերով, Հայաստանէն Լիբանան եւ ի սփիւռս աշխարհի, կ'ոգեկոչէ անգամ մը եւս յիշատակը 93 տարիներ առաջ կոտորածի, սպանդի, եւ աւելին՝ Յեղասպանութեան արեամբ խեղդուած աւելի քան 1,5 միլիոն նահատակներուն:

93 տարիներ անցեր են այդ մահասփիւռ օրերէն երբ իր խիղճը վաճառած մարդկութիւնը պատմութեան ամէնէն արիւնայի եւ քստմնելի էջերու ականատեսը կը դառնար ի տես Հայ Ժողովուրդի ապրած գողգոթային:

Աւելի քան երկու հազարամեակներ Հայկական Բարձրաւանդակին վրայ կազմաւորուելէ, զարգանալէ, Պետութիւն եւ քաղաքակրթութիւն կերտելէ եւ հզօրանալէ ետք, որու ընթացքին Հայը պիտի կարողանար հոգեմտաւոր եւ մշակութային ինքնուրոյն դիմագլիծ մշակել, բայց ահա ան բռնի ուժով դուրս պիտի քշուէր իր պապենական հողերէն, իր Հայրենիքի մեծագոյն մասէն: Երբեմնի իր հզօր թագաւորութիւնները կորսնցուցած՝ Հայկական բնօրրանը եւ իր հետ ամբողջ ժողովուրդ մը ենթակայ եղան այլազան ցեղախումբերու վայրագ արշաւանքներուն եւ մտան հինգդարեան խաւարման շրջան մը: Արդարեւ ԺԴ դարու վերջերէն սկսեալ մինչեւ ԺԹ դարու կէսերը, Հայաստան իր մեծ մասով ինկած էր թրքածին հորդաներու տիրապետութեան տակ, ապա բաժնուած Օսմանեան Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ, աւերուած եւ հարստահարուած: Հակառակ տեղի ունեցած մակերեսային եւ ձեւական բարենորոգումներուն, Օսմանեան լուծին տակ ստրկացած եւ Միջագոյն «քաղաքակիրթ» ընտանիքին անտարբերութեան եւ անկարողութեան ի տես յուսալքուած Հայ Ժողովուրդը տեսաւ միայն խոշտանգում, ապրեցաւ միայն սպանդ, ճաշակեց միայն կոտորած: Թուրք արիւնարբու ճիւղներուն կը մնար սոսկ այն պատեհ առիթին սպասել, աւարտին հասցնելու համար այդ դժոխային ու նենգ ծրագիրը զորս կ'անւանէին «Բանթուրանիզմ»:

Եւ դժբախտաբար չուշացաւ այն պահը, երբ «Իթթիհատ վե Թարաքքի»-ի կուսակցապետները թրքական նոր եւ քաղաքակիրթ վարչաձեւին գլուխն անցած եկան անգամ մը եւս Հայ Ժողովուրդին խմբակերպ այդ դառն բաժակը ցմրուր:

Օգտուելով Ա. Աշխարհամարտի ընձեռած նպաստաւոր պայմաններէն, երբ Միջագոյն Ընտանիքը թաղուած էր պատերազմի արհաւիրքներուն

մէջ, եւ իւրաքանչիւր ազգ զբաղած իր իսկ լինելութեան գոյամարտը մղելով, իր իսկ ճակատագրի տնօրինումով, այո՛, թուրքը ի գործ դրաւ կանխամտածուած եւ նախապէս ծրագրուած իր հրէշչային ծրագիրը, եւ պետական մակարդակի վրայ ձեռնարկեց Հայ Ժողովուրդի բնաջնջման դիւալին աշխատանքին: Պետական համակարգի կողմէ նրբօրէն նախագծուած եւ մանրամասնօրէն ծրագրուած, իսկ մասնայատուկ ուժերու կողմէ դաժանօրէն գործադրուած այդ կոտորածները այլ բան չէին եթէ ոչ 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը, ամբողջ ազգի մը ողբերգութիւնը, Յեղասպանութիւն՝ որուն ականատես վկան հանդիսացաւ բովանդակ մարդկութիւնը, բայց ախսո՛ս, որուն առջեւ մնաց ձեռնածալ, որովհետեւ, ինչպէս պիտի խոստովանէր բրիտանացի դիւանագէտ Տէյվիտ Լոյտ Չորճը՝ «Քարիւղը ակելի ծանր կշռեց քան Հայոց արիւնը»: Արդարեւ, կարելի չէ այլ եզրեր օգտագործելով բնութագրել եղածը: Որովհետեւ, այդ մէկը ոչ այլ ինչ պիտի ըլլար, եթէ ոչ աժան խուճանաւում մը սին դիւանագիտական պղտոր ջուրերուն մէջ եւ անարդար գնահատում մը պատմական անժխտելի իրողութեան:

Աւելի քան մէկուկէս միլիոն հաշուող հայորդիներ, անկարող ծերունիներ, իրենց ամուսիններէն առ յաւէտ բաժնուած կիներ, կեանքի լոյսը չտեսած մանուկներ, դարեր շարունակ կեղեքումի ենթարկուած իրենց զիւղերը պարպելով բռնեցին անապատի ճամբան, Սվազէն Մալաթիա, Կարինէն Երզնկա, Վանէն Պիթիւս եւ Տիարպեթիր, բոլորը նետուեցան Անատոլիի խորերը, հասան մինչեւ Տէր Զօր եւ ենթարկուեցան Յեղասպանութեան:

Մենք այսօր հաւաքուած ենք ոգեկոչելու 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը ի դէմս Հայ Ժողովուրդին եւ մեր յարգանքի տուրքը մատուցանելու ակելի քան մէկուկէս միլիոն մեր մարտիրոսացած հարազատներուն,

Բայց հաւաքուած ենք նաեւ եւ մանաւանդ նորոգելու մեր ուխտը որն է միշտ բարձր պահել մեր պահանջատիրութեան կանչը որը մեր բովանդակ էութեան մէջ եկած ու տեղադրուած է Տէր Զօրի անապատներէն փչող քամիներուն հետ... կանչ մը որու ընդմէջէն մենք կը լսենք ձայնը անապատի մէջ իր հոգին աւանդող Հայ որբուկին կամ ծերունիին...

Այս օրը Հայ Ժողովուրդին համար վաղուց դադրած է սուգի օր ըլլալէ եւ վերածուած է պայքարի ոգին վերանորոգելու օր, ցոյց տալու համայն աշխարհին որ հայ Ժողովուրդը տէրն է իր Դատին եւ հակառակ անտառային օրէնքի հիման վրայ կառավարուող ներկայ միջազգային քաղաքական իրավիճակին՝ կը ձգտի իրեն վայել տճով Արդարութիւն պահանջել բուն «գատապարտեալէն»՝ Թուրքիայէն:

Արիւնարբու Կարմիր Սովետներու եւ յետադիմական գաղափարներու տէր Երիտասարդ Թուրքերու ժառանգորդ Թուրքիան Եւրոպական Միութեան դրան առջեւ կանգնած ի գուր կը փորձէ մուտք գործել այդ ակումբէն ներս: Օսմանեան շալվարը փոխարինելով նորաձեւութեան աշխարհին մէջ առաջնութիւն վայելող արեւմտեան հագուստ կապուտով, իր կարմիր Ֆէսը հանելով եւ «քասքէթ» գործածելով, թուրքը կրնայ միմիայն ինքզինք խաբել: Քանի էութեանն ոչինչ փոխուած է: Մենք կը հաւատանք որ Եւրո-

պան, ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւանց պաշտպան եւ համա-
մարդկային արժէքներու բնօրրանը նկատուող Եւրոպան, կարելի չէ խաբել
կեղծ խոստումներով, մակերեսային բարեփոխումներով կամ ձեւական ժո-
ղովրդավարութեամբ:

Արդարեւ, Բարենորոգումները, ինչպէս Օսմանեան ժամանակաշրջա-
նին՝ նոյնպէս եւ այսօր, միշտ վախ ազդած են Թուրքիոյ վարչակարգին: Այս
անժխտելի իրականութեան փաստը ինքնին թուրքը, ատելութիւնը իր ինք-
նութեան շաղախ դարձուցած, Յեղասպանութենէն 92 տարիներ անց՝ 19
Յունուար 2007-ին, դարձեալ դիմելով իր բնագդին, նորօրեայ նահատակն
այս անգամ՝ հայազգի հերոս «Ակօս» թերթի խմբագիր՝ Հրանդ Տինքն էր:

Ինչպիսի՞ ժողովրդավարութեան վկայագիր պիտի տրուի այս Թուրքիոյ,
որ մարդկային տարրական իրաւունքները, ազատ խօսքի իրաւունքը կը
զլանայ իր իսկ քաղաքացիներուն: Ո՞ր ազատութեան մասին է խօսքը, երբ
Հրանդ Տինքի արիւնը տակաւին չչորցած, հալածանքի կ'ենթարկուին բոլոր
անոնք, որոնք կը յանդգնին Հայոց Յեղասպանութեան մասին արտայայտ-
ուիլ: Ո՞ր քաղաքակրթութեան փայլուն ճառագայթներն են որոնցմէ պիտի
օգտուի Մարդկութիւնը, երբ արիւնոռւշտ գայլի վոհմակները, ամբողջ Եւ-
րոպան՝ Հռոմէն մինչեւ Պրիւքսէլ կը լեցնեն թրքավայել ահաբեկչութեամբ
եւ վայրագութիւններով: Եւ վերջապէս, ինչպէ՞ս կարելի է բարի դրացիա-
կան յարաբերութիւններ մշակել, առանց պատմական արդարութեան վե-
րականգման: Արդարեւ, այս երկու եզրերը կը գտնուին տարբեր բեմահար-
թակներու վրայ եւ անհեթեթ է ապագան փնտռել, անցեալը մոռնալով:

Յեղասպանութեան ոգեկոչման այս երեկոն մեզի համար թող չըլլայ
ատելութեան եւ ոխի զգացումներ հրահրելու առիթ: Այլ ընդհակառակ, ան
թող ըլլայ դէպի փայլուն ապագան ձգտելու խթան. ապագայ մը, ուր ամ-
բողջ հայութիւնը իր բովանդակ շարքերով, իր միասնական ուժերով եւ իր
տարբեր շերտերով, Յեղասպանութեան վրայ խարսխուած գաղափարախօ-
սութեամբ, կը կարողանայ հասնիլ այս փշոտ եւ քարքարուտ ճամբուն միւս
կողմը, ապագայ մը, ուր ինքը՝ Թուրքիան կը սորվի դէմ յանդիման գտնուիլ
ճշմարտութեան հետ:

Այս բոլորէն անդին, հայութեան կը մնայ զօրացնել իր ազգային ներքին
ճակատը, իր բոլոր բնագաւառներով, հեռու մնալով ազգակործան ամէն
մասնակի ու նեղ հաշիւներէ, որոնք կը միտին մեզ շեղեցնել մեր ազգային
կեդրոնական նպատակներէն: Այս զգացումներով հարկ է, որ խոնարհինք
այս յուշակոթողի դիմաց, քանի ժամանակները խիստ դժուար են ու մար-
տահրաւէրները բազմաթիւ: Ամէն տեսակի զգացական այլ ապրում կրնայ
անպայման օգտակար չըլլալ, Հայութեան հարկ է այսօր ամէն ժամանակնե-
րէ աւելի Միասնականութիւն, քանի եթէ անցեալին միասին քալեցինք դէպի
մահուան անապատները, այսօր ալ միասին քալելու ենք Փառք եւ Յաղթա-
նակ կերտելու ճանապարհներով:

ՎԻՔԷՆ ԱՇԳԱՐԵԱՆ
23 Ապրիլ 2008

1700ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Քայլում ենք ահա դարեր ու դարեր,
Եւ Յոյս, եւ Հաւատք, եւ Մէր ենք շնչում.-
Մեր աչքերի մէջ Աստուած եւ Արեւ,
Մեր սրտում սիրող լոյսն է կարկաչում:
Գնանք եղբայրներ՝ ՅՈՅՍԸ ցանելով,
Աշխարհի վրայ լոյս ծածանելով:
Միաբանութեան խաչն է մեր առաջ
Երկարիք ջեռքդ եւ աչքդ բացիր,
Դէմը կապուրակ երկինքն է անծիր:
Գնանք եղբայրներ՝ ՀԱԲԱՏԶ ցանելով:
Աշխարհի վրայ լոյս ծածանելով,
Մեր ուխտը պայծառ, մեր ճամբան է բաց,
Յաւերժ է սիրոյ երթն աշխարհակալ,
Դէ՛ք քայլիք մեզ հետը՝ վերջին հալածուած,
Վերջին ուխտատուր, վերջին առաքեալ:
Եւ Մեծ Յարութեան օրհներգը երգենք,
Յոյսը, հաւատքը եւ Մէրն են փարոս,
Դուք էլ Յարեալի երեւից եկէք
Վերջին նահապարակ, վերջին մարտիրոս:
Գնանք եղբայրներ՝ Ժպիտ ցանելով,
Մարդկութեան վրայ սէր ծածանելով:
Գնանք եղբայրներ ՍԷՐԸ ցանելով,
Աշխարհի վրայ լոյս ծածանելով:

ՌԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆ

«ՅԱՅՐ, ՔՈՒ ՁԵՌՔԵՐՈՒԴ ՄԷՁ Կ'ԱԻԱՆԴԵՄ ՅՈԳԻՍ»

Վերջապէս հասաւ ժամը որուն համար աշխարհ եկաւ մեր Տէրը: Կը տեսնենք Քրիստոս խաչուած երկու աւազակներու միջեւ, հլու եւ հնազանդ իր հօր կամքին: Ինչ անհասկնալի իրականութիւն. տէրը երկնքի ու երկրի, ինչպէս բոլոր էակները, իր կարգին պիտի աւանդէ իր հոգին, մեր հոգիները ազատելու համար:

Քրիստոս աշխարհ եկաւ իր ազատութեամբ Հօրը կամքը կատարելու համար եւ ի սէր մարդ արարածին: Դուն ով մարդ, արդեօք այս սիրոյն ի՞նչ պատասխան տուիր. Մէ՞ր թէ Ապերախտութիւն: Իբրեւ մարդ հիմնուելով մեր մարդկային զգացումներու վրայ, պարտինք սիրոյն պատասխանել սէրով: Իբրեւ քրիստոնեայ սէ՛ր պիտի ըլլայ մեր պատասխանը, եթէ համոզուած ենք մեր քրիստոնէութեան: Իբրեւ կղերական համոզուած կղերական, մեր կեանքը ամենացայտուն պատասխանն է. թողնելով ամէն նիւթապաշտութիւն ու հետեւելով Քրիստոսի Սուրբ Վարդապետութեան եւ օրինակին, պատասխանած պիտի ըլլանք մեր կեանքով այս հարցումին:

Քրիստոս իր հօր ձեռքերուն մէջ աւանդեց իր հոգին: Անխախտ իրականութիւն մը: Սակայն այս սուրբ բառերը լսելով, մենք մեզի հարցնենք արդեօք քաջութիւնը պիտի ունենա՞նք մահուան վայրկեանին այս նոյն բառերը արտասանելու կամ թէ վախով, ահով ու թողով լեցուած պիտի փորձենք փախչիլ այս միակ իրականութենէն, որուն առջեւ բոլոր մարդիկը հաւասար են:

Երանի՛ քեզի ով մարդ,
Երանի՛ քեզի ով քրիստոնեայ,
Երանի քեզի ով կղերական,

Եթէ կարենաս Քրիստոսի քաջութիւնը ունենալ ու «քու Հօր ձեռքերուն մէջ աւանդիս Քու հոգիդ»:

Հ. ԲԱՐՍԵՂ ՎՐԳ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ
Չմմառ, Ապրիլ 2008

ԿԱՐՕՏ ՍԻՐՈՅ ԳՈՐՈՎԱՆՔԻ...

Խորիէ՛ որ դուն կ'ապրիս անկաշկանդ,

Մինչ կան մարդիկ՝

Օղի՛ կարօտ,

Լոյսի՛ կարօտ,

Գորովանքի՛...

Ամէն տեսակ մահ է անդին

Յընորք չունին

Պատրանք չունին

Ահա՛ մարդիկ

Մահանալու վրանգին տակ,

Եւ շնչահեղձ,

Եւ վիրաւոր,

Կարիքն ունինք

Քու անհրաժեշտ օգնութեան:

← ՔԱՉԱՐԵՆՅ

ԿԻՐԹ ՈՒ ՅԱՅ...

Քաղաքակրթութիւնը առանց հերոսութեան -
վկայեր է Աւերիս Ահարոնեան - մեղկութիւն է:
Հերոսութիւնը՝ առանց քաղաքակրթութեան՝ վայրենութիւն:
Կատարեալ ազգը քաղաքակիրթ պէտք է լինի
եւ հերոսական:

Փոխան բարդ բառի պիտի գործածեմ պարզը,
արմատականը - ԿԻՐԹ:

Ու ըսեմ անմիջապէս,
ամէն հայ երիտասարդի նպատակը պէտք է ըլլայ -
ԿԻՐԹ ՀԱՅԸ:

Չի բաւեր ըլլալ կիրթ մարդ -
ըլլալու համար կիրթ հայ,
ըլլալու համար կիրթ մարդ:

Խաղդէական ծագումով այս բառը
կատարելապէս հայացած է,
բնիկ հայ երեւելու աստիճան:

Մեր իղջն ու տենչն է կիրթը
այնպէս սերտօրէն զօրուած տեսնել հայուն,
որ գրեթէ նոյնանիշ դառնայ -
կրթութիւն եւ հայութիւն:

Կիրթ ու հայ:

Աճառեան՝ այդ հսկայ հայկաբանը կը մեկնէ: -
Կիրթ- մարգուած, վարժուած, սորված:

Ուրեմն արմատին մէջ խորացած են
Երեք իմաստներ - մարմնախօսական, բարոյական,
իմացական:

Կիրթը կը բովանդակէ փարբը ճշմարտութեան:
Մտքով մարգուած՝

ծանօթութեան եւ գիտութեան յայտարար է:

Իմացական հրահանգները կ'առաջնորդեն
խորհելու, որոնելու, իրացնելու,
սորվելու ինչ որ ճշմարիտ է ու իրական:

Շարք բան գիտցողը կիրթ չէ փակաւիճ,

եթէ պակսի իրեն գիտակցութիւնը
սահմանաւոր ըլլալուն,
ու փրամադրութիւնը՝ միշտ սորվելու,
դառնալու խելամուտ:

Կիրթ չէ մարդ որ մտքով անշարժացած է
ու լճացած:

Կիրթ մարդու իմացական պատկերը
կը գծէ դասական խօսքը Եզնիկի: - Չմիտքս յստակել,
գիտրհուրդս արբել, գլոյզս շարժանց պարգել:
Ճանչնալու համար ոչ միայն Աստուած,
այլ ինչ որ իրական է ու ճշմարիտ:

Կրթութեան նպատակը չէ դիզել,
այլ հաղորդակից ընել,
փարածել:

Քանքարաքարոյց չի կրնար փաստել
կրթութիւն:

Արիստոտելի համաչայն,
կիրթ մարդու յատկանիշներն են - խորհիլ ու խօսիլ
խօսիլ ու խորհիլ:

Անապատը չէ անոր տեղը,
ոչ ալ կղզին:

Հրապարակը կը քաշէ զինք:
Երեսան կու գայ ազգին մարդկութեան մէջ:

Կիրթը պաշտօն ունի
արտադրելու իրերու արժէքը, իմաստը, գեղեցկութիւնը:
Փոխանցելու բան մը ընկերին, շրջապատին:

Աւելին: Տալու ինքզինք:

Կիրթ մարդու ինքնութեան զանշարանը
պէտք է ճշմարտութեան հետ բովանդակէ
սա հիմնական կէտերը, արժէքները -
Ազատութիւն, Առաքինութիւն, Աստուած:

Բարոյական սահմանին մէջ
պէտք է կիրթ կամք - ուղղուած բարիին,
ինչպէս կիրթ միտք՝ ճշմարտին:

Առանց բարեկիրթ կամքի՝
սոսկ միտքը կրնայ ծառայել վայրենութեան,
գերագոյն աստիճանը անկրթութեան:

Բարիին յատուկ կամքով է որ
կիրթ մարդը չի դառնար խաղալիք յուզումներու,
կիրքերու, մղումներու:

Անզգօն եւ անժուժկալ Եսին սանչումը
անհրաժեշտ է կիրթ մարդու՝ հոգեկան դիմագծին:

Պղատոն հասարակույթ է: -

Կիրթը ունի կամքի ոյժի ներդաշնակելու
բանականութիւն եւ կամք,
մէկը միւսին ենթարկելով:

Անկիրթ է ով որ զուրկ է ներդաշնակող կամքէն,
Թէեւ ըլլայ սրամիտ ճարտասան:

Իսկապէս կիրթ է մարդ,
որուն նիւթապաշտ էսականութեան յաղթած է
աւերարանական սէրը:

Արդ, կը հարցնեն,
կրնա՞յ այդպիսի կիրթ մարդ մը հայ ըլլալ:
Գիտեմ հարցումս վիրատորական է:

Սակայն, այս հարցումը ուղղելու
կը մղեն զիս այն հայերը, որոնք կրթուած կը համարուին,
Եւ որովհետեւ կ'ուզեն երեւիլ կրթուած,
կ'ընթասրանան իրականութեան դէմ -
որ է իրենց ՀԱՅՈՒԹԻՒՆԸ:

Կարծես բան մը պակսէր իրենց կարծեցեալ
կրթութենէն,
եթէ յայտնուէր թէ հայ են:

Այս կ'արժէ ոչ միայն
համբաւի տիրացած անհատներուն,
այլ եւ պարման-պարմանուհիներուն,
որոնք կը բռնեն ճամբան հայակույլ օտարացումի,
իբր միջոց կրթութեան, յաջողութեան, համբաւի:

Այսպիսիներու դէմ կը հասարակեմ անվարան,
կիրթ հայը ի հարկէ կիրթ մարդ է,
բայց իր հայութիւնը ուրացողը ոչ միայն կիրթ հայ չէ:
Այլ կիրթ մարդ անգամ չէ:

Կրթութեան գաղափարին դէմ է
եւ էութեան,
Ժխտել իր ինքնութիւնը:

Ըսի կիրթ մարդ իսկ չէ:

Օթօ Վիլման - այդ գերման դաստիարակ
իմաստասէրը կը գրէ:-

Կիրթ է մարդ,
որ ճշդած է իր դիրքը հանդէպ մարդութեան եւ ազգին
հանդէպ հայրենիքին եւ օտարութեան,
ոչ թէ ժխտելով,
այլ իրեն վայել դիրքին վրայ կենայով:

Արժէք է մարդը - արժէք է նաեւ հայը:

Արժէք է օգարը - արժէք է նաեւ հայրենիքը:

Կիրթ չէ այն մարդը
որ մէկը կը հակադրէ միւսին,
եւ ինքզինք կը նոյնացնէ օգարին:

Կիրթ է այն՝
որ կը համադրէ երկուքը ներդաշնակօրէն,
ու ինքզինք չի բաժնէր ոչ հայէն,
ոչ հայրենիքէն:

Տեսէք ինչ կ'ընէ կիրթ հայը -
Կը սիրէ հայրենիքը,
օգարը կը գնահատէ:
Ազգասիրութենէն կը բարձրանայ
մարդասիրութեան:

Ազգային թերութիւնները կ'ուսումնասիրէ
օգարի առաւելութիւններու լոյսով,
բայց չի շլանար այնքան՝
որ չտեսնէ րոհմիկ առաքինութիւնները:

Հայադրուժը չտես է:
Հերամուր է մուրալու:
Ամէն ինչ որ օգար է կ'երեւի հիանալի, րենշալի,
օրինակելի:

Ինչ որ բնիկ է թերի, խտրան:
Խեղճերը չեն գիտեր՝
որ օգար հիանալին թերեւս փոխառութիւն է
իր իսկ նախնեաց գանձէն:

Մուրացկան եղկելին կիրթ չէ,
ոչ իբր հայ,
ոչ իբր մարդ:

Քանի ուրացող է արժէքներու -
լեզու, գրականութիւն, պատմութիւն:

Լեզու - միայն հնչուն բառ չէ,
այլ հոգի,
բնորոշ դիմագիծ,
փիլիսոփայութիւն,
կարճառօր, ամբողջ մշակոյթ մը:

Կրկնենք խրոխտօրէն մենք ալ
Դաշտենցիին հետ լիաթոք: -
Եկ խօսենք, եղբայր իմ - հայերէն,
Մասիս սարը խօսում է հայերէն:
Այս օգար աշխարհում - եկ սիրենք
մեր լեզուն ջերմօրէն:
Եւ վառենք ու վառուիկը - հայերէն:

Եթէ դաստիարակիչ է պատմութիւնը ընդհանուր,
որքան անլի հայօրէն դաստիարակիչ է
պատմութիւնը հայ ազգի ու հայրենիքի:

Կեանքի ուսուցիչն է պատմութիւնը -
ըսեր է Կիկերոն:

Հայ կեանքի ուսուցիչն է՝ ըսել կրնանք -
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ:

Դէտորո ալ անլի կը զօրացնէ:-
Նոր սերունդին կը փոխանցէ պատմութիւնը՝
հիներո իմաստութիւնը եւ փորձառութիւնը:

Կ'անելցնենք մենք:-
Հայոց պատմութիւնը հայ նոր սերունդին
պիտի փոխանցէ հայ իմաստութիւն ու փորձառութիւն,
հայ հայեացք ու հոգեբանութիւն:

Հայոց պատմութիւն չի նշանակեր
չոր թուական եւ անուն,
այլ բեղուն եւ զեղուն կեանքը
հայ գրականութեան ու զեղարուեստի
հայ ձգարումներու եւ իրականութիւններու:

Հայոց պատմութեամբ ու գրականութեամբ
թրծուած՝ խարխախ պողպատեայ՝
կրնայ ծանրաբեռնուիլ օտար բերքերով
առանց ընկղմելու՝ Հայր կիրթ:

Ինչպէս կիրթ մարդը,
նոյնպէս կիրթ հայը,
պէտք է ունենայ նաեւ մարմին կիրթ:

Մարմնակրթութիւնը նոր յարկանիշ մըն է
հայութեան,
նոր բերդ մըն է հայապահպանումին:

Հայերը չունին կարիք
օտար մարմիններով հմայուելու:

Պատմութեան հայ դիցազները
կու տան մտաւորիպարը առողջ մարմնամարզի:

Հայ պատմագիրները, թէեւ հոգեւորական,
չեն մոռնար շեշտել մարմնական յարկանիշները
հայուն,

արդիւնք հրահանգներու եւ մարզանքի:

Պատմական չէ Հայկը,
բայց որքան իրական է ու ազդեցիկ անոր պարկերը՝
քաջադէդ, հաստաքազուկ, անչնեայ:

Պատանիներու համար

մարմնակրթական մրցումի հրաւեր կը կարդան
հայ գուսանները,
երբ կ'երգեն Տիգրանը թիկնաւէտ, առոյգաբարձ,
գեղեցկագոյն:

Հայ մարմնակրթական գաղափարականը
կը մնայ անփոփոխ նաեւ այսօր - կայրառ, առոյգ,
գեղեցիկ:

Հակառակ շարախօսութեան եւ զրպարտութեան,
նաեւ Քրիստոսի կրօնը մեծագոյն նպաստը կը բերէ
մարմնին:

Տալով անոր հոգի առողջ ու շնորհալի,
կրկնապէս ուժեղ ու գեղեցիկ:

Արգելք է՞ միթէ հայ պարմութիւնը,
հայ մշակոյթը,
հայ լեզուն - օրար պարմութիւններու,
մշակոյթներու, լեզուններու: Բնաւ,

Հայ մարդը,
հայ վարժարանը նուա՞ց կիրթ է,
որովհետեւ կիրթ հայ է: Երբեք:

Կարծեմ, իրաւացի պիտի ըլլայ հասարակեւ,
որ աւելի կիրթ է,
քանի իրացուցած է բնիկին հետ՝
օրարը:

Այն ո՞ր նկարիչ-գծագրիչ է,
ո՞ր ճարտարապետ-երաժիշտը,
ո՞ր բնագէտ-աստղաբաշխը,
ո՞ր բժիշկ-փաստաբանը որ նուազ արժէք ունենայ
համաշխարհային կաճառին առջեւ,
պարզապէս որովհետեւ հայ է
ու կը խօսի ոչ միայն քանի մը լեզուներ,
նաեւ ու նախ՝ ՀԱՅԵՐԷՆ:

Մշակոյթի ոչ մէկ ճիւղ խափան է
հայ լեզուի ու մշակոյթի:

Կիրթ մարդը արգելք չէ հայուն կիրթ,
կիրթ հայու՝ կրկնապէս կիրթ մարդ է:

Օրարութեան մէջ մնալ հայ
եւ իբր մշակոյթի արժէք պարտադրել ինքզինք՝
նաեւ օրարին:

Ամէնէն հրաշալի քաջագործութիւնն է կիրթ հայուն,
որ պէտք է իլլէ հիացում,
պէտք է շարժէ նախանձ,

աւելի քան շար մը հերոսական կոչուած դրուագները
քաղաքական պայմանութեան:

Հայութեան եւ Հայուն
խորհրդանիշն է Արարար - Մասիսը:
Գրնուելով քաղաքական պայմաններով
օտար հողամասի վրայ,
կարծես վիթխարի գրգիռ եւ օրինակ՝
մնալու կիրք հայ օտարութեան մէջ,
եւ հայ կրթութեամբ բերելու կարելոր նպաստ մը
նաեւ հիւրընկալ երկիրներու եւ ժողովրդներու:
Այս իմաստով կը մէջբերեմ հպարտօրէն
Շիրազի սա քանաստեղծական փողերը:-
Քանի լեզու գիտնաս, որդիս,
այնքան մարդ ես, իմացիր,
ամէն լեզուով, ամէն ազգի կրծքին վարդ ես,
իմացիր,
բայց մայրենիդ թէ անաղարտ սոխակ պահես
վարդերում,
սարերի մէջ, ազգիդ համար Արարար ես,
իմացիր...:

Չկռահեցի՞ք:
Կիրք եւ Հայ...:
Այդ պէտք է ըլլայ նշանաբանը -
բոլոր ժամանակներու բոլոր հայ երիտասարդներու:

Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

ՃԱՆԱՊԱՐՅ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ

Կատարելութիւնը՝ է սէրը ու մտերմիկ միութիւնը Աստուծոյ հետ: Ինչպէ՞ս ձեռք բերել զայն: Հարցը հոս է:

Առաջին միջոց - պաղատանքին խնդրուածք, որովհետեւ գերազանցապէս ճրի տուրք է: Առանց իմ ոչինչ կարէք առնել, պատգամած է Քրիստոս: Հետեւաբար իր օգնութեամբ կրնանք հասնիլ գերագոյն կատարելութեան - սիրել Աստուած:

Ապա պէտք է հիմնովին մաքրել, գտել մեր ամբողջ ներաշխարհը: Ստոյգ է որ սէրը Աստուծոյ հեղած է մեր սիրտը՝ մկրտութեամբ, եւ այդ հեղեղեալ սէրը կրնայ ածիլ Խորհուրդներով ու բարի գործերով:

Բայց նաեւ՝ նոյնքան ստոյգ է, որ մեր մէջ կայ սկզբնական մեղքի արգասիքը - Եսին ցանկութիւնը: Այդ պատճառով ալ՝ հեղեալ սէրը ղժուարաւ կը վերածենք ներգործական սիրոյ: Որովհետեւ ցանկութիւնները անհատին՝ ճնշում կը բանեցնեն, ու մենք փոխանակ սիրելու Աստուած, կը սիրենք արարածները: Ուրեմն, ցանկութիւններով արատաւոր՝ մեր ներքին աշխարհը պէտք է մաքրուի:

Զտուժը կը կատարենք կամ՝ մենք Աստուծոյ օգնութեամբ եւ կամ՝ Աստուած՝ մեր գործակցութեամբ:

Առաջին պարագային ներգործական է գտուժը, երկրորդ պարագային՝ դրական:

Մենք անձամբ կատարելու ենք գտուժի գործը: Կարելի եղածին չափ մաքրենք, գտենք մեր դիտաւորութիւնը: Մեր խօսքերը ու գործերը ազատենք բնական մղումներու ազդեցութենէն: Թէեւ գերբնական զաւակներն ենք Աստուծոյ, սակայն յաճախ՝ բնական, աշխարհային շարժառիթներով կը գործենք: Այո, կը խօսինք կամ կը գործենք զրգուտած, յուզուած, վախէ, համակրութենէ, նախանձէ, դիւրասիրութենէ: Աւելին, կը խօսինք կամ կը գործենք փառասիրութենէ, որպէսզի համբաւ վաստկինք:

Այդ բոլորը անազնիւ շարժառիթներ են, որոնք կ'արատաւորեն մեր դիտաւորութիւնը, ու մեզ Աստուծմէ կը հեռացնեն:

– Միակ դիտաւորութիւնդ կ'ըլլայ,- կը հաստատէ նմանութիւն Քրիստոսին,- ինծի հաճոյ ըլլալ: Որովհետեւ այդ է կատարելութեան հիմնական սկզբունքը:

Սուրբ Իգնատիոսի յորդորը իր աշակերտներուն այս էր: - Ամէնքը ջանան ուղիղ դիտաւորութիւն ունենալու, ոչ միայն վիճակի, այլ եւ ամէն մէկ իրի նկատմամբ: Ամենալրջութեամբ պէտք է ձգտիլ մէկ բանի՝ ծառայելու

եւ հաճոյ ըլլալու աստուածային բարութեան: Ամէն բանի մէջ Աստուած պէտք է փնտռեն, արարածներու սէրէն հրաժարին, այնպէս, որ իրենց ամբողջ սիրտը Արարչին դառնայ, բոլոր արարածներու մէջ զիրենք սիրելով, ու իրեն մէջ՝ զամենքը՝ իր սուրբ եւ աստուածային կամքին համաձայն:

Լաւ միտ դէպք: Ամէն բանի, ամէն իրի մէջ: Ի գուր չէ շեշտուած: Որովհետեւ վիճակի կամ կոչումի նկատմամբ ընդհանրապէս, ամէնքս ուղիղ դիտաւորութիւն ունինք, որ է՝ փաստել, թէ կը սիրենք Աստուած: Բայց մանրամասնութիւններու մէջ, դիւրաւ կը շեղինք այս նպատակէն, կը մոռնանք անգամ:

Ուխտերով մեր կեանքի ամբողջ ծառը կը նուիրենք Աստուծոյ, բայց սպա, պտուղներէն կը գողնանք, մեր Եսին հաճոյքին:

Ձանանք պատասխանել սա հարցումներուն: Ինչո՞ւ կը սիրենք սա գործը, տեղը, պաշտօնը: Որովհետեւ Աստուծո՞յ հաճելի է, Աստուծո՞յ փառք կը բերէ, թէ՛ մեզի:

Ինչո՞ւ կ'ուրախանանք սա դէպքով: Յաջողութեամբ: Որովհետեւ Աստուծո՞յ փառքին վնասեց: Աստուծո՞յ կամքին հակառակ էր, թէ՛ մեր:

Ի՞նչ է շարժօնը մեր խօսքերուն,- վիրաւո՞ր Եսը:

Միայն այսպիսի քննութեամբ կրնանք գտնել մեր ձգտումներուն վախճանը - Աստուած է՝ թէ մեր ողորմելի Եսը:

Աստուած դրած է մեր բնութեան մէջ, որ իրարու մէջէն մեր օգուտը փնտռենք, եւ ուրախանանք, խնամք տանինք մեր հոգեկան եւ մարմնական բարօրութեան, ու Աստուծոյ տուած տաղանդը գործածենք մեր բարիքին, մեր հաճոյքին համար, առանց արտաքսելու Աստուած, սակայն: Մեր պարտքն է պահել մեր առողջութիւնը, ու կազդուրուիլ, որպէս զի մեր պարտականութիւնը լաւապէս կատարենք:

Բայց զգոյշ, ուղիղ դիտաւորութիւն անհրաժեշտ է այս բոլորին մէջ, որովհետեւ դիւրաւ կը խարդախենք զայն, կը հեռանանք անկէ, միշտ մխիթարուելով՝ թէ ուղիղ է: Շատ անգամ մեր հանգիստը կը փնտռենք, մեր Եսը կը փայփայենք, եւ սակայն, կ'ըսենք, որ Աստուծոյ համար կ'ընենք ամէն ինչ:

Կը հաւատանք, որ արտասանեցինք մեր բերանով սա սիրուն խօսքը, իւրաքանչիւրս,- Աստուած իմ, ամէն բան քեզի կը նուիրեմ: Բայց գործնականին՝ Աստուծոյ նուիրած այն բանին մէջ, միայն մեզմով գոհ կ'ըլլանք, մեզ կ'ուզենք գոհացնել: Հարկ է, սկիզբէն Աստուծոյ, մեզ կ'ուզենք գոհացնել: Հարկ է, սկիզբէն Աստուծոյ ուղղենք գործը, եւ Աստուծոյ ուղղուած պահենք: Աստուծոյ տեղ ինքզինքնիս դնենք: Աշխարհի իրերը կրնանք գործածել հանգիստ խղճով միայն այն ատեն, երբ անոնց մէջ իրապէս Աստուած գտնել է նպատակնիս: Տիրապետող շարժօնը՝ Աստուած է, ու հիմնուած՝ Աստուծոյ վրայ:

Այս կերպ վարողը միայն՝ կը դիմէ դէպի գերագոյն կատարելութիւն, ու այն՝ անխառն սիրով: Եւ այդ սէրը անխառն է՝ ու գուտ, երբ արթուն կը հսկենք մեր ներքին յուզումներուն, ձգտումներուն, միտումներուն:

Անշուշտ, դիւրին գործ չէ այդ, գլուխ հանելը առանձին, բաւականին դժուար, որովհետեւ Եսամոլութեան արմատները խորունկ են մեր մէջ:

Այս պատճառով Աստուած կ'առնէ ձեռք՝ գործը: Ինքը կը գտէ մեզ, ինքը կը մաքրէ մեզ: Եւ ահա սաստկացնէ փորձութիւնները աւելի մեզ բուրեղացնելու համար:

Թոյլ կու տայ, որ անարդար վարուին մեզի հետ մեծաւորները, գրպարտուին մեր բարի գործերը, ու մեր դիտաւորութիւնները սխալ հասկցուին, մեկնուին, մեզ հաճոյ պաշտօններէ կամ առաքելավայրէ հեռացնեն, աննշան գործերու կանչեն, նախանձի ու չարութեան զօժառնանք:

Կրնայ այս իսկ թոյլ տալ, որ մեր թերութիւնները աւելի բազմանան, տկարութիւնները աւելի աչքի զարնեն, մինչեւ իսկ մենք զմեզ անուղղայ զգանք:

Այս բոլորը միջոցներ են մեզ սատարելու մեր եսի կապանքներէն, ու մեզ մաքուր ու անխառն սիրով կապելու միայն Աստուծոյ:

Այս տեսակի փորձութիւններու մէջ, աշխատինք ճանչնալ Աստուծոյ նպատակը: Երբեք չըսենք՝ թէ մեզ չեն սիրեր, կը նախանձին, կ'ուզեն մեզ անարգել, խոնարհեցնել, մեզի հանդէպ արդարութիւն չկայ, մեծաւորը իր սիրելիներուն՝ ամէն բանի աչք կը գոցէ: Այս է եղբր վանքը, վանական սէրը, այլ ջիղերս քայքայեցին: Կը դառնան, ու կը դառնացնեն իրենց շրջապատը:

Ստոյգ է այսպիսի բաներ պէտք չէին պատահել վանքերու մէջ: Բայց վանքերն ալ սա անիծուած աշխարհին մէջ են, ու վանքի բնակիչները՝ տկար ու խեղճ արարածներ: Հոն ալ կը բուսնի փուշ ու տատասկ: Հոն ալ մոռտ կը գործէ Կայէնի հոգին: Արդեօք մեր մէջն ալ մտած չէ՞: Բաց աստի, մենք կրնանք ինքզինքնիս պաշտպանել ոչ կրքով ոչ վրէժխնդրութեամբ, ոչ ալ որսակալ ընթացքով, այլ Քրիստոսի ոգիով, ու մնացածը թողուլ՝ Աստուծոյ:

Միտքերնիս բերենք Քրիստոս, որ անիրաւ տեղ դատապարտուեցաւ, ձաղկուեցաւ, խաչուեցաւ, բայց ներեց, թշնամիներու համար՝ աղօթեց:

Դժուար է, ու շատ դժուար, յայտնի անիրաւութեան դէմ, չըմբոստանալ, չծառանալ, բայց յայտնի անիրաւութիւնները՝ Աստուծոյ ծրագրիին մէջ՝ ապահով ճամբայ են դէպի զուտ, անխառն սէրը Աստուծոյ:

Քրիստոս չըսաւ՝ ի՞նչպէս համբերեմ Յուդայի մատնութեան, Պետրոսի ուրացութեան, Պիղատոսի վատութեան, Կայափայի կեղծաւորութեան, ամբոխի ապերախտութեան: Այլ ըսաւ. - Չիմե՞մ բաժակը, զոր հայրը ինծի կ'երկարէ:

Հարազատ քոյրերս, մենք ալ կրօնաւորական կեանքի դժուարութիւններու բաժակը՝ իբրեւ երկրաւոր հօրմէ հրամցուած՝ ըմպենք սիրով - յաւիտենական երջակութեան համար:

Հ. ՍԱՀԱԿ ԵՊՍ. ԿՈԳԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՍՈՒՏՔԸ ԵՐՈՒՄԱՂԵՄ

Ծ Ա Ղ Կ Ա Ջ Ա Ր Դ

«Մեծապէս ուրախացիր, Սիոնի բնակիչ, ցնծութեամբ աղաղակէ՛, բնակիչ Երուսաղէմի, ահա թագաւորդ քեզի կու գայ արդարութիւն եւ փրկութիւն բերելու: Որպէս հեզութեան նշան՝ նստած իշու վրայ, դեռ մատղաշ աւանակի վրայ»:

ՉԱԲ. 9/9

Ծաղկազարդ է, ծաղկեալ առաւօտ մը Քրիստոսի եկեղեցիին կամարներուն ներքեւ, հաւատացեալ ժողովուրդին եւ իր մատղաշ զարդարուած անմեղ մանուկներուն ներկայութեամբ: Որովհետեւ, Ծաղկազարդի յիշատակն է Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքին, որ կը զուգադիպի Ս. Յարութեան տօնը կանխող Կիրակին:

Յնծութիւն եւ ուրախութիւն ամենուրէք: Մեծ Պահքի եւ Քառասնորդացի անցնող վեց շաբաթներու տեւողութեամբ՝ եկեղեցոյ սեւով ծածկուած Ս. Խորանը կրկին կը բացուի, Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքին եւ տաճարի մաքրագործման յիշատակին: Այսօր այն օրն է, երբ Յիսուս Բեթանիայէն ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ, ուր ժողովուրդի խուռներամ բազմութիւն մը կը սպասէր Իրեն:

Յիսուս աշակերտներ կը զրկէ մերձակայ Բեթփագէ եւ կը պատուիրէ, որ այնտեղ կը գտնէք աւանակ մը, առէք եւ ինծի բերէք. (Տես Մատթ. 21/2): Երբ աշակերտները պատուէրը կը գործադրեն, տէրը հարց կու տայ, թէ ինչո՞ւ համար կ'ողզէք առնել այդ աւանակը: Պատասխանը կ'ըլլայ, ըստ Տիրոջ հրահանգին՝ «Մեր Տիրոջը պետք է» (Մատթ. 21/3): Եւ այսպէս Յիսուս աւանակի վրայ նստած կը մտնէ Երուսաղէմ: Արդ, այրեր, կիներ, երիտասարդներ եւ մանուկներ, ձեռքերուն մէջ ձիթենիի ոստեր եւ արմաւենիի ձիւղեր կամարացուցած - խորհրդանիշ յաղթութեան եւ խաղաղու-

Թեան - կը սկսին իրենց հանդերձները տարածել Քրիստոսի քայլերուն առջեւ, ի նշան հպատակութեան ու խաղաղութեան ի մի բերան աղաղակելով.
«Ուլասաննա օրհնեալ ես դուն որ կու գաս
Ասրուծոյ անունով Թագաւոր Իսրայէլի»:

Եւ այսպէս Յիսուսի յաղթական մոլտքով կը սկսի իր առաքելութեան առաջին շաբաթը, որու ընթացքին դէպքերը պիտի ընթանան այնքան պարզ յանգելով Գողգոթայի ողբերգութեան:

Արդարեւ, Յիսուս ականակի վրայ նստած սուրբ Քաղաք մոլտքով՝ կ'իրականացնէր Չաքարիայի մարգարէութիւնը (Տես Չաք. 9/9):

Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մոլտքը եւ տաճարին մաքրագործումը, կը յայտնէ մեզի հետեւեալ նշանները.

ա.- Ծաղկազարդը տօնն է հոգիի եւ հաւատքի վերածաղկման:

բ.- Տաճարին մաքրագործումը, մեր հոգիներուն մաքրագործումն է, վերածելով զանոնք տաճար սուրբ Հոգիին:

գ.- Մանուկներու ներկայութիւնը եւ անոնց աղաղակը, օրհներգութիւնը որպէս յաջորդող սերունդ, Քրիստոսը վկայող իբրեւ Աստուծոյ Որդին եւ Օծեալը:

Արդարեւ Քրիստոս Երուսաղէմ իր յաղթական մոլտքով՝ այսօր անգամ մը եւս մոլտք կը գործէ մեր հոգիներէն ներս, կը զօրացնէ մեր հաւատքը, կը լուսաւորէ եւ կը պայծառացնէ մեր խաւարամած մտքերը:

Ծաղկազարդի գարնանային այս ցնծութիւնը եւ պայծառութիւնը մեծագոյն ցուցանիչն է մեր սրտերուն եւ հոգիներուն մաքրագործման եւ սրբագործման: Յուցանիչն է մեր սրտերուն եւ հոգիներուն ուրախութեան եւ բերկրանքին, նա մանաւանդ սիրուն մանուկներուն լուսաշող դէմքերուն ներկայութեամբ, որպէս վկայութիւն ճշմարիտ Լոյսին՝ Քրիստոսի: Անոնց սպիտակ հանդերձներով ներկայութիւնը ներքին անմեղութեամբ եւ ձեռքի ճերմակ մոմերը զարդարուած ձիթենեաց ճիւղերով՝ տիրապէս կ'ապացուցանեն Քրիստոսի բերած եւ շնորհած մաքրութիւնը մեր տաճարներուն:

Ծաղկազարդի այս տօնի ցնծութիւնը հրաւէր մըն է, ընդունելու Յիսուս Քրիստոսը փոխան ձիթենիի ոստերու եւ արմաւենիի ճիւղերու հաւատքով ծաղկուն ոստեր ընծայելու իրեն՝ իբրեւ խորհրդանիշ մեղքի ու մեղանշումի դէմ, մեր յաղթութեան եւ մեր մէջ եւ մեր շուրջը, մեր ջանքով ու աշխատանքով իրագործելի խաղաղութեան: Այն ատեն միայն մեր հոգիներէն վճիռ կը փխի եւ մեր շրթներուն վրայ քաղցրօրէն կը ծաղկի օրհնութիւնը տիեզերքի Թագաւորի «Օրհնեալ ես Դուն որ եկար Թագաւոր տիեզերքի»:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Ա.- Ծաղկագարդի նախօրէին, Շաբաթ օրը, որ է յիշատակ Ղազարոսի յարուժեան, Հայոց Եկեղեցին երեկոյեան ժամերգութեան ընթացքին՝ «Որ Վերօրհնիս» շարականի երգեցողութեամբ, կը բանայ Ս. Խորանին վարագոյրը, որ ծածկուած էր վեց շաբաթներու տեւողութեամբ Մեծ Պահլի - Քառասնորդացի առիթով. ի պատրաստութիւն յաջորդ օրուայ Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքին եւ տաճարին մաքրագործման յիշատակին:

Բ.- Ծաղկագարդի Կիրակիի առաւօտուն, կը մատուցուի Ս. պատարագ, եւ կը կատարուի ճիթենեաց կամ ուռիի ճիւղերու օրհնութիւնը եւ կը բաժնուի հաւատացեալներուն: Պատարագի աւարտին կը կազմուի թափօր, երգելով «Թագաւոր գոլով...» շարականը եւ եկեղեցւոյ չրջափակէն ներս կը կատարուի «Անդաստան» օրհնութիւնը աշխարհի չորս կողմերուն:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԱՅՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքը:
- Ծառագարդար:
- Արմաւենիի Կիրակի:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ծաղկագարդը տօնն է նաեւ բոլոր անոնց, որոնք «ՈՎՍԱՆՆԱ» կամ «ՈՎՍԱՆ» կը կոչուին:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

- Ծաղկագարդի օրհնուած ոստերը տուն կը բերէին, խնամքով կը պահէին գործածելու որպէս յուռութք «կախարդական գարդ չար աչքի դեմ»: յատկապէս մորբիկի եւ փոթորիկի ընթացքին: Իսկ սենեակէն ներս պահած ոստը կը համարէին որպէս բարիք եւ պաշտպանութիւն ապահովող նշման մը:

- Ծաղկագարդի տօնին, նշանուած աղջիկներ եկեղեցւոյ մուտքին իրենց նշանածին ծնողքէն կը ստանային զարդարուած գեղեցիկ սպիտակ մոմեր, Պատարագէն ետք մասնակցելու թափօրին: Իսկ Պատարագէն ետք, նոյն տարին պսակուած բոլոր հարսերը, եկեղեցիէն ելլելով ուղղակի իրենց հօրը տունը կ'երթային, որպէս առաջին այցելութիւն ծնողաց: Եւ եթէ մէկը Ծաղկագարդէն առաջ գացած ըլլար այդ հարսը ընդհանուրին բամբասանքին կ'ենթարկուէր:

- Ծաղկագարդի կէսօրին, երեխաներ Ս. Զատկուայ ձու հաւաքելու միտումով, ձեռքերնին օրհնուած ճիւղեր առած տունէ տուն կը շրջէին կարկազան ճօճելով եւ երգելով հետեւեալը.

Կարկաչայ, կարին կաչայ,
Սեւ հաւը բնին կածայ,
Իմ փայ կարկաչէն տուէք
Ով որ չտայ իմ երկու ձուն
Մուկն ու կատուն իրենց թթուն,
Ով որ տայ իմ երկու ձուն՝
Աստուած պահէ իր փեսացուն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ» Հատորէն

Եւ ընտանիքներ, որոնք հաւաքուած կ'ըլլային ճոխ սեղաններու շուրջ, ուրախութեամբ կը դիմաւորեն երեխաները եւ տանտիկիները մէկական ձու տալով իւրաքանչիւրին ճանապարհ կը դնեն:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ովսաննա, եբրայերէն կը նշանակէ «Փրկէ»: Յետագային դարձած է հրապարակային ուրախութեան, փառաբանական կոչ:

Զիթենին՝ իմաստութեան, խաղաղութեան եւ փառքի խորհրդանշան է:

Կարկաչան՝ ձեռքի ափի չափ կոթով տախտակ մըն է, որուն երկու կողմերը կախուած կ'ըլլան տախտակի կտորներ, շարժելու ժամանակ տախտակները իրարու զարնուելով ձայներ կը հանեն:

Հետեւաբար, կարկաչան տախտակէ կազմուածք մըն է, որ շարժելով զօրաւոր ձայն կը հանէր, անցեային կը գործածէին ուրախ առիթներու:

ԿՈՄԵՏՍՄ ՔՀՆՅ. ՏԱՏԱՂԼԵԱՆ

ՅԱՐԳԱՆՔ ՎԱՍՏԱԿԱԻՈՐԻՆ

Յարգանքը անկեղծութիւն ըլլալու է...:

Յարգանքը միայն ազնուութիւնն է, այլեւ երախտագիտութիւնն:

Յարգանքը միայն երախտագիտութիւնն է, այլ նաեւ շնորհակալասութիւնն է: Յարգանքը միայն շնորհակալասութիւնն է, այլ նաեւ ակնածանք է: Ու մանաւանդ՝ մեծարանքին ճիշդ դրսեւորումն է:

Անկեղծ յարգանատուութիւնը կը հրճուեցնէ թէ՛ յարգատուն եւ թէ՛ մեծարեալը: Երկրորդին մեծարանքով՝ առաջինը կը բարձրանայ եւ կը ջանայ նմանիլ յոբելեարին, որ յիսուն տարիներու վաստակով ծանրաբեռնուած է:

Յարգանք պարտադրող այսպիսի վաստակաւորի մը «մշակութային գործունէութեան ոսկեայ յոբելեանը» տօնանշուեցաւ Կիրակի, 20 Յունուար 2008-ին: Վաստակաշատ գլխատառ Յոբելեարն էր Գերյ. Հ. Անդրանիկ Մ. Վ. Կռանեան, որուն անունն ու գործը հանրածանօթ են իրանանահայութեան:

Զարմանալի է, այլ ընդհակառակն՝ սպասելի ու զնահատելի էր այս իրողութիւնը, որ յոբելեանական հանդէսին ելոյթ ունեցողները չէին միայն հայեր, այլ նաեւ ու մանաւանդ աշխարհական եւ կղերական անձնաւորութիւններ, որոնք իրաւացիօրէն վեր հանեցին ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ եւ ԼԻԲԱՆԱՆԱՊԱՇՏ Յոբելեարին արժէքն ու արժանիքը, աննահանջ դիրքն եւ նպատակադէտ գրիչը:

- Հ. Կռանեան Զմմառեանն է միաբանասէր:
- Հ. Կռանեան Քահանան է քրիստոսասէր:
- Հ. Կռանեան Ղեկավարն է պատանեկերտ...:
- Հ. Կռանեան Հովիւն է համայնքաշէն:
- Հ. Կռանեան Դաստիարակն է հոգեսէր:
- Հ. Կռանեան Բարոյախօսն է սերնդավառ:
- Հ. Կռանեան Լրագրողն է խղճաբախ:
- Հ. Կռանեան Խմբագիրն է մասիսագէն:
- Հ. Կռանեան Թատերագիրն է ազգասէր:
- Հ. Կռանեան Բառարանագիրն է օգտաշատ:
- Հ. Կռանեան Հեղինակն է հոգեմտաւոր:

Յարգանքի անկեղծութեամբ եւ զնահատանքի շնորհակալասացութեամբ խոնարհելով Հ. Կռանեանի՝ Վաստակաւորին ու Յոբելեարին գործին առջեւ՝ Վիեննական Միութարեան հասուրբ սովորութեամբ կը գոչեմ. «Կեաց Դու ամս յամայր»:

ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ

ՀՐԱՆՂ ՏԻՆՔԻՆ

Արժանթինահայ հանճարեղ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեան, «ԱԿՕՍ»ի անմոռանալի հիմնադիր Հրանդ Տինքի յիշատակին ձօնած այս քերթուածը, յանձնեց կողակիցին՝ Ռաբէլ Տինքին, Սպանիոյ մէջ տեղի ունեցած Հրանդ Տինքին Միջազգային Լրագողներու Միութեան կողմէ պարգեւատրման հանդէսին:

«ԱԿՕՍ», 12 . 01 . 2008

*Գաղափարի զինուոր էիր
Խաղաղութեան պարզամի
թափանցիկ աղանի.
եղար հայ պայքարի բանակ
Իրաւունքի ճառ
դրոշմուած՝
ժամանակի ցմենդի վրայ:*

*Եղար մի նոր եղեռն
եւ Արարարի հզօրութեամբ
մեր սրտի հսկան
որ յոյսի շող հաստատես մեր մէջ:*

*Ո՞վ կարող է կշռել արցունքներդ
եւ չափել
վախով ծրարուած շունչը թոքերիդ*

կամ սրտիդ գուշակումը մութ
Որ դեռ փրոփում է
փիեզերական ուժի ալիքներում:

Բայց դու հեռացա՞ր արդեօք:
Կարո՞ղ եմք ասել որ չկաս
երբ փեսիքի նման
մեր հետ ես քայլում ձեռք - ձեռքի:

Մեկնումը քո՝ մահ չէր այլ կեանք ազգային
որ իբրև սերմ գիտակցութեան
սրսկուեց
մեր նոր սերնդին
ու մեր գոյութիւնը
եւ ակունքը երազների շեփորեց աշխարհին:

Ասրծոյ ծրագիրով
անմահութիւնդ ծնուեց:
Ու մենք բոլորս
ՀՐԱՆԴ ՏԻՆՔ դարձանք
դու՝ առաջնորդ:

Դարձանք ՀՐԱՆԴ ՏԻՆՔ
իսկ դու...
դու դրօշակը մեր:

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
2007

Կ Ա Ր Օ Տ

Մենք այս փարեյիցի ամեն օր ըրինք...

*Երբ մենք ամեն օր դուռը զոցելով սենեակին մէջ
առանձնացանք, քեզի հետ աչք-աչքի եկանք եւ ջանացինք
հասկնալ ի՛նչ զգացած, ի՛նչ միածած, ի՛նչ ուզած ըլլալդ:*

*Երբ մենք մեզի հետ գլուխ-գլխի մնացինք, իրականութեան մէջ քեզի
հետ եղանք...*

*Մեկնելուդ փարեյիցը կ'ըսեն, բայց մենք երբեք չկրցանք մտածել թէ
դուն գացած ես...*

Մենք չկրցանք մեզ՝ կենդանի, քեզ՝ անկենդան համարել:

*Քեզ կենդանի կարենալ պահելու համար՝ մենք մեզ անկենդան անգամ
դարձնել ուզեցինք...*

Միևնորեք քեզ կենդանի պահելն էր մեր կենդանի մնալու գաղտնիքը...

*Քու կեանքով լի նկարիդ շուքին փակ՝ հասկցանք իրօք քու կենդանի
ըլլալդ եւ մենք՝ հերթի սպասող շուքեր:*

Այս զգացումը հանգստութիւն փոռաւ մեզի...

*Հաւանաբար այս պատճառաւ չկրցանք լրիւ ըմբռնել մեկնելուդ
փարեյիցը:*

Կ'երեւի գացողը մենք էինք ու այլեւս մօտդ գալ կ'ուզենք:

«ԱԿՕՍ»

ՔԵԶԻ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Գարուններդ պիտի ծաղկին դարձեալ,
Լաւ օրերդ պիտի ծնին դարձեալ.
Չմեռէն ետք, դժոխքէն ետք,
Պիտի ծլի ծառդ կենաց.
Քեզի համար, Հայաստան:

Ամառներդ պիտի երգեն դարձեալ,
Պիտի կերպեն ճիգով յաւելեալ.
Սարսափէն ետք, սոսկումէն ետք,
Հողիդ վերքը թող դարմանէ Ասրուած.
Քեզի համար, Հայաստան:

Աշխարհը կանգնեցաւ,
Աշխարհը քովդ կեցաւ.
Ազգ մոռցուած, քեզի համար
Իր սիրտը փռուաւ,
Թեւերը բացաւ:
Գարուններդ պիտի ծաղկին դարձեալ:

Թէ անիծես իսկ բախտդ
Կ'ուզեմ փեսնել աչքերուդ`
Հայաստան,
Կայծ մը յոյսի,
Բոց մը, փենչ մը
Կեանքդ գրկելու`
Ամբողջութեամբ, հաւատքով:
Գարուններդ պիտի ծաղկին դարձեալ
Հայաստան:

ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐ

ՄԱՅՐՍ ՎԱԽՃԱՆԵՑԱԲ...

Ո՛վ Բարեկամ,
Քեզի պիտի տամ
գո՞յժ մը ահաւոր...,
բօ՞թ մը անտարբեր...,
թէ աւերի՞ս մը ուրախալի...:

- Մա՛յրս վախճանեցաւ...:

Իր երթուղին փառքով պասկեց,
իր փառքի օրերը սկսան յաղթականօրէն:

Մա՛յրս ալեհեր էր,

դարչաւ նո՛ր ոյժ...,
նո՛ր կեանք...,
նո՛ր ժպիտ...,
նո՛ր սէր...:

Ո՛վ Բարեկամ,
ա՛լ չի սպասեր վաղուան յոյսին,

վաղուան արեւածագին,
օրուան արշալոյսին,

քանի աւն, Մա՛յրս, արդէն կ'սպրի

Յոյսը լոյսին,
Արեւագալը օրուան,
Արշալոյսը յաւերժին:

Հո՛ն չկայ այլ եւ մարդկային հեծեծանք:

Հո՛ն կան երգեր ցնծութեան:

Հո՛ն որքա՛ն ժպիտ կը ծաղկի,

այնքա՛ն արցունք կը ցամքի:

Ո՛վ Բարեկամ,
Մա՛յրս ալեզարդ,
ա՛լ է աշխոյժ ու կայտառ,
ա՛լ է եռանդուն եւ նորոգ՝

կ'սպրի լիալոյսը պայծառագեղ...:

Հո՛ն կ'սպրի Բարչրագոյն Էսկը,

որուն անունը՝ «Է».

չունի եւ չ'ընդունիր

տառապանք...,
տուայրանք...:

Ան, Բացարձակը,

«Է»-ն,

համակ երանութիւն է,

համակ քերկրութիւն է,

համակ անմահութիւն է:

Եւ աստուածային այս երեք վիճակներուն մէջ՝

Մա՛յրս, գեղեցիկ Մայրս,

մշտահոնն՝

կ'երգէ՛ գորովն Աստուծոյ.

ցնծահոնն՝

կը հնչեցնէ՛ փառքն «Է»-յին.

սիրահոնն՝

կը քնարէ՛ գովքը Յաւերժին:

Մա՛յրս երկնային ներքողը կը հիւսէ մեր տեղը,

որովհետեւ մենք՝ մարդերս չենք համոզուիր,

որ հո՛ն, անդի՛ն, վե՛րը,

աստեանականէն Անդեանականին

երթը շքե՛րթ է,

այս աշխարհէն Հանդերձեալին

անցքը փողա՛նցք է,

Ժամանակէն Անժամանակին

ուղին կենսուղի՛ է,

– անցաւորէն Անանցին մէջ

մուտքը կիրակնամո՛ւտ է:

Ո՛վ Բարեկամ,

երէկ, հաստարացածը, այսօր ա՛լ գիտէ իմ Մայրս, թէ

հո՛ն ամէն ինչ դրախորային է – անթառամ,

հո՛ն ամէն բան երկնային է – յաւիտեանական:

Հո՛ն կ'արձագանգէ միայն ղօղանջը յաղթանակին:

Հո՛ն կը ժառանգէ միայն դասինեպսակը փառքին:

Արդ, ո՛վ Բարեկամ, իմ Մայրս, յաւերժացա՛ծ՝

նորասա՛ց բառեր կը թոթովէ,

նորալո՛ւր իղջեր կը ծորէ,

նորագա՛րկ փրոփեր կը բարսիւէ:

Ո՛վ Բարեկամ,

սրտաբուխ մաղթանքս Քեզի – ինձի,

որ նախ սիրենք – առաքինացնենք կեանքը մարդկային,

որովհետեւ այս է առաջին քայլը դէպի յաղթութիւնը...:

Ապա, ջանա՛նք մեր մարդկային երթը բողբոջել – ծաղկեցնել

շնորհքի ու ճշմարտութեան Բան-Լոյսէն արփիափայլ՝

նման ի՛ն՝ Մօրս՝ Տիրամօ՛րս, յաւիտեա՛ն...:

Հ. ՅՈՎՍԷՓ ՎՐԳ. ԹՈՓԱԼԵԱՆ ԿՄ.

ԽԱՉԵԱԼ ՅԻՍՈՒՄԻ

Գլխուդ վրայ
Փշէ պսակ
Քեզ գամեցին
Խաչափայտին
Յաներու մէջ
Տառապագին
Կը ներէիր
Անգիտակին:

Տիպար խոնարհութեան անսահման սէր
Խաչէն վար առին քեզ արհմըրուայ
Մայրդ քեզ գրկեց որպէս մանուկ դեռ
Բնութիւնն պոռթկաց խաղաշունչ վկայ:

Թաղեցին քեզ
Սովորական
Մահկանացու
Մարդու նման:
Երեք օր ետք
Դու յարեացար:
Չոհուած էիր
Մեզի համար
Լոյսի աշխարհի
Արեւ անմար
Խոստովանինք
Քեզ քաջարար:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
13 Մարտ 07

Ո՛Վ ՌԻԹԱ

Կը հաւատարամ՝ ո՛վ Ռիթա
Անհուն սիրոյ երկնային,
Անկարելի բան չկայ
Սուրբին փարած սուրբ իսաչին:

Երբ րեսնեն շուրջս փխուր,
Արին կը հոսի սրտէս
Ինչպէս կենամ շմամ լուռ,
Կ'ըսեն եղէք լաւարես:

Ո՛վ Ռիթա պաշտպանէ մեզ
Փորձանքներէն այլազան
Մեծ յոյսով կը դիմեն քեզ
Տուր երդիր մը ապաստան:

Երբ զաւակներս ժպտին
Յաղթահարած վիշտ ու ցաւ
Զգանք ցաւը ուրիշին
Երազը դառնայ իրաւ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՍՐԲՈՒՅԻ ՌԻԹԱ

Բարի Ռիթա, գլխուդ պսակ,
Նշան տուիր խոնարհութեան:
Մաքուր էիր դու՝ ջինջ վտակ,
Աւա՛ղ, անտեսեց քեզ փեսան:

Կորսնցուցիր դու ամուսին,
Ապա մեռան երկու զաւակ:
Սրտիդ մէջ վառ սերը Փրկչին
Որոշեցիր շուտ երթալ վանք:

Խաչեցեալէն փուշ սիրակէզ
Նշան դրաւ ճակտիդ անմեղ
Համակերպող ո՛վ Ռիթա հէզ
Քեզ կը սպասէր նոր կեանք շքեղ:

Որպէս պտուղ խոնարհութեան
Չորցած ճիւղէն ծաղկեցաւ վարդ,
Տեսնող քոյրերը զարմացան
Եղած էիր դու վանքին զարդ:

Առողջացաւ ոտքը կաղին,
Դագաղ շինողն էր քեզ համար,
Կարելի էր անկարելին
Շատեր գտան դարման ու ճառ:

Հրաշքներիդ պարբերաբար
Ամենուրեք տարածուեցան
Չանգերն ալ սիրայօժար
Քեզ պատուեցին օրը մահուան:

Մեզ ալ յիշէ, ո՛վ Սրբուհի
Հալածանքի, վշտի պահուն,
Տե՛ս, իմ սիրտը լուռ կը հիւծի,
Հաւատքը մեր պահէ կանգուն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«ՅԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՆ» ԱՐԴԷՆ 120 ՏԱՐԵԿԱՆ

2007-ին Մխիթարեան Միաբանութիւնը նշեց հսկայ. սմ. պատրիարքութեան 120 ամեակը, սրորեւ խորհրդածութիւնը Արհի. Հայր Վարդան Աշգարեանի:

Մխիթարեանները ուզէին անգամ - չէին կարող անտես առնել մամուլը: Անշուշտ, իրենց կոչումը ու դիրքը թոյլ չէին տար քաղաքական օրաթերթեր հրատարակել:

Բայց համոզուած էին ու գիտակից - տպուած գրին ու գրչին աշխարհակալ ոյթին:

Ունէին սեհպական տպարաններ օտար հողին վրայ: Ինչո՞ւ չգործածէին զանոնք հայ ժողովուրդին բարձրացումին եւ լուսաւորութեան:

Ահա այս տպարաններէն լոյս աշխարհ կու գային շարան-շարան մեր նախնիքներու գրութիւնները, հայոց աւանդական պատմութիւնը, պատգամագրութիւնները:

Կը պակսէր անոնց կենսականը սակայն: Ու այն էր - քննարկումը գիտական:

Վիեննայի Մխիթարեան Հայրերը, որ կը գտնուէին գերման իմացական աշխարհին մէջ, կը նմանէին գերման մտածողութեամբ, չէին կրնար անտարբեր մնալ անոնց աշխատանքի ոճին, ու չորդեգրէին անոնց գիտական ուղեգիծը մանաւանդ:

Ու կը զգացուէր այդ օրերուն Հայագիտական Պարբերականի մը պահանջը հրամայական:

Մխիթարեան Հայրերու համար՝ այդ երէկուան պահանջը պիտի դառնար իրականութիւն:

1887:

«Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթին թուականը ծննդեան:

Պարբերականին առաջին քանի մը տարիները պրպտումի, ինքզինքը դառնալու շրջանն էր:

Այսպէս ասած - մանկութեան տարիներ:

Որովհետեւ առաջի շրջանին գրուածները միայն մասնագիտական ուսումնասիրութիւններ չէին, կային նաեւ հոն բարոյագիտական, գեղարուեստական գրութիւններ:

Կարճ տեւեց, բարեբախտաբար, մանկութիւնը ուսումնաթերթին: Ան

շուտով գտաւ իր լիութեան տարիքը - գուտ հայագիտական:

Երեւոյ գրիչները հսկաներ էին - Այտընեան, Յովնանեան, Գալէմքեարեան, Մէնէվիչեան, Տաշեան:

Գիտական լոյսին տակ այլեւս կ'ուսումնասիրուէին մեր լեզուն, աշխարհագրութիւնը, պատմութիւնը, մատենագրութիւնը:

«Հանդէս Ամսօրեայ»ն այնուհետեւ սեփականութիւնը կը դառնար միայն բանասէրներու, պատմագէտներու, գրագէտ մասնագէտներու:

Հին անուններու կողքին կ'աւելնային անուններ նորերուն: Մէկը աւելի հմուտ միւսէն: Մատիկեան, Ակինեան, Կոզեան, Ոսկեան, Ինգլիզեան, Տէր Պօղոսեան եւ շարանը այլ Մխիթարեաններու:

«Հանդէս Ամսօրեայ»ն Մխիթարեաններու մենատիրական դաշտը չէր միայն: Այլ կար հոն հայ գիտնականներու հոյլ մը բազմապիսի մասնագիտութեամբ: Սարուխան, Խալաթեանց, Ադոնց, Կիւլչսէրեան, Աճառեան:

Ինչպէս եւ միջազգային համբաւի տիրացոյ օտարաշուրթ հայագէտներ: Մառ, Կարրիէր, Հիւբշման, Մէյթ, Մարկուարտ, Ստրէիքովսքի, Պտուրեան:

«Հանդէս Ամսօրեայ»ի հարիւր տարուան խուզարկումներու, պեղումներու, քննարկումներու ծիրը անհուն է:

Նախ - կ'ընդգրկէ հայ բնաշխարհը իր պատմական սահմաններուն մէջ:

Ապա - հայ ժողովուրդը Հայաստանի եւ ի սփիւռոս աշխարհի:

Ու այս երկու նուիրականութիւնները՝ բնաշխարհ եւ ժողովուրդ, իրենց մէջ ինչ հոգեկան եւ մտաւոր արժէքներ կը բովանդակեն, իրեն համար սրբազան նիւթեր են:

Քննարկած է հայ դասական լեզուն իր ոսկեդարեան շրջանով, ռամկօրէն հայերը, արդի աշխարհաբարը, գաւառաբարբառները:

Պեղած է մեր ազգին պատմութիւնը իր նախապատմական շրջաններով, հայ եկեղեցին իր ծագումով, իր հաւատալիքներով, իր կանոնագրութիւններով, իր երեւելի հայրապետներով, իր վերիվայրումներով վերջապէս:

Մանրակրկիտ ուսումնասիրուած է մեր մատենագրութիւնը իր ինքնագիր թէ թարգմանական երկերով, մեր մանրանկարչութիւնը, առակաները, բժշկական գործերը, միջնադարեան տաղասացները:

Վկայ «Ազգային մատենադարան»ի աւելի քան երկու հարիւր եւ երեսուն հատորները, ուր մէկտեղուած կը գտնէք «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ երեւոյց հարիւր տարիներու բազմապիսի եւ բազմաբեղուն հունձքը:

Յէտտէր՝ այդ օտարազգի գիտնականը իրաւացիօրէն հաստատեր էր, - Եւրոպական հայագիտութիւնը եւ հայ մտքի եւրոպականացումը 200 տարի յապաղած պիտի ըլլար առանց Մխիթարեաններուն:

Ուրեմն, պատիւ եւ յարգանք «Հանդէս Ամսօրեայ»ի՝ այդ հայագիտութեան ալեւոր ՆԱՀԱՊԵՏԻՆ....:

ՎԱՐԳԱՆ ԶՕՐԵՆՅ

ԳԱԻԱԶԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ԴԱԻԹԵԱՆԻՆ

Հովանաւորութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին եւ Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ համայն գործօն միութիւններուն հրաւէրով, Կիրակի՝ 28 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 10:00ին, Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հայր Սարգիս վրդ. Դաւիթեանին ժողովրդապետական պաշտօնի փոխանցման եւ վարդապետական դաւազանի տուչութեան արարողութիւնը:

Ս. Պատարագին ընթացքին Հայր Սարգիս վրդ. Դաւիթեանին պաշտօնապէս ժողովրդապետական պաշտօնի փոխանցումէն եւ վարդապետական դաւազանի տուչութենէն ետք իր պատգամը փոխանցեց Ամենապատիւ Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը, որ նախ եւ առաջ նշեց, թէ Ս. Փրկիչ ժողովրդապետութիւնը Լիբանանի պատրիարքական թեմին ամէնէն բազմանդամ ժողովրդապետութիւնն է:



Հոգեւոր Տէրը նաեւ յայտնեց, որ Հայր Դաւիթեանին վարդապետական գաւազանի տուչութիւնը պարզ զարդարանքի մը փոխանցումը չէ, այլ նշեալ գաւազանը ենթակային կու տայ Աստուծոյ վարդարպետութիւնը քարոզելու իշխանութիւնը՝ բացայայտելու համար աւետարանական ճշմարտութիւնները:

Հոգեւոր Տէրը նաեւ կոչ ուղղեց ներկաներուն հեռու մնալու սխալ վարդապետութիւններէն եւ հետեւելու եկեղեցւոյ ժողովրդապետներուն եւ քահանաներու պատգամներուն:

Ապա խօսք առաւ Հայր Սարգիս վրդ. Դաւիթեան, որ ըսաւ, թէ պարգեւները եւ պաշօնները թէեւ տարբեր են, սակայն հոգին նոյնն է եւ փոփոխութեան չ'ենթարկուիր:

Հայր Դաւիթեան հոգեւոր առաքելութեան գծով փոխանցեց հետեւեալ հիմնական երեք թելադրութիւնները՝ Աստուծոյ սէրը տարածել, ծառայութեան մէջ անշահախնդիր մօտեցում ունենալ եւ խոհեմութեամբ ու իմաստութեամբ մարտահրաւէրները դիմակալել:

Ս. Պատարագէն եւ վարդապետական գաւազանի տուչութենէ ետք ժողովրդապետական սրահին մէջ տեղի ունեցաւ շնորհաւորական ընդունելութիւն:

ԳԱՅԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ԱՐՅԻ. ԷՄՄԱՆՈՒԷԼ ԱՐՔՊ. ՏԱՊՊԱՂԵԱՆԻ

Պաղտատ, Իրաք

Կիրակի 3 Փետրուար 2008-ին, Պաղտատի Հայ Կաթողիկէ Տիրամօր Նարեկի Աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ Արհի. Էմմանուէլ Արքայ. Տապաղեանի գահակալութեան արարողութիւնը:



Սուրբ Պատարագին ներկայ կը գտնուէին պատուոյ հիւրեր Իրաքի Առաքելական նուիրակը՝ Արհի. Ֆրանչեսքօ Շիւլլիքաթ եւ իր օգնականը, Գերերջանիկ Գաղտեացի Պատրիարք Կարգինալը՝ Էմմանուէլ Տէլլին, Լատին Համայնքի եպիսկոպոսը՝ Գերպօ. Ժան Սուլէյման, Գաղտեացի Պատրիարքին երկու օգնական եպիսկոպոսները՝ Շլեման Ուարտանի ու Ժաք Իսահակը, Առաջնորդ Իրաքի Առաքելական Հայոց՝ Գերաշնորհ Աւագ Արք. Ասատուրեան:

Աւետարանը երգելէն ետք, Արհի. Պօղոս Արք. Գոլուսան հրաւիրեց Առաքելական նուիրակը կարգալու Սրբազան Քահանայա-

պետին Շնորհաւորական նամակը, խնդրելով ժողովուրդէն յոտնկայս ունկնդրելու զայն: Ապա ինք կարդաց անոր թարգմանութիւնը արաբերէն լեզուով: Գերպօժ. Գուսան շնորհակալութիւն յայտնելէ ետք Սրբազան Պապի ներկայացուցիչին, խօսք ուղղեց վսեմաշուք Կարդինալին, Եպիսկոպոսներուն, քահանաներուն եւ միւս համայնքապետերուն ըսելով. «Մինչ կը յանձնեմ ջանք սիրոյ, հաւատքի եւ ծառայութեան Արհի. Էմմանուէլ Տապապաղեանին, թոյլ տուէք որ յանձնեմ ձեզի, խորհին շնորհակալութիւնս ինձի հանդէպ ցոյց տուած ձեր ազնիւ վերաբերմունքին եւ եղբայրական աջակցութեան 18 տարիներու ընթացքին, որ անցուցի ձեր մէջ ծառայելով այս թեմին. տարակոյս չունիմ որ Արհի. Էմմանուէլ Տապապաղեանն ալ պիտի վայելէ ձեր մօտ նոյն ազնիւ աջակցութիւնը եւ վերաբերմունքը»: Ապա վերջին խօսքը ուղղելով ժողովուրդին ըսաւ. «Սիրելի գաւակներ, Տերը կամեցաւ որ ես ձեզի ծառայեմ այդ երկար տարիները... հոս կ'ուզեմ կրկնել Տիրոջ խօսքը և երբ կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի՝ ըսէ՛ք, Ապիկար ծառաներ եմք, ինչ որ պարտական է ինք ընել՝ ըրինք և ես ուրեմն, կը մաղթեմ որ Տապապաղեան Գերապայծառը լրացնէ պակասը, եւ շնորհակալութիւնը»:

Ապա Գերպօժ. Գուսան կարդաց Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Հոգեւոր Տիրոջ կոնդակը Քահակալութեան, թէ՛ հայերէն եւ թէ՛ արաբերէն լեզուներով:

Տապապաղեան Արքեպիսկոպոս ուղղեց իր խօսքը ներկաներուն, յայտնելով իր երախտագիտութիւնը Աստուծոյ, Հոգեւոր Տիրոջ, Սրբազան Քահանայապետին, ներկայ Հայրապետներուն, եւ ի մասնաւորի Գերպօժ. Պօղոս Արքայ. Գուսանին, դրուատելով անոր 18 տարուայ աշխատանքը որ կատարած էր մեծ նուիրումով, անշահախնդիր եւ հոգեւոր կեանքի հարազատ ապրումներով, որոնց պտուղներէն մէկն է այս հոյակապ եկեղեցին, որ յաւէտ պիտի մնայ իբր վկայ իր գործունէութեան:

Շարունակեց ըսելով. «Սրտիս մէջ կսկիծ մը կը զգամ Գերպօժ. Անտոն Թ. Մ. Վ. Ադամեանի բացակայութեան, որովհետեւ անո՛ր ալ կ'ուզէի յայտնել անձամբ իմ երախտագիտութիւնս իր կատարած գործունէութեան երկար տարիներուն ընթացքին, որ հոս ապրեցաւ, եւ մասնաւոր այս վերջին պատերազմի տարիներուն ուր ոչինչ ինայեց ամոգելու ցաւերը իր համայնքի գաւակներուն, ջամբելով առատօրէն օգնութիւն եւ միախառնութիւն այդ տաժանելի ու զարհուրելի պահերուն, որոնցմէ ինքն ալ գերծ չմնաց»:

Ան փակեց իր խօսքը ըսելով. «Հիմա հոս եմ, շնորհակալութիւն Աստուծոյ: Իսկ շրջանի Խաղաղութեան համար, ես շատ լաւատես եմ, որովհետեւ Յիսուս իշխանն է խաղաղութեան եւ զայն մեզ պիտի տայ ուշ կամ կանուխ: Քրիստոնէութիւնը յուսահատիլ չի գիտեր, ան կ'ապրի հաւատքով, յոյսով եւ սիրով: Ուստի, ով որ մինչեւ վերջ համբերէ, ան պիտի փրկուի»:

Ս. Պատարագէն ետք, հրաւիրեալները այս ուրախ առթիւ ճաշի մասնակցեցան Եկեղեցւոյ ընդարձակ հիւրասրահին մէջ:

Արհ. Արքպ. Էմմանուէլ տապալաղեան, ծնած է 24 Դեկտեմբեր 1933ին, քահանայ ձեռնադրուած է 25 Դեկտեմբեր 1967ին եւ Եպիսկոպոս ձեռնադրուած է 4 Օգոստոս 2007ին, Զմմառ:

«Աւետիք»-ի խմբագրակազմը լաւագոյն մաղթանքները կը ներկայացնէ Արհի. Էմմանուէլ Արք. Տապալաղեանին եւ անոր թեմին բոլոր հաւատացեալներուն:

ՔԱՐԻԹԱՍ ԼԻԲԱՆԱՆԻ 2006-2007 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հիմնուած՝ Կաթողիկէ Պատրիարքներու եւ Եպիսկոպոսաց Խորհուրդին կողմէ 1976ին, Քարիթասի հիմնական նպատակն էր բարելաւել լիբանանացի քաղաքացիին՝ կեանքի պայմանները, ընկերային ու մարդկային մակարդակներուն վրայ:

Շնորհիւ իր հսկայ գործունէութեան, ան նկատուած է Լիբանանի կառավարութեան կարեւոր մէկ գործօններէն մին, ընկերային մարզին մէջ: Քարիթաս մարդասիրական կազմակերպութիւն մըն է, որ կը կազմակերպէ յաճախ ընկերային ու բարեսիրական զանազան ձեռնարկներ, օժանդակելու եւ բարելաւելու մարդկային յառաջընթացը:



Վերջին երկամեային, Քարիթաս

բաւական ծանրաբերուեցաւ Լիբանանի տազնապալի իրավիճակին պատճառաւ (2006ի Յուլիսեան պատերազմ եւ անոր հետեւանքները, Նահր-Պարէտի պատերազմ 2007ին): 2006ի Յուլիսեան պատերազմին, Քարիթաս կատարեց զանազան նախաձեռնութիւններ (SOA 15/06, SOA 18/06) անմիջական օգնութիւններ ապահովելու համար պատերազմէն տեղահանուած ու վնասուած հատուածներուն: Այս աշխատանքներուն մաս կազմած են քոյր միութիւնները ինչպէս՝ Միջազգային Քարիթասը, Secours Catholique եւ CRS, որոնք միասին օժանդակութիւն շնորհած են վնասուած շրջաններուն վերաշինութեան համար ու այլ կենսական պէտքեր ապահովելու համար: 2007ին նաեւ, Քարիթաս մեծ աշխատանք տարած է Նահր-Պարէտի պատերազմի ընթացքին, օժանդակելով մանաւանդ տեղահանուած պա-

դեստինցի ընտանիքները, եւ ապահովելով անոնց սննդարար ու բժշկական բոլոր պէտքերը, շնորհիւ գործակից կազմակերպութիւններուն:

Միւս կողմէն, Քարիթաս ձեռնարկած է կատարել նոր ծրագիրներ, ամբարպնդելու նպատակով իր ներկայ աշխատելաձեւը: Ան կը ձգտի այս ուղղութեամբ իրագործել համայնքային արդիւնաբեր ծրագիրներ, զարգացնելու աւելի կեանքի պայմանները Լիբանանեան տարբեր շրջաններուն մէջ, մանաւանդ գիւղատարածքներուն մէջ:

Մարդասիրական աշխատանքներու ծիրին մէջ, Քարիթաս աւելի ընդլայնեցուցած է իր գործադաշտը դիմելով նոր կերպերու եւ հիմնելով արհեստից վարժարան մը, հոն պատրաստելու համար թերաճ երիտասարդները: Այս բոլորին կողքին ան կ'ընդունի իր բարեսիրական կեդրոններէն ներս՝ կարօտեալ ու աղքատ անտէրները (բարեկամութեան ճաշ շնորհելով անոնց «Repas de l'Amitié»), անկայուն ընտանիքներու լքուած գաւակները, օգնելով անոնց շարունակել իրենց ուսումը (գիշերային դասընթացքներ կազմակերպելով, ինչպէս՝ Նապաայի ու Պուրճ Համմուտի կեդրոններէն ներս):

Բժշկական գետնի վրայ, Քարիթաս կ'ապահովէ անմիջական բժշկական օգնութիւններ, եւ կը դիմէ քարոզարշաւներու առողջապահական նկատողութիւններ կատարելով, բարելաւելու համար ընկերամարդկային զարգացումը հեռակայ գիւղերուն ու շրջաններուն մէջ:

Նոր տարեշրջանին, ան իրագործած է 3 սեմինարներ (Յունուար - Փետրուար 2007ին) համախմբելով հոն Քարիթաս Լիբանանի մասնաճիւղի ներկայ ու նախկին անդամները, գեկուցելու համար կազմակերպութեան ընդհանուր գործունէութեան մասին: Այցելութիւններ կատարած է ընկերա-բժշկական ու մարդասիրական մասնագիտացած տարբեր կեդրոններ (չարժողական բուժարաններուն) աւելի լաւ ծանօթանալու համար կացութեան: Եւ մօտէն հետեւած է մարդկային զարգացման ծրագիրներուն, որոնք կ'օժանդակեն գիւղատնտեսութիւնը եւ կ'ապահովեն անտեսուած շրջաններուն այլ պէտքերը:

Հակառակ բոլոր դժուարութիւններուն, Քարիթաս կը կատարելագործէ աշխոյժ կերպով ընկերային մարզերուն մէջ, փորձելով իրագործել իր հիմնական նպատակները, առողջ մարդակերտման գործընթացքին մէջ, ծառայելով հանրութեան եւ քարոզելով քրիստոնէական արժէքներ:

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏ ՀԱՅՐ ՅՈՎԱՀՆՆԵՍ-ՎԱՐՈՒԺԱՆ Ծ. Վ. ԹԱՇՃԵԱՆԻ

Դալկացած տերեւ մըն ալ ինկաւ...:

Օղակ մըն ալ պակսեցաւ այն շղթայէն, որ կը կոչուի «Քահանայից Դաս»:

Չմեռնամուտի մըրիկն ու սառնամանիքը չէր, որ հեզ տերեւը իր մայր ճիւղէն պոկեց, այլ՝ ժամանակի քամին զինք սարսեց. եւ հակառակ ապրելու տենդէն, ապարդիւն եղաւ ամէն ճիւղ, բժշկական արդիական դարմանումներ անգործ՝ փրկելու կեանքը Վախճանեալին:

Չորեքշաբթի, 14 Մայիս 2008ի վաղ առաւօտուն՝ սրտի երակներու անօթային խցումի հետեւանքով, դադրեցաւ բաբախելէ սիրտը Հ. Յովհաննէս-Վարուժան Ծ. Վ. Թաշճեանին եւ աչքերը փակելով այս աշխարհէն, հոգին աւանդեց առ Աստուած, անմեղ հայեացքը սեւեռելով անհունին, ինկան միանալու իր մեծ ընտանիքին՝ Թեմիս լուսահոգի եղբայրներուն պանդէոնին ջերմ գիրկը, անոնց հետ խաղաղութեան եւ անմահութեան բնակիչ դառնալու:

Չորեքշաբթի առաւօտ, լուսահոգի Գերյարգելիին մարմինը հիւանդանոցէն փոխադրուեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցի եւ քահանայական շուրջառով զգեստաւորելէ ետք գետեղուեցաւ դազաղին մէջ, առիթն ընծայելով հաւատացեալ ժողովուրդին, յարգանքի իր վերջին տուրքը մատուցանելու եւ աղօթելու իր վախճանեալ Հովիւին հոգիին փրկութեան: Երկու օրեր շարունակ մատուցուեցան պատարագներ անոր հոգիին խաղաղութեան:

Ուրբաթ, 16 Մայիս 2008, առաւօտեան ժամը 10:00ին, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ տան կարգը վախճանեալ Գերյարգելիին, նախագահութեամբ՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ, Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի, մասնակցութեամբ Թեմիս բոլոր վարդապետներուն: Տան Կարգի աւարտին Լուսահոգի Գերյարգելիին դազաղը ուսամբարձ եւ չքեղ թափօրով շրջագայեցաւ եկեղեցւոյ շուրջ գտնուող փողոցներէն: Թափօրին կը մասնակցէր եկեղեցւոյ բոլոր յանձնախումբերը, Զուարթնոց վարժարանի աշակերտները, Անարատ Յղութեան Հայ Գոյրերը եւ հոգեւորական դասը: Իսկ դազաղին ետեւէն՝ Վախճանեալին հարազատները եւ հոծ

բազմութիւն մը հաւատացեալ ժողովուրդէն: Թափօրը կ'առաջնորդէր եկեղեցւոյ շէփորախումբը, մերթ ընդ մերթ նուագելով յուզիչ մեղեդիներ:

Վերադարձին՝ վարդապետները «Աշխարհ Ամենայն»ի շարականի երգեցողութեամբ մոռտք գործեցին եկեղեցի եւ սկսաւ Եկեղեցւոյ Կարգը: Արարողութեան ներկայ էին, Հալէպի բոլոր համայնքապետերը, Ճէզիրէի Թեմէն Հ. Անդրանիկ Մ. Վ. Այվազեան եւ Հ. Նարեկ Նամոոյեան, Զմամու Միաբանութեան կողմէ Հ. Պերճ Վ. Սեպէ, տեսուչ Հալէպի փոքր ընծայարանի, քոյր համանքներու վարդապետներ, քահանաներ, կրօնաւորներ, կրօնաւորուհիներ, մայրապետներ եւ միութենական ներկայացուցիչներ:

Եկեղեցւոյ կարգը կատարեց Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան: Շարականներու կատարումէն, սաղմոսներու, մարգարէական եւ Աւետարանի ընթերցումներէն ետք, Արհի. Գերապայծառ Տէրը իր դամբանականին մէջ ըսաւ. «Սրտի խոր կսկիծով ողբացինք մեծ կորուստը մեր առաքինի եւ վաստակաւոր հովիւին, օփտեալ եւ բարեհամբաւ առաքեալին՝ Գերյ. Յովհաննէս-Վարուժան Մ. Վ. Թաշճեանին: Կորուստը այնքան մեծ է, որքան մեծ էր հոգեւոյս Վարդապետին իր բարեպաշտութեամբ, եկեղեցասիրութեամբ, հայազխտութեամբ եւ հայրենասիրութեամբ:

Ափսոս, այժմ լուծ է... մահը վերջ դրաւ իր երկրաւոր կեանքին: Մեկնեցաւ իր սիրած ու քարոզած Քրիստոսի մօտ՝ արդար վարձքը ընդունելու, յազեցնելու հոգին Աստուծոյ երանաւէտ տեսութեամբ»: Ապա կարգաց Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ եւ այլ հոգեւորականներու ցաւակցական նամակները, փակեց իր խօսքը ցաւակցութիւն յայտնելով Վախճանեալ սգակիր քոյրերուն, ազգականներուն, քահանայ եղբայրակիցներուն եւ եկեղեցւոյ բոլոր յանձնախումբերուն:

Արարողութենէն ետք, Հոգեւոյս Գերյարգելիին մարմինը փոխադրուեցաւ Թիլէլի Հայ Կաթողիկէ «Մայր Գթութեանց» Աթոռանիստ եկեղեցին, ուր կատարուեցաւ Գերեզմանի Կարգը Վախճանեալին եւ մարմինը ամփոփուեցաւ յատուկ դամբանի մը մէջ:

Ապա ներկաները ուղղուեցան Առաջնորդարանիս դահլիճը իրենց ցաւակցութիւնները յայտնելու Գերապայծառ Տիրոջ, վարդապետներուն եւ սգակիր քոյրերուն:

Ցաւակցութիւնները շարունակուեցան մինչեւ ուշ երեկոյ:

Շաբաթ, 17 Մայիս 2008, առաւօտեան ժամը 10:00ին, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ Խունկի Պատարագ մատուցուեցաւ Վախճանեալ Գերյարգելիին հոգիին:

Ս. Պատարագի աւարտին, ներկաները ուղղուեցան եկեղեցւոյ դահլիճը, իրենց ցաւակցութիւնները յայտնելու գերապայծառ Տիրոջ, վարդապետներուն եւ սգակիր քոյրերուն:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Հ. Յովհաննէս-Վարուժան Ծ. Վ. Թաշճեան, ծնած է Հալէպ, 17 Նոյեմբեր 1943-ին, Մարաշածին ծնողներէ: Մկրտութեան անունն էր Վարուժան, ընտանիքին միակ մանչ գաւակը: Նախնական ուսումը կը ստանայ Նոր-Գիւղի «Վարդանանց» Յիսուսեան Հայրերու վարժարանէն:

1959-ին, կը մտնէ Զմմառու Կաթողիկոսական Միաբանութեան նորընծայրանը՝ ձիւնի: Երկրորդական դասական ուսումը աւարտելէ ետք, 1965ին նորընծայ ընկերներով կը մեկնի Հռոմ, որպէս ժառանգաւոր Քահանայապետական Լեւոնեան Վարժարանը:

1966ին, բանաւոր պատճառներով կը վերադառնայ իր ծննդավայրը Հալէպ եւ կ'օգնէ տեղւոյն ժողովրդապետութիւններուն:

1972ին, կրկին կը վերադառնայ Հռոմ շարունակելու իր իմաստասիրական եւ աստուածաբանական ուսումները: Ուսման հետ միաժամանակ, իբրեւ խօսնակ 8 տարիներ աշխատակցած է Վատիկանեան ձայնասփիւռի հայկական բաժինին մէջ: Գրած եւ թարգմանած է յօդուածներ: Գրաբարէն աշխարհաբարի վերածած է «Վարք Սրբոց» 1990ի վեներիկի տպագրութիւնը: Օժանդակած է Սեթեան Գերապոյժառի «Հայկական Հայրաբանութեան» հատորին հրատարակութեան, ինչպէս նաեւ Գաֆթանճեան Գերյարգելիին հետ՝ ծիսական տարուան շարականներուն նօթագրութեան համար: Լոյս ընծայած է «Վասն Կրօնի եւ Հայրենեաց» խորագիրով 200է աւելի քերթուածներ, կրօնական եւ ազգային գանազան հանդիսութիւններու առիթով օգտագործելու համար:

1980-ին, Հռոմէն վերադարձած է Հալէպ, պատրաստուելու քահանայական ձեռնադրութեան: 16 Օգոստոս 1981-ին թեմական կուսակրօն ձեռնադրուած է Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, ձեռամբ՝ Երջանկայիշատակ Տ. Գէորգ Արք. Լայէլքեանի եւ առած Յովհաննէս անունը: Իբրեւ գրչանուն կը ստորագրէ Վարուժանակ Քարենց:

Առաջնորդարանէն ներս մատնատպած է Մարաշի Ս. Փրկիչ եկեղեցւոյ տոմարները: 20 տարիներ շարունակ աշխատակցած է «Աւետիք» Հայ Կաթողիկէ Պատրիարքական պաշտօնաթերթին, Հալէպի լուրերը փոխադրելով: 1986ին հրատարակած է «Ժամագիրք Ս. Շաբաթուայ» եւ գանազան արարողութիւններու աշխարհամբար հատորը: Ինչպէս նաեւ յաջորդաբար, «Քառանորդացի Աղօթագիրք», «Մայիսեան Ծաղիկներ», «Աղօթագիրք Յիսուսի Ս. Սրտին Զերմեւանդութեան» աղօթագիրքերը: Իր վերջին հրատարակութիւնը 2005-ին եղած է «Առականերու Աշխարհէն» գիրքը:

24 Սեպտեմբեր 2006ին, Վախճանեալ Գերյարգելիին իր ձեռնադրութեան 25-ամեայ Արծաթեայ Յիշատակին առիթով, գոհաբանական Ս. Պատարագ Մատուցանեց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, ուր ընթացքին Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան, յատուկ աղօթքէ մը ետք, իրեն շնորհեց Ծայրագոյն Վարդապետի գաւազանը, մատանին, կուրծքին զետեղելով

լանջախաչը, առ ի վկայութիւն Ուխտին հաւատարմութեան եւ անխոնջ ծառայութեան:

1982էն մինչեւ վախճանումը, 27 երկար տարիներ ձեռնհասօրէն ծառայեց ու հովուեց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը: Համբերութեամբ տարած այդ ծանրագոյն բեռը, տագնապեցաւ, հանգիստ չունեցաւ, ձգտեցաւ միշտ լաւին ու կատարեալին, ինչ որ իր ուխտին եւ կոչումին գրաւականն էր:

Սիրելի Վարդապետ, յանձնեցինք քեզ հողին, այո՛, բայց վստահ եմ եւ տարակոյս չունիմ, որ երկնքի խաղաղութեան մէջ բնակող հոգիիդ լոյսը պիտի լուսաւորէ ու ջերմացնէ շիրիմդ. եւ մենք ալ մեր յարատեւ աղօթքներով քեզ առանձին պիտի չթողունք:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:
Հանգիստ քու յոգնաբեկ աճիւններուդ:
Հողը թեթեւ գայ վրադ սիրելի Վարդապետ:
Քեզ միշտ յիշող ու աղօթող լծակիծդ՝

ԿՈՄԻՏԱՍ ՔՀՆՅ. ՏՍՏԱՂԼԵԱՆ
Հալէպ, 18 Մայիս 2008


ԱՍՈՐԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՊՏԵԼ ԱՀԱՏԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ասորի Կաթողիկէ եկեղեցին սօնակատարեց Ս. Էֆրէմի տօնը կիրակի, 19 Փետրուար 2008ին, Ասորիներու Ս. Աւետման եկեղեցւոյ մէջ (Ատլիէ), պետական ու հոգեւոր բարձրաստիճան անձնաւորութիւններու ներկայութեամբ:

Հոն գերաշնորհ Մասրի փոխանցեց Ն. Ս. Բենեդիկտոս ԺԶ. Քահանայապետին ուղղած նամակը պատրիարք Ապտէլ Ահատին: Սրբազան Քահանայապետը նշանակած է 3 եպիսկոպոսներ (Քասսապ, Թուպի եւ Մաթաքա) հոգատարելու պատրիարքութիւնը եւ օգնելու գահընկաց Ապտէլ Ահատ պատրիարքը, մինչեւ նոր պատրիարքի ընտրութիւնը 40 օրուայ ընթացքին:

Իր կարգին, պատրիարք Ապտէլ Ահատ խօսք ուղղեց ներկաներուն, յայտարարելով իր հրաժարականը Ասորի Կաթողիկէ եկեղեցւոյ պատրիարքի տիրոջսէն. անդրադառնալով նաեւ իր ամբողջ եօթը տարիներուն կատարած ջանքերուն եւ հանդիպած դժուարութիւններուն: Շնորհակալութիւն յայտնեց վերջապէս Ն. Ս. Բենեդիկտոս ԺԶ. Քահանայապետին, Կաթողիկէ ու Ուղղափառ պատրիարքներուն, որոնք մեծ հասկացողութեամբ ընդառաջեցին իր խնդրանքին. ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց հոգեւոր թէ պետական իշխանութիւններուն որոնք իր կից մնացին ամբողջ իր նստաշրջանին:

ՀԱՅՐ ԵԱԳՈՒՊ ՔԱՊՊՈՒՇԻ ԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ



Կաթողիկէ Պատրիարքներու եւ Եպիսկոպոսաց խորհուրդը յայտարարեց իր ժողովէն ետք (11 Փետրուար 2008ին), Հ. «Ապունա Եագուպ Քապպուշի»ի երանելի հռչակման հանդիսութիւնը, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ 22 Յունիս 2008ին, Լիբանանի մէջ, առաջին անգամ ըլլալով երանելիին հայրենի հողին վրայ: Խորհուրդը կոչ ուղղեց այս առիթով բոլոր Կաթողիկէ եկեղեցիներուն հոգեւորապէս պատրաստուելու այս հանդիսութեան:

Ապունա Եագուպ Քապպուշի մասին

Ծնած է 1 Փետրուար 1875ին: Յաճախած է Պէյրութի Սաժէս վարժարանը: Շրջան մը Եզիպօրոս մնալէ ետք, վերադարձած է Լիբանան եւ մուտք գործած է Քապպուշիներու Ս. Անյոն Փայրովացիի վանքը (Խաշաօ), ուր միեւնոյն ժամանակ իր աստուածաբանութեան ուսումը շարունակած է:

1901ին, ան վարդապետ շեռնադրուած է:

1905ին, ան նշանակուած է ընդհանուր տնօրէն՝ Քապպուշիներու դպրոցներուն Լիբանանի մէջ, հիմնելով 230 փոքր դպրոցներ: Հիմնած է նաեւ Պէյրութի մէջ երրորդ Ֆրանսիսքան միաբանութիւնը որ յետոյ փարսածուեցաւ բոլոր Լիբանանի փարսածքին:

Համաշխարհային պատերազմի շրջանին, ան սրանչնած է մեծ պատասխանատուութեամբ Ֆրանսիսքան Քապպուշիներու առաքելութիւնը Լիբանանի մէջ:

«Ապունա Եագուպ» հիմնադիրն է Սուրբ Խաչ Ֆրանսիսքան Կրօնաւորութիւններու միաբանութեան (հիպօլիտ իողովԼ) Լիբանանի մէջ, 1930ին: Միաբանութեան հաստատութիւնները (հիւանդանոցներ, որբանոցներ, դպրոցներ, ծերանոցներ...) մեծ ներդրում ունեցած են ընկերային մարզին մէջ:

Հ. Քապպուշին արժանացած է զանազան պետական շքանշաններու եւ եկեղեցական ու աշխարհական պարգեւատրումներու իր բոլոր ծառայած շրջանին: Վախճանեցաւ 26 Յունիս 1954ին: 1992ին, Յովհաննէս Պօղոս Բ. Բահանայապետը զինքը «Աստուծոյ ծառայ» հռչակեց:

2008Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ, ՄԻՏՆԷՅԻ ՄԷՁ, ԱԻՍՏՐԱԼԻԱ

23րդ Երիտասարդական Համաշխարհային օրը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 15-20 Յուլիս 2008ին, Աւստրալիոյ՝ Սիտնէյ քաղաքին մէջ: Սիտնէյ նշանակուած էր հիւրընկալելու այս առիթը 2005ին, Ս. Պապին կողմէ:



Այս տարի, ձեռնարկին հիմնական թեմայ պիտի հանդիսանայ երիտասարդներու վկայութիւնը Ս. Գրքին, նոր աշխոյժ առաքելութիւն վերագտնելու համար ներկայ յառաջդիմած աշխարհին մէջ («Դուք զօրութիւն պիտի առնէք, երբ Հոգին Սուրբ իջնէ ձեր վրայ: Դուք պիտի ըլլաք իմ վկաներս...» Ա.Գ. 1:8):

Կազմակերպուած՝ Կաթողիկէ եկեղեցոյ կողմէն, «Երիտասարդական Համաշխարհային Օրը» կը համախմբէ երիտասարդներ աշխարհի չորս ծագերէն, ստեղծելու համար բարեկամութեան եւ յոյսի կամուրջներ տարբեր ցամաքամասերուն, ժողովուրդներուն ու մշակոյթներուն միջեւ: Ան ծնունդ առած է 1986ին՝ Հռոմի մէջ, Յովհաննէս Պօղոս Բ. Քահանայապետի նախաձեռնութեամբ:

2008Ը, «ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ՄԻՉԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԻ»

ՄԱԿի ընդհանուր խորհուրդը յայտարարեց 2008ը՝ «Լեզուներու միջազգային տարի», «Ունէսքօ-Unesco» կազմակերպութեան հովանաւորութեամբ: Այս վերնագրին տակ, ՄԱԿ կը նկատէ Լեզուն հիմնական մէկ մասնիկը մարդկային համերաշխման գործընթացքին մէջ: Հետեւաբար, Լեզուները մեծ դերակատարութիւն ունին ընկերային մակարդակի վրայ (մանաւանդ աղքատ ու յետամնաց երկիրներուն մէջ), ՄԱԿի հազարամեայ զարգացման ծրագրին համաձայն:

Աշխարհի մէջ կը գտնուին այժմ եօթը հազար լեզուներ ըստ ՄԱԿի աղբիւրներուն, որոնցմէ 50 տոկոսը վտանգուած է բնաջնջումի յաջորդ միջանի սերունդներուն:

ԼՈՒՐՏԻ ԵՐԵՒՈՒՄՆԵՐՈՒՆ 150ԱՄԵԱԿԸ (1858 - 2008)

Ֆրանսայի՝ Լուրտ քաղաքը կը սօնակատարէ այս տարի 150 ամեակը Տիրամօր երեւումներուն Սրբուհի Պեռնատէթի, 1858 թուին: Այս առիթով, 60 հազար ուխտաւորներ ժամանած են Լուրտ, որ կը նկատուի Կաթողիկէ աշխարհի մեծագոյն ուխտավայրերէն մին. այս գիւղաքաղաքը տարեկան կ'ընդունի շուրջ 6 միլիոն հաւատացեալներ եւ հոն կը գտնուի Անարատ Յղութեան տաճարը (կառուցուած՝ 1871ին):

Տիրամայրը երեւցած է Պեռնատէթ Սուպիրուլի 18 անգամ «Մասապիլէ» քարայրին մէջ: Եկեղեցին ճանչցած է այս երեւումները 1862 թուին:

Մինչեւ օրս, միայն 67 հրաշքներ ճանչցուած են Կաթողիկէ եկեղեցւոյ կողմէ:

Այս առիթով, նախատեսուած է որ Ն. Ս. Բենեդիկդոս ԺԶ. Քահանայապետը այցելէ Լուրտ յառաջիկայ Սեպտեմբեր 2008ին:

Սրբուհի Պեռնատէթի մասին

Պեռնատէթ Սուպիրու, ջաղացպանի աղքատ ընտանիքի գաւակ, ծնած է Լուրտ՝ Ֆրանսայի հարաւ-արեւմտեան շրջան (Moulin de Boly), 7 Յունուար 1844ին:

Տիրամայրը կ'երեւի Պեռնատէթ պատանիին «Մասապիլէ» քարայրին մէջ 1858ին, 18 անգամ: 25 Մարտ 1858ին, 16րդ երեսումին ընթացքին, Տիրամայրը կը յայտնէ իրեն «Անարատ Յղութեան» խորհուրդը, որ յետագային Եկեղեցին գայն պիտի որդեգրէ իբր վարդապետական ճշմարտութիւն:

Եկեղեցին կը ճանչնայ այս երեսումները 1862ին, երկար բանավեճերէ ետք:

Պեռնատէթ կը լքէ Լուրտ քաղաքը 1866ին, ու կը մեկնի Նեվլը շրջան, ուր կը սորվի Ֆրանսերէն գրել ու կարդալ, ու կը ստանայ քրիստոնէականի դասեր:

29 Յուլիս 1866ին, ան մաս կը կազմէ Նեվլըի եղբայրասիրութեան քոյրերու միաբանութեան, ու կը կրէ «մայր Պերնարտ» անունը: Կը նուիրուի միաբանութեան տաժանելի կեանքին ամբողջ 13 տարիներ մինչեւ իր մահը:

Ան հոգին կ'աւանդէ առագ չորեքշաբթի օր, 16 Ապրիլ 1879ին:

Պեռնատէթ՝ երանելի կը հռչակուի 14 Յունիս 1925ին:

Եկեղեցին կը վաներացնէ անոր սրբութիւնը՝ 1933ին, Ս. Պիոս Քահանայապետի կողմէ:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ԱՆՈՒԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Տանն Կիլիկիոյ կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքի եւ Սիւնհոգոսական Հայրերուն, Ուրբաթ՝ 22 Փետրուար 2008ին, Հռոմի մէջ, Ս. Պետրոսի տաճարին կից, Վատիկան, տեղի ունեցաւ անուանումի եւ բացումի հանդիսութիւնը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի արձանը շրջապատող հրապարակին:

Հանդիսութեան սկիզբը, Հոգեւոր Տէրը ողջոյնի խօսք ուղղեց ներկաներուն եւ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Քահանայապետին այս նախաձեռնութեան համար:

Օրհնութեան աղօթքը եւ բացումը կատարեց Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը: Ան անդրադարձաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի առաքելութեան մասին, յայտնելով որ այս մեծ Սուրբը՝ Հայերը պաշտօնապէս առաջին քրիստոնեայ ազգը ըրաւ 17 դարեր առաջ: Սրբազան Քահանայապետը մաղթեց որ հայազգի զաւակները միշտ անմար պահեն իրենց մկրտութեան լոյսը:



Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ եւ Սիւնհոգոսական Հայրերուն կողքին՝ հանդիսութեան մասնակցեցան հոգեւորականներ, բարձրաստիճան կրօնաւորներ, կրօնաւորուհիներ, քաղաքական հայ եւ օտար անձնաւորութիւններ, քոյր համայնքներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ սփիւռքահայ գաղութներէն պատուիրակութիւններ եւ ուխտաւորներ:

ՎԱՏԻԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԴԻՆԱԼ ՊԵՐԹՈՆԷԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Վատիկանի պետական քարտուղար՝ կարդինալ Թարչիզիո Պերթոնէ եռօրեայ այցելութիւն մը կատարեց Հայաստան, 4-էն 6 Մարտ 2008:

6 Մարտ 2008-ին, ան հանդիպում ունեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ, ուր միասնաբար աղօթեցին առ Աստուած՝ Հայաստանի մէջ խաղաղութեան, համերաշխութեան եւ կայունութեան շուտափոյթ վերահաստատման համար:

Կարդինալ Պերթոնէ հանդիպում ունեցաւ յաջորդաբար Հայաստանի Նախագահ՝ Ռոպէրթ Քոչարեանին, Վարչապետ՝ Սերժ Սարգսեանին ու Արտաքին գործոց նախարար՝ Վարդան Օսկանեանին հետ, որոնց հետ արծարծած է երկողմանի Հայաստան-Վատիկան յարաբերութիւնները, անդրադառնալով վերջերս Վատիկանի մէջ տեղի ունեցած՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի անունով հրապարակի հանդիսաւոր բացման. հանդիպումներուն ընթացքին քննարկած են՝ Հայութիւնը հետաքրքրող հարցեր եւ վերջին շրջանին Հայաստանի մէջ պատահած իրադարձութիւնները: Վատիկանի պատուիրակը զօրակցութիւն յայտնած է հայ ժողովուրդին, յուսադրելով որ Հայաստան կարող է գրաւել կարեւոր համապատասխան եւ ազդեցիկ մէկ տեղ միջազգային ընտանիքէն ներս:

Իր այցելութեան աւարտին, Վատիկանի պետական քարտուղարը այցելած է Մայր Թերեզայի քոյրերու միաբանութիւնը եւ Ծիծեռնակաբերդ, ի յարգանք՝ Յեղասպանութեան զոհերուն յիշատակին:

ՍԱՆ ԼՈՐԵՆՏՕ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԵԴՐՈՆԻ 25ԱՄԵԱԿ

Կիրակի՝ 9 Մարտ 2008-ին, Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը Ս. Պատարագ մատուցեց աշխարհի չորս ծագերէն եկած՝ շուրջ 200 երիտասարդներու հետ, Սան Լորենտօ միջազգային հիմնակեղրոնի 25 ամեակին առթիւ, Հռոմի մէջ:

Սրբազան Քահանայապետը իր քարոզին մէջ կոչ ուղղած է խորհրդածութիւն կատարել կեանքի ու մահուան իմաստներուն շուրջ, ներշնչուած՝ Ս. Գրիգէն : Ան անդրադարձած է մարդկային գիտակցութեան, սիրոյ եւ յարաբերութեան չափանիշներուն. նշելով թէ գիտութիւնը չի կրնար յագեցնել մարդու յատուկ յաւերժական ձգտումը, որովհետեւ անմահութեան միակ ճշմարիտ ազդանշանն է Ս. հաղորդութիւնը եւ ինք-

նալստահույթիւնը արժանանալու Աստուածային սիրոյ: Ան շնորհակալութիւն յայտնած է երիտասարդական խմբաւորումներուն, որոնք մասնակից եղած են Ս. Պետրոս տաճարի մօտ գտնուող՝ «Սան Լորենծօ» միջազգային հիմնակեղրոնի 25 ամեակի տօնակատարութիւններուն, որոնք վերջ գտան Ծաղկազարդի կիրակին:

Հիմնուած՝ 13 Մարտ 1983-ին Յովհաննէս Պողոս Բ. Պապին օրհնութեամբ, այս հիմնակեղրոնը մեծ դեր ունեցած է երիտասարդական Համաշխարհային Օրերու քարոզչական աշխատանքներու ծիրին մէջ:

«ՖՕՔՈԼԱՐԻ» ԿԱԹՈՂԻԿԷ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԻՄՆԱԳՐՈՒՀԻ՝ ՔԻԱՐԱ ԼՈՒՊԻՔԻ ՄԱՀՐ

Ուրբաթ՝ 14 Մարտ 2008-ին Իտալիոյ մէջ, մահացաւ Քիարա Լուպիք, 88 տարեկանին: Ան հիմնադիրն է «Ֆօքլարի» Հռոմի կաթողիկէ շարժումին որ կը գործէ այժմ՝ 182 երկիրներու մէջ: Սրբազան Քահանայապետը այս առիթով ուղղարկած է ցաւակցագիր մը, ուր կը յիշէ Լուպիքի հաստատ եւ հաւատարիմ կեցուածքը Եկեղեցւոյ հանդէպ, ինչպէս նաեւ անոր դրական դերը միջ-եկեղեցական երկխօսութեան եւ եղբայրսիրութեան քարոզչութեան առաքելութեան մէջ: Վատիկանի պետական քարտուղար՝ Կարդինալ Պերթոնէ, գլխաւորեց Լուպիքի թաղման արարողութիւնը:

Յիշենք որ Քիարա Լուպիք, հիմնած է «Ֆօքլարի» շարժումը, համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին: «Ֆօքլարի» խմբաւորումը իր առաջին շրջանին կը հաւաքէ կամաւոր կիներ օգնելու կարիքաւորները: ապա ան կը զարգանայ ու անոր կը միանան տղամարդիկ, որոնց նպատակը կ'ըլլայ գործակցիլ այլ կրօնական խմբաւորումներուն հետ: Ներկայիս, «Ֆօքլարի»-ին մաս կը կազմեն 140 հազար անդամներ եւ երկու միլիոն համակիրներ:

ՍՐԲԱՉԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ ԿԸ ԳԱՏԱՊԱՐՏԷ ԲԵՀՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՔԻ ՄԷՉ

Կիրակի՝ 16 Մարտ 2008, Ն. Ս. Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը Ս. Ծաղկազարդի քարոզին մէջ յիշեց Մոսուլ քաղաքի Գաղտիացի կաթողիկէ եպիսկոպոս՝ Բենոյի ողբերգական սպանութիւնը: Ան անդրադարձաւ հանգուցեալին յարատեւ հաւատարմութեան Քրիստոսին ու Եկեղեցւոյ հանդէպ, հակառակ դժուար պայմաններուն ու սպառնալիքներուն:

Ան խստօրէն դատապարտեց Իրաքի մէջ հինգ ամեայ շարունակուող


պատերազմը, պահանջելով վերջ դնել տեղի ունեցող ջարդերուն, վայրագութեան եւ ատելութեան:

ՍՈՒՐԲ ԶԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ 49ՐԳ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՔԵՊԷՔ, ԳԱՆԱՏԱ, 15 - 22 ՅՈՒՆԻՍ 2008

Սուրբ Հաղորդութեան 49րդ Համաշխարհային Համագումարը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 15-22 Յունիս 2008ին, Քեպէք քաղաքին մէջ, Գանատա: Համագումարին հիմնական խորագիրն է՝ «Ս. Հաղորդութիւնը, Աստուծոյ պարգեւը աշխարհի կեանքին համար»: Երրորդ հազարամեակին սկիզբը, համաշխարհայնացման մարտահրաւէրին դիմաց, Կաթողիկէ Եկեղեցին կը ձգտի տարածել սիրոյ ու խաղաղութեան մշակոյթը, ներշնչուելով Ս. Հաղորդութենէն:

Այս համագումարին պիտի քննարկուին Ս. Հաղորդութեան Խորհուրդի յատկանշական երեսները (ի մասնաւորի Քրիստոսի Յարութեան խորհրդաւոր յիշատակը), շեշտելով այժմէականացումը ու փոխանցումը Ս. Աւետարանի արժէքներուն եւ Ս. Հաղորդութեան կարեւորութեան մեր ներկայ աշխարհին մէջ:

Գանատայի Քեպէք նահանգը ընտրուած էր հիւրընկալելու այս համագումարը երջանկայիշատակ Յովհաննէս Պօղոս Բ. Քահանայապետին կողմէն: 2008 տարին կը զուգադիպի այս նահանգի հիմնադրութեան 400 ամեակին, որպէս հիւսիսային Ամերիկեան ցամաքամասի առաջին քրիստոնեայ կեդրոնը:



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՍԻՒՆՀՈԳՈՍԻ 12ՐԳ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԳՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍ Բ. ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՁ

12րդ հերթական ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 5-26 Հոկտեմբեր 2008ին: Միւնհոդոսին նիւթը պիտի ըլլայ Աստուծոյ խօս-

քը Եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մէջ, հաստատելով հաւատքի բուն աղբիւրը, ու ներկայացնելով խորին կապը Ս. Հաղորդութեան եւ Աստուծոյ խօսքին միջեւ: Հանդիպումը կը ձգտի հոգեւոր առաջարկներ ներկայացնել քրիստոնեաներուն, ցոյց տալով ճիշդ եւ գործնական ուղիները հետեւելու Աստուծոյ ու անոր հետ երկխօսութեան մէջ մտնելու:

«ԶԱՅՆԱՐԵԱԼ ՇԱՐԱԿՆՈՑ ԸՍՏ ԶՄՄԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ»

Այս յանկուցիչ վերտառութեամբ փառակազմ հաստափոր հատորը դրուած է գրասեղանիս վրայ արդէն քանի ամիսէ ի վեր..., եւ սակայն յոյժ կը ցաւիմ, որ ցայսօր Հիրցայ անդրադառնալ եւ անդրադարձնել անոր նորասաց, փրկարար ու պատուաբեր առկայութեան:

Գեղատիպ 17ամ. x 24ամ. մեծ մատենանր ունի 846 էջեր, որոնց ոսկենման ու նուրբ թուղթը կը փաստէ տպագրութեան, տպագրողին եւ տպագրել տուողին բարձր որակը, ճաշակն ու բժախնդրութիւնը նկատմամբ այս աննախընթաց նախաձեռնութեան Վերափոխեալ Տիրամօր Զմմառականքին պատմութեան մէջ:

Եթէ ոչ լաւագոյնը, բայց ստուգապէս առաջնակարգներէն է հայաշխարհին «նօթագրեալ շարակնց»-ներուն ընտիր հրատարակութեան մէջ...: Թէեւ 14 մանրանկարները (էջ 1, 21, 45, 97, 183, 301, 368, 445, 499, 571, 661, 741, 755, 789) կընային տպուած ըլլալ աւելի իրենց հարազատ գոյներով...:

Արտաքին կամ «նիւթական» բաժանումէն սկսելով՝ իմացնելու եմ, թէ այս ծանր հատորը ունի իր վեց մասերը՝ հայավանքին գունաւոր զինանշանը այս արձանագրութեամբ՝ «ՌԶ1749ԽԹ ԶՄՄԱՌԻԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ INSTITUT DE BZOMMAR» (էջ Ա), երկլեզու անուանաթերթը՝ «L'HYMNAIRE ARMENIEN SELON LA TRADITION DU MONASTERE DE BZOMMAR EN NOTATION OCCIDENTALE, Bzommar - 2007» (էջ Դ), «ԶԱՅՆԱՐԵԱԼ ՇԱՐԱԿՆՈՑ ԸՍՏ ԶՄՄԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ, ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕԹԱՐՈՒԹԵԱՄԲ, Զմմառ - 2007» (էջ Ե), «ԻՐ ՀԱՃՈՒԹԵԱՆ» (էջ Է-Ը), որ կը կրէ Զմմառականքի Գերպծ. Մեծաւորին ստորագրութիւնը՝ «Հ. Գէորգ Թ. Մ. Վ. Եղիայեան, Պատրիարքական Փոխանորդ Զմմառու Միաբանութեան», «Յառաջաբան» (էջ Թ-ՃԶ) ստորագրութեամբ՝ «Եղուարդ Թորիկեան, Երաժշտութեան Դոկտոր»-ին, «Introduction» (էջ ԺԷ-ԻԴ), զոր ստորագրած է «Edouard Toriguian Docteur en Musicologie, Novembre 2006», նօթագրութիւններն (էջ 3-831) ու «Ցանկ բովանդակութեան» (էջ 833-846):

Ներքին բաժանումը կամ հոգեմտաւոր աշխատանքը կ'ընդգրկէ նօթագրութիւնները «Զմմառու բազմադարեան մենաստանի վանականներուն կողմէ սերունդէ սերունդ երգուած խնկաբոյր շարականներուն» (էջ 5):

Իմ հաշուած 475 նօթագրութիւններուն գծեալ անուանապատկերը շատ յստակ ու մանրամասն է:

«Փառք Հօր»-ը («Միջակ» ու «Յորդոր») եւ բոլոր շարականները սկզբնաւորող «Փոխեր»-ը տրուած են իրենց «8 Ձայնով» (էջ 1-20):

«Աւագ Օրհնութիւնք» կը ներկայանան «ԱԶ, ԱԿ, ԲԶ, ԲԿ, Ձ, Կ, ԴԶ, ԴԿ» նօթագրեալ առանձնայատկութիւններով (էջ 21-44):

Կը յաջորդեն «Համբարձիք Յարութեան» ԱԶ-ԴԿ ութ Ձայներուն վեցական շարականները (էջ 45-96):

Մեծ Պահքին քառասնօրեայ շրջանը կամ՝ «Քառասնօրդաց»-ը, իր «Կիւրակէ Բուն Բարեկենդանի»-էն սկսեալ մինչեւ «Զ. Կիւրակէ»-ն, կը ցուցաբերէ վեց շաբաթներուն հնգական շարականները, իսկ ներառեալ «Աւետում»-ը ունի վեց շարականներուն նօթագրութիւնները, անշուշտ, իրենց բառերով (էջ 97-182), ինչպէս ամբողջ հատորին մէջ:

«Աւագ Շաբաթ»-ը, սկսեալ «Ծաղկազարդ»-էն մինչեւ «Աւագ Շաբաթ» օրը, ճոխ է ոչ միայն իր օրերուն շարականներով, այլեւ սաղմոսներու եւ Ս. Շնորհալիին տաղերու նօթերով, մանաւանդ ինչ կը հայի «Ուտնուայ»-ին ու «Խաւարման Գիշեր»-ին (էջ 183-300):

«Յինանց»-ը կը ներկայացնէ «Կիւրակէ Զատիկ Յարութեան - Է. Կիւրակէ Յինանց (Երկրորդ Ծաղկազարդ)» շրջանը մեր Տիրոջ Յարութեան եւ Համբարձման հրաշափառ տօներուն՝ անոնց հնգական կամ չորսական շարականներով (էջ 301-365):

«Պենտեկոստէ» գլխակարգութեան տակ ճիշդ դրուած են Հոգեգալստեան Կիրակի եւ անոր յաջորդող վեց «Կիւրակէ գկնի Պենտեկոստէի» շաբաթները, որոնց մէջ տօնուած հայ սուրբերու եւ յիշատակումներու շարականները կը գտնուին (էջ 368-444):

«Վարդավառ» եւ «գկնի Վարդավառի» Կիրակիները նօթագրեալ են ամբողջութեամբ (էջ 445-498): Անոնց կը յաջորդեն «Վերափոխում» եւ «գկնի Փոխման» չորս Կիրակիները, որոնց կցուած է «Ծնունդ Ս. Կուսին Մարիամու» լման կանոնը (էջ 499-569):

«Խաչ» գլուխը կը պարունակէ «Խաչվերաց» եւ «գկնի Խաչի» տաս շաբաթները, ինչպէս ալ անոնց ընթացքին տօնուած «Ս. Գեորգայ», «Նօթանատուն Երկու Աշակերտաց», «Ս. Խարիթեանց», «Ս. Հրեշտակապետացն» եւ «Աւելորդաց» շարականները (էջ 571- 660):

«Յիսնակաց»-ի ութ Կիրակիներուն միջեւ ներդրուած են «Ս. Գրիգոր Սքանչելագործին», «Ս. Նիկողայոս Զմիւռնացւոյ», «Ս. Յակովբայ Մծբնայ Հայրապետին» եւ «Ծնունդ» տօներուն բոլոր նօթագրութիւնները:

ըը (էջ 661-740):

«Արբոց» գլխակարգութեան տակ կը գտնենք միայն Օրհնութիւնը «Ս. Յովհաննու Կարապետին» եւ Համբարձիները «Ս. Անտոն Անապատականի», «Ս. Թեոդոսի Թագաւորին» (եւ ո՛չ «Թադեոսի», ինչպէս անուշադրօրէն տպուած է «Ցանկ բովանդակութեան» մէջ [էջ 845]), «Ս. Աթանասի եւ Կիւրղի» ու «Ս. Գրիգոր Աստուածաբանին» (էջ 741-753):

«Յայտնութիւն» եւ «գկնի Յայտնութեան» երեք Կիրակիներն ունին չորսական շարականներ, իսկ «Տեառնընդառաջ»-ին դրուած են եօթ նօթագրութիւնները (էջ 755-788):

Վերջին գլուխն է «Առաջաւորի Բարեկենդան», որուն «գկնի Առաջաւորի Բարեկենդան» երեք Կիրակիներուն հետ կու գան նաեւ «Ս. Սարգիս եւ Ս. Մարտիրոս», «Ս. Սահակայ Պարթեւի», «Ս. Ղեւոնդեանց Քահանայից» եւ «Արբոց Վարդանանց» տօներուն լման շարականները (էջ 789-831):

Ներքին բաժանումին մէջ ու հոգեմտաւոր աշխատանքով ընդգրկուած 475 նօթագրութիւններուն գծեալ անուանապատկերը ոչ միայն շատ յստակ ու մանրամասն է, այլեւ լման ու բազմերանգ:

Այս իրողութիւնը կը փաստէ ոչ միայն հրատարակուած աշխատութեան հսկայութիւնը, այլ նաեւ աշխատանքը նախաձեռնողներուն եւ տանողներուն նախանձախնդրութիւնն ու հետեւողականութիւնը նկատմամբ հայադրոշմ տալին, ընդհանրապէս, եւ հայ շարականին, մասնաւորապէս:

Այս տեսութեամբ՝ անվերապահօրէն կը ձայնակցիմ սա մեծարժէք գործը մտայղացող եւ նախաձեռնող Գերպօ. Վանահօր. «Այս գանձարանին հրատարակումը կ' ուզէ արտայայտութիւնն ըլլալ Լեւոնալիբանանի անառիկ բարձունքներուն վրայ ապաստանած Ձմմառու դարաւոր վանքի միաբաններուն նախանձախնդրութեան եւ կառչածութեան հանդէպ հայ Մշակոյթին, հայ Դպրութեան, հայ խնկաբոյր Մեղեդիներուն, որոնք Քրէյմի, Պէյթ Խաչպոյի եւ ապա Ձմմառու երեք հայ կաթողիկէ վանքերուն կամարներուն տակ յաջորդաբար արձագանգելով՝ դէպի երկինք բարձրացան, շողկապելով Ձմմառի վանքը Հայաստանի եւ Կիլիկիոյ բիւրաւոր վանաստաններուն» (էջ 5):

Ձմմառի Միաբանութեան Պատրիարքական Փոխանորդ եւ Վերափոխեալ Տիրամօր Մենաստանին Վանահայր Գերպօ. Գէորգ Թ. Ծ. Վ. Եղիայեանի «իբ հանութեան» օրհնագիրը իրաւացիօրէն կը բուրէ թէ՛ արդար գիտակցութիւնը՝ այս «աննախընթաց աշխատասիրութիւնը» իրագործած ըլլալու, եւ թէ՛ «այս սրբանուէր աշխատասիրութեան» առթած անհուն հրճուանքը:

«Ձմմառու բազմադարեան մեկաստանին վանականներուն կողմէ սերունդէ սերունդ երգուած խնկաբոյր շարականներուն» նօթագրումին «երազը հանդիսացող այս հատոր»-ը «խանդավառութեամբ» ստանձնո-

ղը եւ «անկուռն կամքով» իրագործողն եղաւ Եղուարդ Թորիկեան՝ Զմմառեան նախկին սանը, երաժշտութեան դոկտորը եւ Քասլիքի «Ս. Հոգի» համալսարանին Երաժշտագիտութեան Ամպլիոնին մէջ դասատուն: Երախտագիտօրէն կ'իմանանք, թէ «անոր ... օժանդակեցին Գերյ. Հ. Անդրանիկ Մ. Վ. Կոստեան, իր գնահատելի հսկողութեամբ, եւ խումբ մը սիրասուն ժառանգաւորներ»: - *Կեցցեն բոլորը:*

Դոկտ. Թորիկեան հեղինակն է նաեւ հայերէն ու ֆրանսերէն յառաջաբանին, որուն հոս կ'ուզէի քիչ մը աւելի մանրամասնօրէն անդրադառնալ պատմաբանասիրական տեսանկիւնէն:

Թէ՛ հայերէն եւ թէ՛ ֆրանսերէն յառաջաբանը կը բացայայտէ 5 բաժանումներ. անոնցմէ ոմանք, իրենց կարգին, ունին ենթաբաժանումներ: Ընդհանուր մօտեցումով արժեւորելով՝ ըսելու եմ, թէ անոնք կրնային ըլլալ տակաւին քիչ մը աւելի տեղեկացնող, մանաւանդ ֆրանսերէնին մէջ՝ օտարազգիին դեռ աւելի լայնածիր ծանօթանկար մը վրձինելու համար...:

Առաջին հերթին՝ մեծագոյն գնահատանքս ու սրտաբուռն շնորհաւորանքս անշեղօրէն կ'երթան Դոկտ. Թորիկեանին՝ տարիներով տարած շատ դժուարին աշխատանքին համար՝ ճշգրտօրէն «վերականգնելու եւ յաւերժացնելու Լիբանանի բարձունքներուն վրայ թառած՝ Զմմառու դարաւոր վանքին աւանդական հայ եղանակները»:

Ստուգիւ, այս «Զայնագրեալ Շարակնոց»-ով՝ աստեանական յաւերժացումի ճամբան չեն բռներ լոկ «Եւրոպական օթագրութեամբ կատարուած» եւ Զմմառեան աւանդութեամբ երգուած հայ շարականներ ու մեղեդիներ, այլ նաեւ անոնց մասնագէտ ձայնագրողը...:

Յառաջաբանին «Ա. Բովանդակութիւն»-էն կ'իմանանք, թէ այս հատորէն զանց առնուած են «ամբողջ տարուան պարզ օրերու շարականները, քանի որ Զմմառու մէջ օրական ժամերգութիւնները սովորութիւն չեն դարձած»: - Այդ չերգուած շարականներուն եղանակները կայի՞ն կամ կա՞ն Զմմառեան աւանդութեամբ...:

Շեշտը կը դրուի, թէ «սոյն Շարակնոցի ձայնագրութիւնը Եւրոպական օթագրութեամբ կատարուած» է: Շեշտաւորումն ենթադրել կուտայ, թէ այլ «-ական» նօթագրութիւն մը կայ...: Ուստի, լաւագոյն կ'ըլլար, եթէ հոս կամ առանձին բաժնի մէջ շատ հակիրճ պատմականը տրուէր հայկական խազագրութեան, մանաւանդ որ ցայժմ տպագրեալ հայ կաթողիկէ մեծ ժամակարգութիւնները ներկայ են հայադրոշմ ձայնանիշերուն գրութեամբ:

«Բ. Նախապատրաստութիւն»-ը, իր 3 ենթաբաժնիներով պիտի ուզէի կարդալ դեռ քիչ մը աւելի մանրամասն տեղեկագրութիւններով, որոնք ծանօթ չեն նոյնիսկ դպիրին կամ ամէն շարական երգողի...:

Օրինակի համար՝ իբր մատենագրապատմական ելակէտ՝ կարելի էր համառօտիւ ուրուագծել հայ շարականին, հայ շարակնոցին ու «հայ ծի-

սական երգին քննադատական» *ակնարկը, յատկապէս օտարականին համար...*:

Օրինակի համար՝ պիտի փափաքէի տեսնել որոշ թուականներ ու կենսագրական տարեթիւեր: Նախ՝ անոնք աւելի յստակօրէն հասկնալ պիտի տային Ջմմառեան շարականներուն սկզբնաւորումն ու զարգացումը կամ՝ դիպած մոռացումներն եւ բացթողումները, եւ այլն...: Երկրորդ՝ թէ՛ կարգացողը եւ թէ՛ երգասացն աւելի պիտի հետաքրքրէին ու հմտացնէին՝ անոնց ընթերցողական աշխատանքին ժամանակ եւ երգային արարքին մէջ...:

Դոկտ. Թորիկեան երախտագէտ է: Առաւելութիւն է ա՛յս: Ի՛ր աշխատութեան, ի՛ր գործելաձեւին եւ ի՛ր ակադեմական գոյընթացքին ի նպաստ...: Քանի այս ժամանակներուն մէջ ցանցառաղէպ դարձած է երախտագիտութիւնը, շնորհակալասութիւնը: Յարգանքով կը յիշէ Ղեւոնդ Տէր Մինասեան Յակոբ Ղարիպեան, Անդրանիկ Կոանեան, Մանուէլ Պաթազեան, Գէորգ Խազումեան եւ Յովհաննէս Փարթամեան վարդապետները, որոնք շատ օգտակար եղան անոր աշխատանքին:

Յառաջաբանին «Տեսական հարցեր»-ու «Դարձուկի հարցը», «ԱԿ-ի պարագան», «Ստեղի շարականները», «Ձայնաստիճան», «Ձայնաշարերու ընտրութիւն», «ՓՈՒՍ-ի իմաստները» եւ «Մեկնաբանութեան բառամթերք» եօթ ենթաբաժանումները կու տան սպասուած տեղեկութիւններուն եւ ակնկալուած բացատրութիւններուն համառօտութիւնը, մասնաւոր ինչ որ կը հայի Ջմմառեան շարականային աւանդութեան:

Ստորգ, ուսումնասիրողին նշումները եւ մասնագէտին յստակացումներն են: Օրինակ՝ «մինչ աւանդութեան այլեւայլ կենդրոններ գրեթէ բոլոր Ձայներուն կը վերագրեն յաճախ մէկէ աւելի Դարձուածք-ներ՝ իւրաքանչիւրին յատկացնելով տարբեր Փոխ մը, Ջմմառեանը աղքատ կ'երեւի անոնց դիմաց: Ջմմառու վանքին, յատկապէս Լեւոնեան Վարժարանին մէջ, Դարձուածք-ին փոխարէն կը գործածեն Դարձուկ եզրը»:

Օրինակ՝ «ԱԿ Ձայն-ի պարագային՝ Ջմմառու մէջ բուն Ձայն կը նկատուի, ինչ որ Դարձուածք է համայն հայութեան քով, եւ ընդհակառակն՝ Դարձուկ կը նկատուի, ինչ որ բունն է այլուր»:

Ջմմառեան-Լեւոնեան աւանդութեամբ՝ Ստեղի շարականները միայն մէկ եղանակ ունին, իսկ ուրիշ կենդրոններու մէջ, ինչպէս Վիեննա, «շատ աւելի մեծ նոխութեամբ կը ներկայանան»:

Վիեննականին ծանօթ ըլլալով՝ ուղիղ կը նկատեմ Դոկտ. Թորիկեանի նկատողութիւնը: «Միսական երգեցողութիւնը հարկ է, որ կատարուի առանց նուագակցութեան՝ չխանգարելու համար բնական (անհաւասարաչափ) երաժշտական Ձայնաստիճան-ը»:

«Այս Ծարակնոցիին մէջ Ութ Ձայն-երն ալ նօթագրուած են նոյն Ձայնաշար-ին մէջ», եւ «այս ընտրութիւնը ... կը միտի յարգելու Ութ Ձայն-

երու միջեւ գտնուող փոխ յարաբերութիւնները»:

Շարականային Փոխ-ին երեք իմաստները ճիշդ տրուած են «ըստ հայկական աւանդութեան»: Նոյնը պէտք է հաստատել մեկնաբանութեան բառամթերքին համար, որ կը պարփակէ Ծանր, Զափաւոր ծանր, Յոյժ ծանր, Զափաւոր, Միջակ եւ Յորդոր եղանակային բացատրութիւնները:

«Դ. Գործնական ընթացք»-ին մէջ՝ Դոկտ. Թորիկեան բժախնդրորէն կը ներկայացնէ Զմմառեան Շարակնոցին ձայնագրութեան համար կիրարկած ուղեգիծերը եւ որդեգրած աշխատելակերպը: Կը խօսի նաեւ «Զմմառեան առանձնաշատութիւնները պարագծելու» մասին: Հետաքրքրական է, բայց բոլորովին յստակ չէ այս հաստատումը. «... Մեր կողմէ շարադրուեցան տարւոյն բոլոր շարականները»...:

Հուսկ, շնորհակալութեամբ եւ ուրախութեամբ կ'իմանանք, թէ Դոկտ. Թորիկեան սրբագրած է «Լեւոնեան Շարակնոցի մէջ սպրդած բառի թե եղանակի վրիպակները», ինչպէս ալ վերականգնած է «Զմմառեան եղանակային նախնական առանձնաշատութիւնները» եւ միաժամանակ պահած է «Զմմառեան-Լեւոնեան ընդհանրութիւնը»:

«Ե. Մաղթանք եւ շնորհակալութիւն» վերջին բաժինին բովանդակութիւնը արդէն կը բացայայտուի վերտառութեանէն:

Հմուտ, բժախնդիր եւ պրպտող «Երաժշտագիտութեան Դոկտոր»-ին ջերմ մաղթանք-առաջադրանքն է նախ՝ վերադառնալ եւ վերադարձնել Զմմառեան աւանդութեամբ հայ երգին, աղօթքին ու շարականին, ապա, երկրորդ՝ ապահովել «Զմմառու Արծիւեան Միաբանութեան անդամներուն» վերադարձն «իրենց նախորդներուն», որպէս զի անոնց «ոնով զգան, ապրին ու ներշնչուին անոնց հոգիով»:

Որովհետեւ, ինչպէս ճշդութեամբ եւ փորձառութեամբ կը տրամաբանէ Դոկտ. Թորիկեան, «երգը, մարդկային հասարակութիւն մը նոյն ալիքներու թրթոսացումներուն եմբարկելով, կ'օժանդակէ զանոնք միաւորելու սերտօրէն, սրտով ու մտքով»:

Դոկտ. Թորիկեան «յատուկ շնորհակալութիւն» կը յայտնէ «բոլոր այն անձերուն, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով օժանդակեցին սոյն Շարակնոցին լոյս ընծայումին»: Անոնց առաջնորդն է «Պատրիարքական Փոխանորդ եւ Մեծաւոր Հ. Գեորգ Թ. Մ. Վ. Եղիայեան, որ հաւատաց այս գործին անհրաժեշտութեան»:

Այս պանծացուցիչ հատորին անհրաժեշտութեան եւ օգտակարութեան առաջին հաւատացողն եմ: Իմ մաղթանքս է գիտաշխատողին վերոյիշեալ մաղթանքին անյապաղ իրականացումը...:

Իմ սրտաբուխ մաղթանքիս կը կցեմ երախտագիտութիւնս եւ շնորհաւորութիւնս «Զայնագրեալ Շարակնոց ըստ Զմմառու Վանքին աւանդութեան» հսկայ աշխատութիւնը մտայղացողին եւ իրականացնողին, որոնք

կատարեցին նորասաց, փրկարար ու պատուաբեր գործը:

Նորասացութիւնը կը կայանայ աննախընթացութեան մէջ, որով ձեռք-բերուեցան անհրաժեշտ նախադրեալը հայ շարականներուն թէ՛ քննութեան ու պատմութեան համար, ինչպէս նաեւ ճոխացումը հոգեւոր երգերուն գանձարանին:

Փրկարարութիւնը Չմմառեան եղանակներուն կորուստի եւ անվերադարձութեան վտանգէն ճիշդ ատենին ապահովուած ազատագրումն է:

Պատուաբերութիւնը պսակադրումն է թէ՛ մտայղացողին եւ թէ՛ իրականացնողին, որոնք, սակայն, լոյսընծայեցին այս Շարականոցը, «որպէս զի լաւագոյն ձեռով փառաբանենք Ամենակալն Աստուած, ծառայենք ողջ մարդկութեան, եւ ի մասնաւորի՝ Հայ Ազգին»:

ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ
Այնճար, 13 Դեկտեմբեր 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

✳ **ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.**

Կաթողիկոս Պատրիարք

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

1

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ՃԱՂԿԱԶԱՐԴԻ ԱՌԻԹՈՎ

✳ **ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ..**

Կաթողիկոս Պատրիարք

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ԱԻԵՏԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

✳ **ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.**

Կաթողիկոս Պատրիարք

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

8

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ.

ՍՐԲԱԶԱՆ ԶԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ.

Սրբազան Քահանայապետ

11

ԴՈՒ ԶՈ՞ ԽՆԴՐԵՍ

ԴՈՒՆ Ո՞Վ ԿԸ ՓՆՏՈՒԵՍ

Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

16

«ՃԱՐԱԻ ԵՄ»

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՒՆԵԱՆ

17

ՄԱՐԴԱՅԵԱԼ ԴՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ԽԱՉԵԱԼ ՍԻՐՈՅՆ ԱՂԱՂԱԿԸ...

ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ

19

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ԳՅԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ԹՈՆԻ ԽԱՏՐԱ

24

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻՒ ՎԻՊԷՆ ԱՇԳԱՐԵԱՆ	26
1700ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՁ ՌԱԶՄԻԿ ԳԱՌՈՅԵԱՆ	29
«ՀԱՅՐ, ՔՈՒ ԶԵՌՔԵՐՈՒԴ ՄԷՋ Կ'ԱԻԱՆԴԵՄ ՀՈԳԻՍ» Հ. ԲԱՐՍԵՂ ՎՐԳ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ	30
ԿԱՐՕՏ ՄԻՐՈՅ ԳՈՐՈՎԱՆՔԻ... Հ. ՔԱԶԱՐԵՆՅ	31
ԿԻՐԹ ՈՒ ՀԱՅ... Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ	32
ՃԱՆԱՊԱՐՀ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ Հ. ՍԱՀԱԿ ԵՊՍ. ԿՈԳԵԱՆ	39
ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՄԱՂԷՄ ԿՈՄԻՏԱՍ ՔՀՆՅ. ՏԱՏԱՂԼԵԱՆ	42
ՅԱՐԳԱՆՔ ՎԱՍՏԱԿԱԻՈՐԻՆ ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ	46
ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	47
ԿԱՐՕՏ «ԱԿՕՍ»	49
ՔԵՁԻ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐ	50
ՄԱՅՐՍ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ... Հ. ՅՈՎՍԷՓ ՎՐԳ. ԹՈՓԱԼԵԱՆ ԿՄ.	51
ԽԱՉԵԱԼ ՅԻՍՈՒՄԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ	53
Ո՛Վ ՌԻԹԱ ՅԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ	54
ՍՐՔՈՒՀԻ ՌԻԹԱ ՅԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ	55
«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՆ» ԱՐԴԷՆ 120 ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐԴԱՆ ԶՕՐԵՆՅ	56

ԳԱԻԱԶԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ԴԱԻԹԵԱՆԻՆ	59
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ԱՐՀԻ. ԷՄՄԱՆՈՒԷԼ ԱՐՔՊ. ՏԱՊՊԱՂԵԱՆԻ	60
ՔԱՐԻԹԱՍ ԼԻՔԱՆԱՆԻ 2006-2007 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ	63
ՅԱԻՏՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏ ՀԱՅՐ ՅՈՎԱՀՆՆԷՍ-ՎԱՐՈՒԺԱՆ Ծ. Վ. ԹԱՇՃԵԱՆԻ ԿՈՍԻՏԱՍ ՔՀՆՅ. ՏԱՏԱՂԼԵԱՆ	65
3600 ԼՈՒՐԵՐ	69
«ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿՆՈՅ ԸՍՏ ՁՍՍԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ» ՍԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ	78

